

Римани

04CS.83

A digitized by eB.A.S. 27

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- p>1.— Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Քանթարի
- 7.— ԱՐՄԱՆՏ Դու, ով լռութիւն...
- 11.— Ս. ՍԱՆԻՆԵԱՆ Մեր վարժապետը
- 22.— Մ. ԵՈՒՐՍԸՆԱՐ Ծիծեռնակներու Սուրբ Աստուածածնայ
Վատուռը
Հայացուց՝ Շ. Տասնապետեան
- 28.— Պ. ՀԵՐԵԱՆ Իմ խեղճութեան՝ քու վախիդ...
- 29.— Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարգեւեան
- 42.— Փ. ՃԵՐԱՆԵԱՆ Տարակոյս
- 42.— » » Օրերէն ետք...
- 43.— Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ—ՏԱՏՈՅԵԱՆ Յախոնեակամութեան կշռութաւորումը
կամ Մօրից Գ. Էշերի կախարդանքը
- 52.— Լ. ՄԿՐՏՁԵԱՆ Զինաստանի գրական մթնոլորտը
մեր օրերին
- 55.— Դ. Վ. ՖՈԿԿԵՄԱՆ Զինաստանի գրականութիւնը
Մառյից յետոյ
- 69.— ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ Նամակներ
- 78.— * * * Վազգէն Շուշանեան
- 81.— * * * Շուշանեանի գործերուն ցուցակը

Բազմ

ԱՅՍԵԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՐ. ՅԱՐԻ. ԲԻԻ Տ. ԼՐԱՐՑ 1982 ԳԵՐՈՒՐ

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՔԱՆԹԱՐԻ

Հին տուններ են եւ Թաղեր՝ ժամանակի հետքերով եւ անցած ժամանակները յուշող, բայց, վստահաբար, հինի կարօտը չէ, որ զիրենք կ'առանձնացնէ կամ ուշադրութեան կը յանձնէ: Ժամանակ, առանձնութիւն եւ միշտ անսահմանելի բան մը կայ այնտեղ:

Մեծածաւալ շքեղ կառոյցներ — պալատի եւ տան միջեւ բան մը — իրենց առանձին խորհուրդով եւ նկարագրով: Տեղ մը Թափած են տանիքներու կաթիլը ծածկերը: Տախտակէ բրդածնէ կմախքը մերկացած է կարծէք: ճիւղ մը քանի մը կղմինտրներ՝ հոն Թառած աղանիներու տպաւորութիւնը կը ձգեն: աղանիներ, որոնք հոն իջած են եւ... արեւին տակ հանդիման, մոռնալով բարձրանալ, թռչիլ:

Տիրութիւնը կու գայ լքումի զգայնութիւնէն: Աստիճաններ՝ ամենահարուստ թաղամասերէն մէկը, բնակավայրը մարդոց, որոնք իրենց սպասեակներու բանակով, անցեալ դարէն եւ զաղութատրական շրջանէն մնացած պերճանքով՝ կը բնակէին այս Թաղամասերուն: Մեծ պատուհաններէն սղոյնակայ փափակներու լոյսը կը յորդէր փողոցներուն, եւ արեւելեան պարտէզներու ծաղիկները իրենց բոյրը կը տարածէին շրջակայքը: Հաւանաբար այդ ընտանիքները այլուր են հիմա կամ ցնդախումբ են անհետացած՝ անկարող յարմարելու ժամանակներուն: Սրբեմն ծերունի մը կ'երեւի պառլամենտին կամ կը բալէ արժանիներուն ներքեւ, իսկ ընդհանրապէս՝ այս բարձր ձեռններով տունները բնակուած են քիւրտ կամ հարաւեան դաղթած ընտանիքներով: Կարծէք տարրեր ձեւի, աւելի խոր արգարութիւն մը գործադրուած է այստեղ եւ քիւրտ կիներ՝ իրենց սպիտակ լաշակներով, հրփներանդ եւ ճրկար հագուածներով հանդարտօրէն կը քայլեն փողոցներուն մէջ:

Կղմինտրէ երգիչին տակ՝ տախտակէ պերաններուն մէջ ճնշուկներ

digitised by A.R.A.R. @

բոյն հաստատած են: Անոնցմէ մէկը կ'անհետանայ ծակի մը մէջ, դուրս կու գայ: Կարծէք չըջանցած է տախտակի ֆիզիքական մակերեսը, կարծրութիւնը...: Կախարդանքի պէս բան մըն է, զոր միայն կեդրոնացած սուր աչքը կրնայ դատորոշել: Թեւաբախումի խաղ՝ խոռոչէն ներս եւ դուրս...

Մեծ ու լայն պատշգամներ՝ կամարածեւ սիւներով, որոնք երկու յարկի վրայ կ'երկարին: Արեւելեան կամ աւելի ճիշդը՝ իսլամական ոճով տախտակէ քիւնի, որոնց մէկ մասը փտած ու ինկած է անորոշ թուականի մը: Երկրորդ յարկի հիւսիսային սենեակներուն երդիքը փլած է ամբողջութեամբ: Հոն՝ այլեւս բնակարանն է անձրեւին, արեւին, հովին: Ժանգոտած նիւթի մը վրայ տախտակէ սրճադոյն փեղկ մը մնացած է միայն, որ կը խաղայ քամիին հետ եւ կը քալածէ... անկումին: Անկարելի է հաւատալ, թէ այս սենեակներուն մէջ մօրդիկ ապրած են, մարմիններ աճած են դանդաղ, քուտած պատերուն, երկաթեայ ճաղերէն դիտած անցքը այն աշխարհին, որ ծաւալած է այդ պատերէն դուրս, իսկ դիշերները, առանձնութեան մէջ լուծուած են. ապա՝ խնճաղներու, կերութեամբերու աղմուկին մէջ, ուր արեւելեան մեղեդին, ուտեւ ու օդին տարածուած են ամէնուր՝ դաւաճած են աւելի միմեկ: Աներդիք այդ սենեակները լեցուած են հիմա անձրեւալուրով, շրուկներով, տերեւներով, արեւով...

Տուներու կողքին՝ պայմանական պարտէզներն են՝ պատնէշներով, արմաւենիներով եւ պայմանական բարձր ծառով մը, հաւանաբար եղեւիններու ընտանիքէն, որ դժուար է որոշել, թէ ե՞րբ ներմուծուած է լիբանանեան բաղքենի աւանդին մէջ: Կոճղէն՝ զուգահեռ, շխտակ, դալար ճիւղեր՝ ձեռքերու պէս բացուած են եւ կը մնան ժամանակի աղգեցութենէն դուրս՝ առանձին: Անոնք, յաճախ ինկած փլատակներու կողքին՝ բնութեան վերապրումի կամքը կը յուշեն:

Ինչ որ անբացաարելի կը մնայ, նախկին ճիւղերու պարագան է, որոնք փաթթուած, աղուցուած են բունին, արդի քանդակաչործութեան ձեւեր փորձելով:

Նոր բացուած կպրապատ ճամբաներուն զոհ դացած պարտէզներու կամ տուններու կողքին՝ անցեալի փարթաւութեան, անցած երիտասարդութեան, աղքատութեան կամ խլրտացող սիրման անտարբեր, այս ծառերը իրենց գեղունակ հասակը պիտի ցցեն դէպի երկինք: Լոյսը պիտի ցնցուղուի իրենց տերեւներուն մէջ, իսկ կատարները պիտի հետեւին զաղթող երամներու եւ ինքնաթիւներու թռիչքին:

Քիչ անդին՝ բուկի կլոր աւազանն է, որուն շուրջ կղմին տրագոյն, ողորկ սալաքարեր շրջանակ կազմած են, իսկ սպիտակ քարերու այլ շրջանակ մը եղբրած է առաջինը: Բարձրէն՝ կրնաս տեսնել բոսպիկ մանչուկ մը, որ կը խաղայ շորցած աւազանին շուրջը: Քողածածկ աղջիկներու ջնջուած շուքը դեռ կը դեղերի այնտեղ...

Կողմնակի, դարձդարձիկ մէկ թաղին մէջ նարինջի սնտուկներ չարած էին, իսկ կանաչութեամբ բեռնաւոր կառքերը կը յորդէին պարզապէս: Թարմութիւնը պտուղներու, կանաչութեան, վաճառողներուն պոռչուած ու չածիրուած դէմքերը եւ կիներու հետաքրքիր նայուածքները իւրաքանչիւր ֆուլոր մը ստեղծած էին, որ ընդելուզուած էր շրջանի նկարագիրին:

Այս արեւոտ դէմքերը անծանօթ չէին թուեր, այսպիսի դէմքեր միշտ տեսած էիր: Հաւանաբար նոյն մարդիկն էին, որոնց կը հանդիպէիր միշտ շաղիկն, երբ կը հասնէիր քաղաքամէջի հրապարակը եւ կը նստէիր ինքնաշարժի մը մէջ՝ վերադառնալու արուարձանդ: Երբեմն քառորդ կամ կէս ժամ կ'առնէր յաճախողներու թիւին ամբողջացումը, եւ մինչ մարմինդ իր խոնջնաքէն կը հանգչէր՝ կը դիտէիր լեռներէն ու դաշտերէն հասնող բնոյշատարները, որոնք բանջարեղէնի շուկային մուտքին, իրենց բեռները կ'իջեցնէին: Գիւղացիներու ձեռքերուն յաճախ կազի լամբարներ կը տեսնէիր, որոնց լոյսը մթնակայանայ դիւերին մէջ կ'իյնար կանաչութեան եւ հողոտ թեւերուն վրայ, թափանցիկ մեղմութիւն մը ստեղծելով, ուր ամէն ինչ կը թուէր հաղորդական, հարազատ...: Անդի յորունկատան թաղէն եւ կամ քաղաքամէջի քանի մը քաղձայարի շէնքերու տանիքներուն հաստատուած արեւելեան հին քաղաքէններէն՝ յիշուենոց մարդ մը կու գար, արդէն կէս գիշերով, կը նստէր հտեւի նստարանին եւ անմիջապէս կը քնանար:

Արեւ էր, յորդող արեւ մը, որ կը խաղար պատերուն վրայ, նոյնիսկ ճանդուռած, անհրդիք սենեակներուն: Պատշգամէ մը կախուած էին քանի մը կարպետներ: Անոնց կարմիր, սեւ, սրճադոյն ու սպիտակ գիծերուն վրայ արեւը կարծէք կը խայտար՝ լոյսի ու շուքի բազում երանգներով:

— Այստեղ ախոռներ էին, — ըսաւ ծեր ուսուցիչ մը, — պատանիներ էինք եւ կու գայինք կարմրաւուն ու սեւ դաւակներով ձիերը դիտելու:

Սաղարթախիտ ծառերը կը փոփայէին հովին: Անոնց բուններուն միջեւ յարմարեցուած տախտակէ նստարաններուն նստած էի: Մտի կոնդին դամբւած, միտադարձ ցանցապատով ելեկտրական լոյս մը կար, իսկ փոքր, կանաչ տերեւներուն միջեւ սարդի ոտայիններ կային եւ այդ սպիտակ լոյսին տակ՝ ծեր ուսուցչին դէմքն ու ձայնը անիրական կը դառնային:

— Վերը՝ ծափային նախարարութեան շէնքն էր, — շարունակեց, — հրաշալի իւղաներկ զարդեր կան մեղուին վրայ, երկրաչափական զուգահեռ գիծերով, արեւելեան, գանձ նաշիներ, կ'արժէ երբեմն կեդրոնացած դիտել զանոնք, սակայն դժուար է այդպէս երկար կենալ՝ գլուխդ վեր, գլխապըստդ կը պատճառէ: Ներսը՝ սենեակներուն ներկը երբեմն կը թափի: Ձորցած ներկին հետեւէն դուրս կու գայ զոյգ կապոյտ գեղեցիկ գոյն մը, տուփին խաւը, որ աւելի հաստատուն է եւ բոլոր խաւերուն տակ պիտի մնայ, միշտ:

Ներկայիս՝ այդ սենեակները մատենադարան էին, դասարան, ժողովարան, եւ այլն: Յերեկին՝ մանուկներու աշէրն էին, կրակէ կէտերու պէս, ստոտոտուն եւ անհանգիստ, իսկ վճիտ ու զուարթ աղմուկ մը ալիքալիք կը տարածուէր շրջակայքը: Անդին՝ փոշին կ'իջնէր գիրքերու խիտ շարքերուն եւ հին օրաթերթերուն ու հանդէսներուն, որոնք տարբեր վայրերու, ժամանակներու եւ մարդոց վկայութիւններ կը բերէին: Թուղթը կը դեղնէր, երբեմն խոնաւութիւն կ'առնէր եւ կամ կը փչրուէր՝ թիթեռնիկի չորցած թեւերուն պէս: Փոշին կը լեցունէր քթածակերուդ, սակայն, նոյն ատեն, լոյսը պատուէ հանէն ներս կ'իյնար անանձնական, բարի:

Գիրքեր ու թերթեր կային, որոնք երբեք պիտի չբացուէին: Իսկ ժողովականներու խօսքերը կ'արձանագրուէին ատենագրութիւններուն, կը վաւերացուէին, կը մեքենագրուէին մաքուր թուղթերու վրայ եւ կը պահուէին դարակներու մէջ, տարի-տարի, պատմութեան համար...

— Նոյնիսկ դպրոցը հոս չէր, — շարունակեց, եւ կրկին իրեն վերա-

դարձայ, — նախկին նախագահին տան հարին գտնուող շէնքի մը մէջ կը գրտնուէր: Եթէ գիտնաս, թէ քանի անգամ այս շրջանին մէջ իսկ փոխադրուած են մեր կառույցները՝ Գայրոց, Կոնստանտին, Խմբագրատուն... Աւելի անդին առնապատ էր, ուր աղամթուղի վայրէ ծառեր կային: Զարմանայի է... այդ տուփին մէջ այլանդակ, փշոտ կերպար, գեղեցիկ ու քեզին ծագիկները, եւ ապա՝ մանր կուտերով լեցուն, բայց քուցրահամ պտուղը: Անապատը ջնջուած լիւր է, գրեթէ չկայ: Ամէն կողմ հին ու նոր շէնքեր, բռնադաւաճած տուններ, բնութիւնը կը ներթուփուի: Ձեռք պիտի, այստեղ ամէն ինչ խառնակ է:

—

Գարնան տարբեր բան մը կար միջնորդին մէջ: Տարբեր ծառեր, ուրոց տնունը գծուար պիտի գիտնանք, իրենց արծաթէ մերկ մարմինն վրայ յանկարծ վառ կարծիր կամ մանիակապոյն ծաղիկներ կը բանային՝ հրաշալուութիւն արքայով: Եւ աղուոր էին ճիշդ այնպէ՛ս, տերեւները դեռ չծլած, մէկ-մէկուկէս ամուսն շրջանի մը համար: Ապա անոնք պիտի ինային աւաղանին, լայն մայթին վրայ, անցորդներու տղերուն տակ, մեր օրերուն մէջ...

Կարգ մը նախկին հարուստներ չէին կրցած թաղամասը ձգել եւ կը մընային իրենց մէջ քաշուած, ներամոփոփ, հարծէք վախճալով դուրս գալ, մինչ քաղմութիւնը բաց կանաչ, լազուարթ ու վարդապոյն հազուատներու, պտուղաւոր մանուկներու եւ մարդոց աշխուժութիւն կը օտեղծէր: Լուսաքի տարաններ քաշուած էին կարգ մը պարտէզներուն, պատշաճներուն, սենեակներուն մէջ նոյնիսկ: Կը թուի, թէ կարգ մը տուններու սենեակները բաժնուած էին տարբեր ընտանիքներու միջեւ: Որոշ պատեր պէտք է ջուր առած ըլլային: Երեկտրական մայր գիծերէն երկարող բարակ թելեր կ'երթային այդ սենեակներուն, իսկ լոյսն ու շուքը, մեծ պատուհաններէն, ուրուականներ կը յուշէին:

Աստուածային արդարութիւն մը եղած էր նաեւ այս 40 յարկանի հրէշին կապակցութեամբ, կրաղիւսէ վեր բարձրացող չորս պատեր, նոյն չափի ու նոյն ձեւի պատուհաններով — հակաթեղը շրջապատի տուններուն: Մարդիկ այս վաճառաճաճ շրջանին մէջ խելագար հեւքով մը բարձրացուցած էին զայն՝ առանց նայելու չորս գին, առանց կենալու այն թշուառութեան դիմաց, որ կողմնակի թաղերուն մէջ ծուարած էր... Եւ կառույցը բարձրացած էր գէպի վեր եւ հոն... սառած: Մարդոց կրակէ ու երկաթէ ցատումը թափած էր կրաղիւսէ չոր, անհաղորդ պատերուն: Փամփուլտները փորագրած էին նոր յուշակոթող մը, սակայն ոչ՝ նահր էլ Գեղի ժայռերուն վրայ:

Մետաղեայ, մեքենական կուտերը, արդէն ժանգոտած, հոն կը մնար ամբողջ ու թ տարի, կտուցը երկարած վերի յարկերուն:

! 24

Թաղին անկիւնը կը դառնայի եւ շէնքի մը պատին վրայ պատաղիճին նուրբ ճիւղերն ու տերեւները տարածուած էին գորգի պէս — սակեպոյն, ծիրանապոյն, ալուն ու արեւ բուրդ տերեւներ, որոնք կարծէք փափկացուցած էին պատը, բնութեան մէջ ընդլուծած, մեղմացուցած:

Կը թուի, թէ վերջ ի վերջոյ, տեղ մը հաշտուած էին հինն ու նորը, բնութիւնն ու կրաղիւսը: Նուրբ նաշխերը, երկրաշտփական համաշխարհութեամբ, տարածուած էին ամէն ուղղութեամբ եւ այլեւս կեդրոն չկար, ամէն կէտ կեդրոն էր եւ, նոյն ատեն՝ ամբողջացնող, լրացուցիչ մաս, որ տերեւ-

ներու ասեղնադործութեամբ կը կրկնուէր, տակաւ կ'աճէր, կը բազմանար։
Իսկ դիմացի հին, քարաշէն սպարն վրայ, աւաղաքարը հոմէն կ'ուտ-
ւէր եւ կը թափէր հատիկ-հատիկ։ Տեղ-տեղ, քարերուն միջեւ, վայրի մա-
քառներ արմատ նետած էին եւ կ'ամբողջացնէին քայքայումը ժամանակի։
Մական, բիշ անդին, մանիւկադոյն, քանդակած եւ ծաղիկներ թեթեւ կը
շարժէին եւ կը շարունակէին տանամետակներու լուռ զօղանջը։

Անինամ, վայրենացած բուսականութիւն մը կը յորդի կարգ մը ցան-
կորմներէն։ Այլուր՝ դեռնաշարկերու որոշ աննականները խանութներու վե-
րածուած են եւ վարձու տրուած։ Նախկին վարչապետը տունէն դուրս կու-
նայ իր կարծիք ֆէսով, մութ կապոյտ թիկնոցով եւ հանդարտ կը քալէ, կը
դառնայ փողոցին անկիւնը, կը բարեւէ խանութպանը։ Դէմքի գիծերը մեղ-
մացած են, աչքերու քայքայումը բոցը մարած է, պեթերը՝ ճեղքած, եւ կը
թռնի, թէ քաղաքական փոթորիկները՝ իրենց պղտոր հոսանքներով, անցեալ
են արդէն։ Հանգիւած է կիրքը եւ ինք այլեւս կրնայ պարզապէս քալել, ինք-
զինք ըլլալ եւ կամ խորհիլ թոռնիկներուն մասին...

Օրը քանի մը անգամ մինարէն ազունին մայրը կը բարձրանայ եւ
հաստացեալները կը կանչէ աղօթքի։ Թիչ մը աւելի վեր՝ հիւսիս-արեւելք,
յոյնեռու եկեղեցին է՝ իր առանձին ճարտարապետութեամբ։ Անգին՝ ուրիշ
եկեղեցի մը, ապա՝ այլ մզկիթ մը եւ աղօթքներ՝ ստորերէն, յունարէն, լա-
տիներէն, հայերէն, արաբերէն եւ այլ լեզուներով...։ Տարբեր համայնքնե-
րու դպրոցներ՝ տարբեր դաստիարակչութիւն։ Հաւանաբար պատմութեան
դաստոյտուն կը խօսի տարբեր արշաւանքներու, ներխուժումներու, բերդերու
եւ յայտնաբերուած խնամկարներու մասին։

— Վարը՝ հին քաղաքն է, — պիտի ըսէ ներշնչուած, — քաղաքամէջի
աւերակներուն տակ նախկին քաղաքի աւերակները կան՝ հողով ծածկուած։
Արեւելեան բաղնիքներ, բիւզանդական խոյաններ, ջրուղիներ, խաներ, տա-
ճարներ...։ Կը թուի, թէ հոն, հողին մէջ, մարդիկ կը շնչեն, կը զրու-
յեն եւ կը խմեն կաւէ ամաններէն աւելի։ Ետերերկրեայ կեանք մը աւ-
նին՝ այս ծառերու արմատներուն պէս...։ Ուղտեր եւ ջորիներ կը մտնեն քա-
ղաք, դերձիմաններ, լուսափոխներ եւ նաւաստիներ նայուածքներ կը
փոխանակեն եւ... ստորերկրեայ քաղաքի կեանքը կը շարունակուի։ Հողին
վրայ նոր աւերակներ են, տեղ մը՝ պատմական որոշ ժամանակաշրջանի մը՝
եկեղեցին վերածուած է մզկիթի, ինչ որ քաղաքայտօրէն կարելի է տեսնել
մզկիթի ճարտարապետութեան մէջ։ Իշխաններ վերածուած են խանութի...։
Բաշորը լքուած, ամայի։ Հովը ծառերու եւ վայրի թռիւքներու սերմեր կը բերէ
այնտեղ եւ անոնք կ'անին խանութներուն մէջ եւ ճամբաներուն...։ Վաղը նոր
քաղաքը պիտի կառուցուի եւ հետաքրքրական է գիտնալ, թէ ստորերկրեայ
բանի՞ յարկեր կան անոր տակ թաղաւած...։ Փիւնիկը ա՛յլ թէ իր...։ Թեւեթը,
այլ թմրող մարմինը մոխրացուցած է...

Նրկյարկանի հին շէնք մըն էր, ուր մտանք, պատերազմի առաջին տա-
րիներուն։ Տախտակէ, կանաչ դարպասին վրայ տակաւին կը մնար դրան ուռ-
նակը, հակադրուէ անոր, որ այլեւս ելեկտրական զանգը կը գործածուէր։ Դրժ-

ւար էր ճշգրիտ, թէ գետնայարկը, պարտէզն ու պարտիզպանին սենեակը ե՛րբ վարձուած էին ծեփ ամուլին կողմէ։ Ամուսինը տունը չէր։

— Զիւրաւի օր է եւ իր հին սէրերէն կամ մոլութիւններէն ա՛յս մը-նացած է միայն եւ սիկարէթը,— կնկան խորշոմած դէմքին վրայ հասկացող, ներողամիտ ժպիտ մը կար,— սիրտը կապուած է նոյնգնդերու վազքին եւ ա-նոնց բաշերը կարծէք արիւնը կը կատակեցնեն...։ Տղաս երկար ատեն է Ափ-րիկէ է, պատերազմէն փրկուեցաւ, վաճառականութեամբ կը զբաղի, երբեմն նամակ կը գրէ եւ երբեմն ալ դրամ կը գրկէ։

Թորեալ ջուր ծախելով կ'ապրէին։ Հին թթիկն էր կար պարտէզին մէջ։ Անեակին դրան առջեւ՝ գունազւիղ կարպետով ծածկուած սաւորի մը եւ ճեր-մակ սփռոցով տախտակէ սեղան մը։ Վրան՝ կուժով ջուր եւ, պնակին մէջ՝ սպիտակ թութ։ Դուբի անհեթեթ քրտութեան ու մոլուցքին մէջ անկարելի կը թուէր ինչ որ ծուարած էր այս պատերուն մէջ։

Նախկին պարտիզպանի սենեակին մէջ ջուրը կ'եռար, կ'ազատադրուէր Ներքին, անտեսանելի, առկախ մարմիններէն, կը գոլորշիանար եւ երկար հո-լովոյթէ մը ետք, կաթիլ-կաթիլ, անձրեւի ջուրերուն պէս վար կ'իջնէր, կը հանդէսէր, թորեալ կեանք մը կը ստանար։

Հանգչած, վճիտ, մաքրուած բան մը կար կնկան ժպտացող աչքերուն մէջ։

Ո՞րն է տարաշխարհիկը հիմա։

Բոյսէ՛րը, որ չեւ դիտեր ո՛ր պարտիզպանը կամ Եւրոպա ու Ափրիկէ այցելած տանտիրուհին ապսպրած է եւ կամ թելադրած։ Զարտաբապետու-թեան ո՞ճը, որ տարբեր ժամանակաշրջաններու ու ոճերու խառնուրդ մըն է եւ կը ներկայացնէ ամբողջ դպրոց մը իր արհեստագիտութեամբ, զարդա-ւետի եւ կղմինտի վարպետներով, պատուհաններու ու պատշգամբներու կա-մարներով, քարէ-զանէ ծաղիկներով եւ հազար ալլ մանրամասնութիւններով։ Ամբողջ դպրոց մը, որ չկայ այլեւս։

Կարծես այս դպրոցին հետ չքացած է նաեւ լայն շնչառութեան եւ ա-զատ տարածութիւններու գաղափարը, այսինքն՝ բարձր ու խոշոր սենեակ-ներ, ընդարձակ պատուհաններ, ուրկէ լոյսը կընայ ողողուլ քեզ, իսկ ամբան՝ զով օդ բերել։ Վայրեր, ուր շարժումի ազատութիւն կայ, ծաւալ՝ ներքին ու արտաքին չափերով զարգացած։ Կեանքի մեւ մը, որ անտեղի, անկարելի կը թուի նոյնիսկ, կեանքի մեւ մը, որ պերճանքի պէս բան մը կը նկատուի...։

Կրնանք այս բոլորը քանդել, պարտէզները փրցնել, ծառերը արմատա-խիլ ընել եւ 20 կամ 30 յարկանի շէնքեր բարձրացնել, իսկ սեղ-տեղ... քան-պիչ մեքենաները անդուլ կ'աշխատին։ Փոքր ու սեղմ տուններ, ցած մեղմու-ններ, փոքր դրասենեակներ, տնտեսութեան վերամասիճանին նայող անձկոտ նայուածքներ, հալուելած հանոյքներ, հալուելած կեանքեր...։ Կրճատ սէ-րերու կարիք չկայ։ Բարձր, գեղուղէշ ծառերու կարիք չկայ, ընդարձակ, լուսուտ պատուհաններու կարիք չկայ, ամառնային սանձարձակ գիշերներու կարիք չկայ, եռանդի կառքերու վրայ բանջարեղէն ու թարմ պտուղներ ծա-խող մարդոց կարիք չկայ, ազամաթուղի փչոտ ծառերու կարիք չկայ, պա-տադիճներու կարիք չկայ, անձկութեան կարիք չկայ, լուսութեան կարիք չկայ, խորհրդածութիւններու կարիք չկայ, բանաստեղծութեան կարիք չկայ։ Վերջ։

ԾԱՌՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա Ր Մ Ա Ն Տ

ԴՈՒ, ՈՎ ԼՈՈՒԹԻՒՆ...

— Դու, ով Լուսինն՝
 իմաստուն,
 Անդէմ,
 Որ Արարողի շուրթին դարձաւ խօսք
 Դու ստեղծարար,
 Որից ցայտեց լոյս
 Կառարի ընդդէմ —
 Շաղիբ հոգուս մէջ՝ մթնշաղի պէս,
 Խորհուրդդ խորին,
 Մտնումս պէս եզոր քաղաքիւնից
 Քամիք արեւմտ մէջ,
 Որ չվախենամ տշխու մտից,
 Դառնում ես խնայք,
 Խոնումս աւելի,
 Արդար ու բարի:
 Թող հասկանամ ես
 Գաղտնիքդ անհուն,
 Լսեմ զընկզման համառոտագոյն
 Լոյս ստեղծերի վրայ
 Աստղերի,
 Ու քափանցեմ ես խորքը իրերի
 Ու հասկանամ ես
 Յաւիտենական միմուռնդ լոյն,
 Սփինճի լեզուն,
 Լուսնի, արեւի:

Լեզուն՝ մեր Լեռան՝
 Լուս ու վեհաճառ:
 Պայքում է զանկե,
 Տես, այս խժուար
 Ազնուկ-ծխարից,
 Դարի խեղճ քաղի
 Հեղճուցիւ հազից,
 Բամբաստանից չար,
 Շշուկ ու դարից:
 Իրիկուայ Բեւոյ մանուշակագոյն
 Իջիլ ես անա,
 Ու փռիլ ես ինչ շունչ
 Զօղաբաց դաշտերի վրայ:
 Սփռի՛ր քեւերը քառանկյունիքով
 Խաղաղութեան մարտ մտնալից հիւսում՝
 Հիւծումեմ մեր դարի ուսերին յագնած:
 Իջի՛ր քոզ շունչը քա մեղմաբանիւս
 Մեր մրրկայայդ եղջիւնրի մէջ.
 Զայնքի փռիւմ՝
 Ժանգոտ, ամբարհուրդ,
 Երաժշտութիւնն հնչի քոզ հագուդ,
 Որ արժագանցն է
 Սրտերի դողի,
 Շնչառութիւնը՝ աչքնաջող հողի,
 Ու ռոմանայնը՝
 Մեղ Արարողի:

— Լուս իմ Լուսինն,
 Ինչե՛ր տեսնո՞ւք ինչ կրումս զազանի
 Քո հոգու խորքում —
 Դու՝ աղարշութեամբ
 Այս մեծ համերգի
 Երջանդդ օրուայ դադար ու համգիտ:
 Դու՝ խորհրդաւոր ու մեծ պատգա
 Երաժշտութեամբ,

— Լուս իմ Լուսինն,
 Մի ամբողջ ժամ է,
 Որ հսկում եմ քեզ —
 Բախում ես՝ համեստ՝
 Դու վարդի բերքին,
 Տերեւի շրթին դադում ես հավից
 Ու ճայն լին համում...
 Մերում ես ցօղն, կարում ես հողին,

Ու ցորեամի պէս՝
 Մեռնում ես հողում,
 Եւ ծիլի տեսնով՝ յամնում ես կրկին,
 Կրծքին ծառերի գառնում ես զու միբոյ,
 Խնձորի աշտին գառնում ես շիկնմեմ,
 Սիրողի սրտում՝ դու լուս հեկեկամեմ:
 — Օգնիր կարեւորեմ ես լսել փափուկ
 Ռոմեոսայնիքը իշնոյ իրիկուայ
 Ու քաջուող լոյսի,
 Եւ անսգ քոյսի
 Խորանմը լուս,
 Երկունքի հեւքը կռկռնի կարմիր,
 Երբ շաղիկն է իբ
 Նա պատուում սիրուց,
 Ու մրմրում է տկամքի մեղմութիւն,
 Մըրմի, բիբեռի՝
 Զլուսած խոսքեր
 Սիրայ անմտայն:

— Օգնիր՝ զգամ ես
 Յաւը տեսելի՝
 Ամիրքու մարդկանց կրտսերների տակ
 Մեռնող մըրմիւնի,
 Ու լսեմ ճառ տալուան լուս
 Եւ ճիշդ անլուր՝ յոյսի սիրտեան
 Այրուող բիբեռի...
 — Օգնիր՝ սերտեմ ես
 Ամբարշտա շեղում,
 Որ վարդի հետ ես խօսել կարեւորեմ,
 Խմամում քոյրն իր այդ ումի՞ց տառ —
 Կոյսի շնչի՞ց վարդ, մաշկի՞ցը քաշեայ,
 Թէ՛ տրեղեղի ոսկի շողերից,
 Ընկերքից անդի:
 Համեստութիւնը ումի՞ց ժառանգեց,
 Հեղուքի՞նք հեղ —
 Փեղմի՞ց՝ անպայման —
 Բարեկամ միտաւ
 Ու ճայն լիանց...
 Իմամում ինչո՞ւ տեսցաւ սիրտը
 Կալաչի գառ վառ,
 Տեսնեմ՝ տեսնում եմ
 Մամուլանի գոյգ տալիքը խոսմար:
 Ա՛խ, իմամում ես, մորի՞ց իմամում —
 Զիմամալուց, տե՛ս, որքա՞ն եմ տխուր —
 Տրտմութեանս հետ քոզ հաշտեմ ես
 Ու ծրարկեմամ:

— Լուս իմ Լուսութիւն,
 Տուր, տնկամբերիս
 Տո՛ւր համբերութիւն,
 Խորութիւն մտի՛.
 Խօսի տեղ տե՛մ
 Տուր ինձ զու ռսելիմ
 Քո անխօսութեան,
 Որ ցորեամի պէս՝
 Տեսնեմ ես մարդկանց սրտերում խոսքան:
 Տո՛ւր ինձ ժպիտը զու արշալոյսի,
 Իրիկնամուտի քալիծն աստղաման,
 Եւ լուսութիւնը,
 Լուսութիւնը ես՝
 Յիմարի դիմաց...

Դու այդքա՞ն գիտես
 Եւ լուս ես ոսկայն.
 Ա՛խ, ինչո՞ւ ապա, մա օր չգիտեմ
 Խօսում է այդքան...
 Քո ճայնը գրե՛կ լսել կարեւորեմ,
 Մի էի՛ լուս մեար, մի էի՛ լուս մեար:
 Որքա՞ն եմ խօսում,
 Եւ՝ որքա՞ն անհամ:
 Տուր մեզ խօսի տեղ՝
 Հայեացքի խոսում.
 Թող մի քաղաքանով իրար հասկանամք —
 Հասկանայ մա ինձ,
 Ու ես էլ՝ մրտն.
 Այնքանի մէջ իմ ճա կարգում հոգիս
 Ու ես՝ սիրտը իր՝
 Նայումեմում մրտ.
 Ժպիտով իր մա խօսի, խօսի,
 Եւ ուներն ի վար գետը քոզ հոգի
 Մագնիսի ոսկի, ու քափուտի գիրկս
 Նա՛ վարա՛ր, վարա՛ր:

— Լուս իմ Լուսութիւն,
 Յիշում ես ինչպէս
 Թպրտում էիք շուրջերիս վրայ՝
 Իրրեւ մի վկայ
 Առաջին սիրայ:
 Բառերը խեղճ էին,

Որքան՝ անհամաստ, մտնուած ու շնչին՝
 Քո քնայլի դիմաց
 Մերուց շփաթուած, դազացիք շարքիս,
 Ու կամաց, կամաց,
 Այտիս ցօղ դարձած՝
 Գլորուեցիք ցած:
 Նա էլ — յիշում էս —
 Փեղ ապականեց,
 Ու մեկէ երեքս էլ
 Հասկացածէ՛ իրար —
 Օ՛, ինչպէ՛ս, ինչպէ՛ս:

 Դժուար է իրօք,
 Ա՛յ, շա՛տ է դժուար հասկանալ լեզուդ,
 Ար մտն է շատ
 Արարչի լեզուիմ,
 Որ խօսում է յար յամբով ու անյամբ՝
 Մեզ հետ. մեր ամեն մի ճայլափոխիմ՝
 Մտնի ու ծաղկի լեզուով երփնեքամզ,
 Լուսնի, արեւի,
 Աստղերի անքիւ:
 Ա՛յ, միմեզնի այդ հասկանալ պիտի,
 Պիտի հասկանալ՝
 Փշերն հասկացան
 Ամենունը լեզուդ,
 Անցան կազից քո
 Ձնգոցով գաւարի դեռ ու գունդի,
 (Օ՛, բարձրանալէն այդ, ազմուկն ամխորհուքդ)
 Նայեցին անփայլ երկնքի իրբու
 Կտոր մի լաքի
 Ու չլսեցին համերգն այդ կաղոյսի,
 Մտն ու քփերի ծիծաղը կամայ,
 Կանչդ, հատաչդ եւ բազուքդ տուր՝
 Որքերի խոշոր աչքերի մէջ քաց
 Ու տվից ճափած շարքերին նրանց...

— Լուս իմ Լուսիքիւն,
 Յիշում էս, յիշում էս,
 Ինչպէս ես մի օր
 Դադարից փախած,
 Եկայ քեզ այցի՝ գիւղը այն հեռու —

Քո նուրբ ու փափուկ աստիճաններով,
 Անշուշտ իջայ
 Գիրկը մեմուքեան,
 Ու մտայ կրկն այն մտանքն հին,
 Ուր, քափառումիս խնդրեցիք արդար,
 Մեկնուած գետնիմ նրա հիւրընկալ,
 Ձեռքս գլխիս ասի՝
 Ձրուցում էի քեզ ետս ես հաճարս՝
 Վարդ լաւաշների ձեռքացով տափ:
 Գալիս էի քեզ երբեմն այցի —
 Յիշում էս դու, չէ՞ —
 Ու մեկէ միասին,
 Մտնում էիք տափ
 Թանքատուներ այն,
 Ուր արգար նացի ու գինու քայրից
 Հարթում էիք դու,
 Ո՛հ, այնքան, այնքան,
 Ար քանրի բոցը քո լուսիքից
 Լեզուաւորում էր
 Ու լիզում էր քո փշերը քաւիշ
 Ու պարսիկ անձայն:
 Եւ բուցում էի օթորոտ քո սուգիւ —
 Անկեղծամուտ էր պարմանի հոգիս՝
 Ձերք մայր ու որդի:
 Պատմում էի քեզ, ինչ որ միմիայն
 Ասածուք էր յայտնի —
 Իմ կասկածների, սիրոյ ու վախի,
 Հաւատքի մտօրի:
 Ու մեկէ միասին՝ խորհում էիք լուրջ
 Ատուծայ մասին:
 Տեղ էիք բացում,
 Որ Նա էլ իջնի,
 Նստի մեր կողքին:
 Եւ Նա, անշուշտ, իջնում էր, խօսում՝
 Մրկելած հացի ու քոթրի բոցի
 Բայրով ու հրով:
 Անցիմէ՛ նրան մեկէ՝ սրտի գողով,
 Որ կամ շատերը, որ չեն հաւատում
 Այլեւս ժրեմ —
 Յիշում էս դու, չէ՞ —
 Ժպտում էր տխուր Նա անյիշաշար,
 Ու բոցի միջից ձեռքով էր անում.
 Ասես, ասում էր՝
 Ձեռաւուղն իսկ, երբեմն իմքին
 Հաւատն է քաւտում,
 Ինչպէս մոխրի՛ կրակիմ, երբեմ:
 Ասիմէ՛ ի՞նչ անեմէ, որ մեր աղօթքը

Հասնի ակամջին՝

Ասաց՝

Շապիկը ձեր ճանապարհին,
Նուիրէ՛ք արտանք թշուառին, խեղճին:

— Լուս իմ Լուսիւն,
Անցած-հեռացած սիրելիներէս
Ֆայնիքը անտ
Արձագանգում եմ ձերացած արտին
Կամարների տակ-
Ես գիտեմ նրանք հանգստանում են
Հիմա ինչ գրկում, —
Գուրգուրիք նրանց հագին անապակ-
Թող նրանք զգան
Իմ տէրը մահուք
Ու կարօտս վառ,
Որովմէ մայում եմ իր ճօրը կոչեցած
Իբրեւ անմեղ գառ:

— Լուս իմ Լուսիւն,

Քեհեհ, 1982

Գիշերուայ մթնում՝

Ներշնչումք դու խոր,

Երկինք մի կապույտ՝

Անհռ՛ւն հւ անհռ՛ւն:

Պատանու շրթին՝

Չարտասանուած բառ

Ու ռգելարալ ըսքը սիրոյ դու խօսք.

Դու՛ հաւանութեան ձշամ մի անխօս,

Ջեւաւանութեան դու խօսում ակնարկ —

Դարձիք ինձ յեմակ,

Որ անանց խօսքի

Հաւանեամք իրաք —

Ներս մտնեմ շեմքից թող ին

Վեհութեան

Ու ստեղծեմ ես

Գրկում մեմութեան,

Ինչոք վեհ է, վեհ,

Ինչոք՝ գեղեցիկ —

Խորհուրք մի խորին,

Ու չունի սկիզբ,

Որ չունի վախճան:

ԱՐՄԱՆՑ

ՄԵՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Այդ տարին մեր գիւղն արժանաբար-մանք կտրեց, երբ իմացաւ, որ մեր վար-ժապետն ամուսնացել է տիկին Հռիփսի-մէի հետ:

Այդ ամուսնութեան առթիւ մեր գիւ-ղում երկու կարծիք էր ստեղծուել: Տղա-մարդիկ դէմ էին այդ ամուսնութեանը: Նրանք հնթադրում էին, որ մեր վարժա-պետը չէ, որ ամուսնացել է տիկին Հը-ռիփսիմէի հետ, այլ՝ տիկին Հռիփսիմէն մեր վարժապետի հետ: Կանայք, որ միշտ իրար պաշտպանում են, ասում են, որ այդպէս չէ, որ այդ ամուսնութիւնը թե-րու թիւն չունի:

Հռիփսիմէն մեր գիւղից չէր, դրա համար էլ մեր գիւղացիները նրան տի-կին էին կոչում: Հենց ինքը՝ Հռիփսիմէն պահանջում էր, որ իրեն տիկին կոչեն: Նա մի աղջիկ ունէր՝ Ծուշանիկ անունով, հազիւ ինն տարեկան: Ծուշանիկն ինձ հետ սովորում էր մեր գիւղի դպրոցում: Նա թուի գէժք ունէր, սեւ խոշոր եւ մե-լամազմոտ աչքեր: Նա շատ նիւար էր եւ լուակեաց: Նրա ձայնը շատ նուազ էր, Երբ խօսում էր՝ չէր լսւում, թէ ինչ է ասում:

Ծուշանիկին հակառակ, տիկին Հը-ռիփսիմէն սպիտակ մորթ ունէր, լեցուն եւ զրնգուն ձայն եւ լեցուն ժարմին: Մօր եւ աղջկայ կերպարների այդ տարբերու-թեան պատճառով էլ մեր գիւղի կանայք կարծում էին, թէ տիկին Հռիփսիմէն որ-դեղեր է Ծուշանիկին: Հենց այդ հան-դամանքի պատճառով՝ տիկին Հռիփսի-մէն վարկ էր ստեղծել իր համար, մեր գիւղի կանանց մօտ:

— Տիկին Հռիփսիմէ, — հարցնում

էին մեր գիւղի կանայք, — ինչպէ՞ս է Ծուշանիկը:

Իրենց այդ հարցումով մեր գիւղի կանայք ցանկանում էին իրենց բարոյա-կան մասնակցութիւնը բերած լինել տի-կին Հռիփսիմէի կողմից Ծուշանիկի հար-ցական որդեգրմանը:

Տիկին Հռիփսիմէն մեր գիւղի կա-րուհին էր: Հարսների եւ աղջիկների հա-մար հազուադէպ էր կարում՝ լայն ու անճաշակ եւ միաձեւ: Մեզ՝ աղաներիս համար, տաբաններ եւ վերնաշապիկներ էր կարում՝ նորից միաձեւ եւ անճաշակ: Մեր տաբանները գինուորական ձեւ ու-նէին: Այսինքն՝ տաբանների ա՛յն տեսա-կը, որ հագնում են զորավարները կամ հեծելազորի սպաները: Այդ տաբանների փողերը մինչեւ մեր ծնկները շատ նեղ էին, ա՛յնքան նեղ, որ միշտ չփման մէջ լինելով մեր սրունքների հետ՝ կարմե-ցընում էին մեր մաշկը: Մեր ծնկերից սկսած այդ տաբանների կողքերը սկը-սում էին աստիճանաբար լայնանալ մին-չեւ մեր ազդերի կէտը: Այդտեղ մեր տա-բանների կողքերը մէկ սուր կէտի վրայ կանդ էին առնում: Յետոյ մեր տաբա-նների կողքերը մեր գոտկատեղերից վար իջնելով՝ աստիճանաբար սկսում էին լայ-նանալ-լայնանալ մինչեւ որ հասնում էին սառեցման ենթարկուած կէտին, միա-նում այդ կէտին՝ կազմելով մի շատ սուր եռանկիւն: Եթէ մի ծաղրանկարիչ փոր-ձելու լինէր՝ չէր կարող այնպէս ծաղրել մեր տաբանները, ինչպէս որ անում էր տիկին Հռիփսիմէն՝ կարուհու իր ճարտար ձեռքերով: Մեր մայրերը հիանում էին մեր տաբաններով, իսկ մեր քոյրերը

ծաղրում մեզ եւ մեզ գնեքալ անուանում:

Տիկին Հռիփսիմէն ասում էր, որ ինչքէ կարելու իր արուեստը սովորել է ամբողջ Հայաստանում յայտնի կարուհի տիկին Բշիկերական-Շմառնեանի արհեստանոցում: Այդ կնոջ կրկնակի ազգանունը մեծ տպաւորութիւն էր ձրգում մեր մայրերի վրայ, մա'նաւանդ՝ որ նրանք Բշիկերական ազգանունը երբեք չէին կորոզանում արտասանել:

Մեր մայրերն ասում էին, որ տիկին Հռիփսիմէն եւ մեր վարժապետի ամուսնութիւնը մեր դիւղի քահանայն է դուռի բերել: Կանանց հակառակ, ազամարդիկ տեսնում էին, թէ հենց ինքը՝ տիկին Հռիփսիմէն է ամուսնացել մեր վարժապետի հետ: Գիւղամիջում դիւղացիներն չարտախոսում էին, առելով, թէ մի դիւղի տիկին Հռիփսիմէն գնացել է մեր վարժապետի խոտը եւ տանել:

— Վեր կաց, իրերդ հաւաքի՛ր դռնանք, Յովհաննէս...

Մեր վարժապետն էլ հարցրել է.

— Ո՛ր գնանք, տիկին Հռիփսիմէն: Տիկին Հռիփսիմէն էլ, թէ՛

— Գնանք մեզ մօտ, վարժապետ Յովհաննէս:

— Ինչու՞ գնանք մեզ մօտ, տիկին Հռիփսիմէն: Արդեօք Շուշանի՞կն է հիւսնողացի:

— Այ՛, Տէր հայրը մեզ է ապաստում:

— Արդեօք կնո՛ւնք կայ, հարաանի՞ք:

— Ո՛ր տղա, ո՛ր աղջիկ: Տէր հայրը քապասում է, որ մեր պատկազրութիւնը կատարի:

— Մեր մ'ամ:

— Իմ եւ քո:

— Բայց, տիկին Հռիփսիմէն, ես քեզ առաջարկ չեմ արել:

— Ես եմ քեզ առաջարկ անում:

— Բայց, տիկին Հռիփսիմէն, ես ինչպէ՞ս կարող եմ քեզ ու Շուշանիկին պատահել: Ես դպրոցից ոչինչ չեմ ստանում:

— Ես քեզ կը պահեմ: Վրադ-գլուխդ կը շտկեմ: Ի՞նչ է քո օրը: Վրադ չափի չկայ: Կօշիկներդ ծուռումուռ: Ոչ, վրձնորած է: Գնանք:

Սակայն մեր վարժապետը նորից նրասում է իր ճրճաւ թախտի վրայ, որը նրա անկողնակայն էր, եւ վճռականօրէն ասում էր.

— Տիկին Հռիփսիմէն, գնա՛ քեզ համար ուրիշ ամուսին գտի՛ր, ես ամուսնացող մի պատու չեմ...

Այդտեղ տիկին Հռիփսիմէն շատ է յարկանում եւ ապստում է.

— Վարժապետ Յովհաննէս՝ — ասում է նա. — Եթէ հենց հիմա չգնանք պատկաւու, ես քո գլխին մի խաղ կը խաղամ, որ եօթը աշխարհում խայտառակ կը լինես եւ փախչելուդ ճանաղալը կը մոռանաս...

— Ի՞նչ կ'անես, տիկին Հռիփսիմէն: — Հարցնում է մեր վարժապետը:

— Ես հենց հիմա կը դուռնա, կը կանչեմ, ոչ ես քեզ մօտ եկայ Շուշանիկի սովորելու, մասին հարցնեմ եւ դուն ինձ ձեռք գցեցիր...

— Ի՞նչ է այդ, — հարցնում է մեր վարժապետը:

— Եթէ ուզում ես, որ շանեմ, որ եմեմ գնանք պատկաւներ: Վճռւած է՝ պիտի ամուսնանանք: Տէր հայրը մեզ է ապաստում, որ մեր նարտը կապի...

Մեր վարժապետն էլ ստիպուած ելնում է իր այնքան շատ սիրուած ճրճաւ թախտից, հառաչում եւ տիկին Հռիփսիմէնի յետեւ ընկած՝ գնում է նրա խրճիթը, ուր Տէր հայրը կապում է նրանց նարտը, նորապսակներին օրհնում, Շուշանիկին էլ իրենց տունը տանում, որ հարս-փեսան մենակ մնան:

Մենք՝ աշակերտներս, ոչինչ չգիտէինք, մինչեւ որ միւս օրը եկան տէր հօր տղաները եւ Շուշանիկը միասին: Տէր հօր տղաները քչփշոցով մեզ տապին, որ մեր վարժապետը ամուսնացել է տիկին Հռիփսիմէնի հետ, որ Շուշանիկը մի քանի զր իրենց մօտ պիտի մնայ: Մենք շատ զարմացանք եւ անհաճախ ըստ պատում էինք մեր վարժապետին՝ դիտողալու համար, թէ ամուսնութիւնը յետոյ. նա ինչքան է փոխուել: Գիշ յետոյ դա-

սարան եկաւ մեր վարժապետը: Իրապէս նա փոխուել էր եւ շատ: Առաջինն, նա է՛լ աւելի ամաչկոտ էր դառել (նա միշտ ամաչում էր մեզինց, աշակերտներինց): Յետո՛յ՝ նա բծախնդրօրէն լուսացուել էր: Ի՞ր խելս սեւ մազերը թրջել եւ քանդուել էր այնպէս, որ մազերի ծայրը իջել էին նրա ճակատի աջ անկիւնի վրայ: Յետո՛յ՝ նա սղոյթակ չապիկ ունէր հազին, որ այնպէս բռնում նրա թուխ դէմքին: Ամէնից զարմանալին նրա փողկապն էր (եւ առաջին անգամ էի տեսնում մի փողկապ), որը երեւի տիկին Հռիփսիմէն կաւրել էր հարսների եւ սղոյթիկների համար իր կարած հազուադէպ մնացորդներից: Ա՛յ, փողկապն ամէն դոյն ունէր իր վրայ, լայն էր ու երկար: Մեր այս օրերը այսպէս կոչուած ըԼԱՅԻՍՅԵՐՆ են կրում նման փողկապներ: Մեր վարժապետը երբեք է՛լ չափ էր նեղում այդ փողկապից, որովհետեւ միշտ իր ցուցամատը մտցնում էր իր վզի եւ փողկապի արանքը, ոնքում էր եւ աշխատում էր չնչել առատօրէն: Փոխուել էին նաեւ մեր վարժապետի կօշիկները: Թէ՛ն եւ այդ կօշիկները չափ մեծ էին մեր վարժապետի համար (թերեւ տիկին Հռիփսիմէի նախկին սովորեալ կօշիկներն էին), բայց բաւական նոր էին եւ այլեւս մեր վարժապետի ոտերը չպիտի թրջուէին:

Նա դասարան մտաւ շատ չփոթուած: Թւում էր, որ նա շատ մեղաւոր էր ըզրում իրեն մեր նկատմամբ: Ուղեց հարթել այդ եւ ճառ ասեց.

— Տղաներ (նա մեր դասարանի աղջիկներին էլ տղայ էր անուանում), արդաներ, — ասաց նա, — տեսնում էք եւ շատ եմ փոխուել (այստեղ նա ձեռքը զըռնել իր փառաւոր փողկապին), դեհ, ինչ արած, կեանքն առաջ է դնում, մենք էլ կեանքի հետ: Կեանքը պահանջում է, որ ամէն մարդ եւ կին ամուսնանան: Դուք էլ պիտի ամուսնանաք, երբ մեծանաք: Փախուտ չկայ: . . . Իսկ երէկ ամուսնանալ տիկին Հռիփսիմէի հետ. . . : Նա լաւ էին է. . . : Խնդրում եմ ներէք ինձ. . . : չեմ ուզում զատի անցնենք:

✽

Մեր վարժապետը երեւի մի երեսուն տարեկան կար: Հասակով նա տնջան բարձր չէր եւ շատ նիհար էր (երեւի չուտեց): Բայց նրան կարելի էր գեղեցիկ տղամարդ համարել: Թուխ դէմք ունէր, ճշմարիտ դիմագծեր եւ շատ մտածկուն ու թախծոտ-թախծոտ աչքեր: Նրա հասցում-կապուտը շատ անշուք էր: Միշտ նույն ասքառը եւ նույն բանկոնը, արոնք թէ՛ եւ չէ՛ն քրքրուել, բայց ժամանակն էր, որ նետուէին: Բանկոնի առկից մէկն էր բան էր հազում, որի ինչ լինելը եւ մինչեւ վերջ էլ չկարողացայ ճշդել: Ամէնից խեղճ նրա կօշիկներն էին, որոնք հնութիւնից ծածուկ էին, ծակ-ծրկուել եւ կարծում եմ, որ դրանք ներբաններ չունէին: Նրա ձախ ձեռքի ափը միշտ փաթաթուած էր մի լաթով: Նրա մուպին ասում էին, որ նա Հայաստանի թրքական մասից է: Այդ բանը եւ չէի կարողանում բացատրել, ինչքան էլ զօռ էի տալիս երեսակայութեան: Մեր դպրոցը ծխակոն էր եւ երկրասեան: Որպէսզի շարական կառավարութիւնը չփակէ մեր դպրոցը, սղօտային աւտամեկան խորհուրդը վճռել էր, որ մեզ չծառնեցնեն Հայաստանի աշխարհադուրեան եւ Հայոց պատմութեան հետ: Հաջկի եւ Բելի պատմութեանց բացի, մենք ուրիշ բան չպետէինք:

Եւ շատ էի սիրում մեր վարժապետին: Եւ նրա նման մի մարդու դեռ չեմ հանդիպել: Նա շատ համեստ էր ևւ շատ էլ ամաչկոտ: Նա ամաչում էր նախակ մեզինց, աշակերտներինց: Մեր նախկին վարժապետը, որին ցարական իշխանութիւնները բռնեցին-տարան սրպէս յեղափոխականի, երբեմն-երբեմն ձեռք էր բարձրացնում մեր փրայ, վարժապետ Բախանէսը՝ ոչ:

— Աշոտ, դատդ պատմիր, — մի առ շաներտի խնայարում էր վարժապետ Ռոֆանէսը:

Աշոտը զգուշացնում էր, որ երբեք ունից եւ շուտ կանգնում: Վարժապետ Ռոֆանէսը մօտենում էր նրան եւ շուտ նրա մազերը:

— Այնտեղ, սիրելիս, ես տեսնում եմ, որ դու դասդ չես պատրաստել։ Այդ երեւի քո ծնողները երէկ քեզ դաշտ էին տարել եւ դու ժամաակ չես ունեցել դասդ պատրաստելու։

— Հա, ուրախանում էր Աշոտը, որ վարժապետը խօսք է դնում իր բերանը։

— Դեհ, հիմա նստի՛ր։ Ես յոյս ունեմ, որ վաղուայ գասդ կը պատրաստես։

— Հա։

Եւ այդպէս շարունակ։ Ես շտեռայ, որ նա մի անգամ բարկանար, որ աշակերտը դասը չի պատրաստել։



Մեր վարժապետի անցեալի մասին, մեր գիւղացիները շատ բաներ էին պատմում, բայց ամէնից ճիշդը հայրս գիտէր։ Նրա անցեալի մասին։ Հայրս մեր դպրոցի հողաբարձուններից մէկն էր։ Երբ ազգային իշխանութիւնները վճռում են մեր գիւղի ուղարկել Յովհաննէսին, նրանք հօրս քաղաք են կանոււմ, որ նա գնայ ապագայ ուսուցչին մեր գիւղը բերի։ Հայրս քաղաք է գնում եւ աշտեղ ազգային իշխանութիւնները հօրս յայտնում են, թէ ով է Յովհաննէսը։

Վարժապետ Յովհաննէսի անունն ասմանէն էլ Յովհաննէս չի եղել, այլ՝ Կայծակ։ Ազգային իշխանութիւնները նրա անունը փոխել են, նրա հետքը կորցրելու համար։

Կայծակը քան տարեկանին յիշափութական է դառնում եւ Հայաստանի թըրքական մասի իրենց շրջանում հայերի մէջ բոլորստոյթիւն է քարոզում բնոյզմ թըքական իշխանութիւններին։ Մէկ անգամ նոյնիսկ տասն է եղել։

«Ես այդ շուք սուլթանին պիտի ստակեցնեմ»։

Թըքական ժանդարմները Կայծակին բռնում են եւ բանտ տանում։ Այդտեղ նրանք Կայծակին անլուր շարժարանքի են ենթարկում եւ անվերջօրէն ծեծում։ Մի օր էլ շատ ծեծուկուց յետոյ, ուշաթափ ընկնում է բանտի յատակին։ Ընկնելու

ժամանակ, անկախ իրենից, նրա ձախ ձեռքը երկարում է յատակի վրայ, ձեռքի ափը վերեւ։

Թուրք մի ժանդարմ, որը իր կօշիկներէ կրունկների տակ գտնուէր է ունեցել, տեսնելով Կայծակի երկարած ձեռքը, եւ բաց ափը, կարծելով, թէ այդ իրենց զուհի աջ ձեռքն է (թուրքերը աջ ու ձախը չեն կարողանում միմեանցից զանազանել) կրունկը կոխում է Կայծակի ափի վրայ եւ սկսում է տրորել։

— Այո հայր իր այդ ձեռքով է ցանկացել մեր սուլթանին տպանել, — ասել է թուրքը եւ տրորել է ու տրորել բանտարկեալի ափը։

Կայծակի ձախ ափը էլ չի լսանում եւ այդպէս էլ միշտ կապուած մնում։

Մի գիշեր, բանտարկեալները բանտի պատը ծակում են եւ փախչում, Կայծակն էլ նրանց հետ։ Մեծ նեղութիւններ կրելուց յետոյ, Կայծակը գալիս—հասնում է Հայաստանի ուսական մասը եւ գնում—ներկայանում ազգային մարմիններին։ Նրանք, որ արդէն նրա մասին լսել էին, պատուապարում են, անուն փոխում եւ որպէս վարժապետ մեր գիւղի ուղարկում։

— Վարժապետ Յովհաննէսը կտրիճ աղայ է, — մի օր ընթերցի ժամանակ ասաց հայրս եւ անմիջապէս զղջաց իր ասածի համար, քանի որ ապահովութեան համար մեր վարժապետը պէտք էր խեղճ երեւար, այլ ոչ թէ կտրիճ։

— Այն՝ որ ասացի, մեր բակի պատերից դուրս չպիտի դայ, — մերոնց ազգաբարեց հայրս։



Մեր դպրոցն ազգային էր։ Այդ նշանակում էր, որ գիւղը կամ աշակերտների ծնողները պէտք է հողային դպրոցի ծախսերը եւ վճարէին ուսուցչի աշխատաւարձը։ Թարական կառավարութիւնը մի կուպէկ անգամ չէր տալիս դպրոցի բարձրութեան համար։ Դրա հակառակը, ցարական կառավարութիւնն ամէն ինչ անում էր, որ անանկանան հայկական դպրոցները եւ փակուեն։ Սակայն հայերը

կայի էին իրենց դպրոցներին եւ ամէն ջանք թափում էին՝ մի կերպ պահելու Համար դրանք։

Մի կերպ։ Մեր դպրոցն էլ պահւում էր մի կերպ՝ ի հաշիւ մեր վարժապետի աշխատավարձի։ Հայրս, որ դպրոցի իւր-նամակայնորդից մէկն էր, գիւղամիջում միշտ առում էր։

— Հայն՛ր, մեր վարժապետին մենք տոմած ենք պահում, սոված։ Օգնեցէք դպրոցին, ով ինչքան կարող է։

Սակայն օգնութիւնն անշնան էր։ Գիւղացիները ցանկանում էին օգնել, բայց իրենք էլ չուէին։

Ամէն կիրակի մայրս քիչ մը տւելի համեղ կերակուրներ էր եփում, եւ հայրս ինձ կարգադրում էր, որ գնամ վարժապետին մեր տունը հրաւիրեմ։ Վարժապետն այդ ժամին պատկած էր լինում իր թախտի վրայ, ծածկուած իր հնամաշ վերարկուով։ Այդ վերարկուն նրա համար նաեւ վերմակի տեղ էր ծառայում։

Եւ մտնում էի նրա խուցը եւ գլուխը թափաքեցնում էի նրա ուսը։

— Պարոն վարժապետ, պարոն վարժապետ...

Նա բացում էր աչքերը եւ ժպտում։

— Ի՞նչ կայ։

— Հայրս քեզ ճաշ է կանչում։

— Մայրդ համեղ բանե՞ր է եփել։

— Այո։

— Գինի էլ կա՞յ...

— Հա։

— Գնանք, գնանք։

Մեր տնեցիները նրան հարազատի պէս էին ընդունում։ Նա էլ իրեն հարազատի պէս էր դրում։ Կերակուրը հազիւ ուտելուց Բայց հայրս բռնում էր նրա թեւից։

— Յովհաննէս, մէկ-մէկ հատ խը-մենք, որ մեր ախորժակները բացուեն։

Մէկ բաժակը դառնում էր երկու եւ յետոյ տասը։ Նա սիրում էր խմել։ Երբ խմում էր՝ արիւնջ էր դառնում։ Ժպիտ էր դալիս դէմքին։ Սկսում էր երգել եւ քանի որ յեղափոխական երգերը վտանգաւոր էին, երգում էր քաղաքացիական երգեր։

Բծիշկ, մի ասա տեսնեմ,

Թէ այս գեղեցկուհին
Ինչի՞ց է հիւստա՞նդ։

Կամ՝

Գիշերն անցաւ, բուն յունեմ,
Իմ տեսնողը կտրծում է, քէ
Տուն չտեսնեմ...

Կամ էլ՝

Այգում բուսած միտակ ես,
Պարտեզում երգող սոխակ ես...

Վարժապետ Յովհաննէսի տոնական ձայնը անկեղծ էր եւ տաք։ Նրա ձայնում լսում էր թրթրո, կարօտ եւ տիրութիւն։ Երբ նա դադարում էր երգելուց, նրա մեկամաղձոտ աչքերը թացանում էին։

Մի անգամ, երբ ես սպասարկում էի սփռուցի շուրջը նստած հօրս եւ վարժապետին, հայրս բռնեց վերջինի վերաւոր ձեռքը եւ ասաց։

— Յովհաննէս, ամէն անգամ, երբ տեսնում եմ քո այդ ցաւացող ձեռքը, սիրտս մղկտում է...

Վարժապետը ձեռքը հանեց հօրս ձեռքից եւ ասաց։

— Տիգրան, ի՞մ ձեռքի ցաւը ուտելի մի հատիկի չափ մի բան է մեր աղղի բերաւոր ցաւերի մէջ...

— Խմենք մեր աղղի եւ մեր հերոսների կենացը, որոնց մէջ գտնուած ես դու, — ասաց հայրս։

— Խմենք, Տիգրան։ Բայց յանուն ճշմարտութեան ասեմ, որ ես հերոս չեմ։ Ես ոչինչ չեմ արել մեր աղղի համար, բացի այն բանից, որ թուրքը խոշտանդել է ինձ։ Դեհ, ինչ արած։ Թուրքը՝ թուրք է։

Սակայն հայրս մեր վարժապետին յամառօրէն հերոս էր համարում, որովհետեւ երբ գնացել էր քաղաքից նրան մեր չիղը բերելու, ազգային իշխանութիւնները նրան ասել էին. «Տիգրան, քեզ պահե՛ք տալիս մեր ազգային հերոսներից մէկին»։

✽

Մեր վարժապետի եւ տիկին Հռիփ-սիմէի ամուսնութեանից յետոյ, հայրս

այլևս վարժապետին մեր տունը չէր կանչում, պատճառաբանելով, թէ Հռիփ-ոսիմէն էլ նրա հետ կը գայ: Նա այդ կը-նով չէր սիրում եւ ընայած մօրս եւ մեծ մօրս կ'ըստարանքներին, նրան վճուկ էր անուանում:

Թուժ էր, թէ սկզբում մեր վարժապետի եւ Հռիփոսիմէի ամուսնութիւնը աս-հուն էր անցնում, բայց յետոյ սկսուե-ցին խօսակցութիւնները: Տղամարդիկ ի-րենց բամբասանքներն ունէին, կանայք՝ իրենց: Թէ ինչ էր կատարւում տիկին Հռիփոսիմէի իրմիթում, փաստօրէն ոչ ոք ոչինչ չգիտէր: Արտաքուստ նկատւում էր, որ վարժապետը նեղւում է իր կնո-ջից:

Բանն այն էր, որ կարուհին իր ամուսնուն մենակ չէր թողնում: Հարսա-նիքներին, կնուէրներին նա նստում էր, ոչ թէ կանանց շարքում, ինչպէս որ ըն-դունուած էր, այլ նստում էր ամուսնու կողքին, տղամարդկանց շարքում: Յե-տոյ՝ իրեն հանդիսաւ չէր պահում: Տղա-մարդկանց հետ բաժակ էր բռնում: Խան-զափաւում էր, երնում էր ոտքի եւ ան-կապ-անկապ ճառեր ասում: Պահանջում էր, որ դիւղացիները վճարեն իրենց պարտքերը դողոցին: Բոլորի ներկայու-թեամբ վարժապետին դիտողութիւններ էր անում: Թեւեղ ժիլից թաշկինակ էր հանում եւ արքում մեր վարժապետի ե-րեւը, այնպէս՝ որ կարծես մեր վարժապետը երկխոյս լինէր: Մեր վարժապետը, որ շատ ամաչկոտ մարդ էր, նեղւում էր կնոջ այդ արարքներէն եւ տեղնուտեղը հալւում, մայրում էր: Խօսք կար, որ կը-ռիւ կար նաեւ Շուշանիկի պատճառով: Մեր վարժապետը, որ հարազատ հօր պէս կապուել էր Շուշանիկին, չէր կարողա-նում հանդուրժել, որ տիկին Հռիփոսիմէն աղջկայ հետ գէշ էր վարւում: Ասում էին, որ նոյնիսկ ծեծում է հեղ աղջկան: Մէկ օր, մեր վարժապետը պաղ էր առել եւ հիւանդացի էր: Շուշանիկը եկաւ եւ մեզ ասաց, որ մենք տուն գնանք, որ հայրը հիւանդ է: Բայց հազիւ էինք մենք մեր դրքերը հաւաքել, երբ ներս մտաւ տիկին Հռիփոսիմէն՝ մի երկար քանոն ձեռքին, ու-րով նա հարսներ էւ աղջիկներէ հասակ-

ներն էր չափում՝ հագուստ կարելու հա-մար:



— Ուրախացել էիք, որ պիտի տուն գնաք, հա՛, — բարկացած խօսեց նա, — եւ ձեզ տուն գնալը հիմա ցոյց կը տա՞մ: Վարժապետը հիւանդացի է, այսօր եւ եւ մեր վարժուհին: Ես եմ մեզ դատա-լու...

Եւ նա սկսեց մեզ զգաստ տալ: Այ-սինքն՝ իր երկար քանոնով հարուածել մեր ձեռքերին: Մեր տնեցիները մեզ՝ ե-րեսաներիս չէին ծեծում եւ Հռիփոսիմէի տրածը ինձ վայրենիութիւն էր թւում: Առանց պատճառի նա ծեծում էր Շուշա-նիկին: Ինձ թւում էր, որ աստիճանին ունէր դէպի այդ լուսկեաց աղջիկը:

— Շուշանիկ, ոտքի կանգնիր: Շուշանիկը ոտքի էր կանգնում վախ-մբիւրով:

— Պարզիր աջ ափդ: Շուշանիկը մի կերպ երկարացնում էր իր դողողացող ձեռքը:

Տիկին Հռիփոսիմէն քանոնով անխնայ հարուածում էր Շուշանիկի փոքրիկ ա-փին: Շուշանիկը ձայն չէր հանում, մի-այն արտասոււմ էր:

— Հիմա պարզիր ձախ ափդ: Եւ այդպէս, նա երեք անգամ հա-րածեց Շուշանիկի արդէն իսկ հարուած-ներէն կտրմբած ափերին:

Մտ ուզում էի փախել տուն գնալ, բայց փախնում էի, որ նա իր քանոնով հարուածի իմ դիւրին: Դատարանն ահա-րեկուել էր: Տիկին Հռիփոսիմէն շարու-նակում էր իր զղասաւանդումը, երբ դատարանի գուռը բացուեց եւ ներս մտաւ մեր վարժապետը: Մենք բոլորս ուրա-խութեան ճիւղ արձակեցինք:

— Ի՞նչ ես անում այստեղ, Հռիփ-ոսիմէ՛, — հարցրեց մեր վարժապետը շատ խիստ:

— Իսկ դո՛ւ ինչ ես անում այստեղ, հիւանդ մարդ, — հարցրեց մեր զվարժու-հին:

— Ինչո՞ւ ես այդ քանոնը բերել քեզ հետ:

— Երեխաներին դառ տալու համար :
Վարժապետը մօտեցաւ Շուշանիկին,
բռնեց նրա երկու փոքրիկ ձեռքերը եւ
զննեց : Շուշանիկի ականքը կարծես էին
եւ ուռել : Վարժապետը զուստուեց,
դարձաւ դառարանին եւ հարցրեց .

— Էլ ո՞ւմ է ծնծել այս կինը :

Թուր նրանք, որոնք ծնծուել էին,
յիւր բարձրացրին իրենց ձեռքերը :

— Ինչո՞ւ ես արել այդ դաժանու-
թիւնը :— հարցրեց վարժապետը :

— Ես այդպէս եմ հասկանում ժան-
կաւարժութիւնը :

— Դու որտեղի՞ց մանկավարժ դա-
ռար :

— Ես Գոյանեան օրիորդաց դըպ-
րոցն եմ աւարտել :

— Դու մի մարա՞գ անդամ չես ա-
ւարտել : Հեռացի՛ր այստեղից :— մատը
դէպի դասարանի դուռը պարզեց մեր
վարժապետը :

— Դո՛ւ պէտք է զնառ աշատելից :
Դու հրաւոր ես :— հակառակեց Հռիփ-
սիմէն :

— Եթէ չզնառ աշատելից, ես ստիպ-
ւած կը լինեմ աւագ խնամակալին կան-
չել տալ եւ նրա միջոցով քեզ դուրս անել
տալ դատարանից :— սպառնաց մեր վար-
ժապետը :

Քսաթը հօրս էր վերաբերում, իսկ
սիկինն Հռիփսիմէն վախենում էր հօրի-
որս, որովհետեւ գիտէր, որ հայրս իրեն
չէր սիրում : Երբ նա մեր տունն էր գա-
լիս, եւ երբ հօրս տեսնուէր, անմիջա-
պէս հեռանում էր :

Հռիփսիմէն միթմրթալով դուրս գը-
նաց դասարանից : Նրա գնալուց յետոյ,
մեր վարժապետը դարձաւ եւ մեզից նե-
րողութիւն խնդրեց . սեղի ունեցածներին
համար, ապա ասաց, որ մենք տուն գը-
նանք եւ փողը դպրոց գանք, քանի որ նա
իրեն լուս կը դրայ վաղը : Նա ինձ խնդ-
րեց, որ Շուշանիկին այդ գիշեր մեզ մօտ
տանեմ : Ես հասկացայ, որ նա այդ գի-
շեր կուսկուսէ Հռիփսիմէնի հետ եւ չի
ուզում, որ Շուշանիկը ներկայ գտնուի
այդ կուսկին :

Մեր տնոցիները մեզ՝ երեխաներիս
արգիլել էին տնից լուր տանել դուրսը եւ
գրեթէ տուն բերել : Բայց չգիմացայ եւ

մօրս պատմեցի Հռիփսիմէնի տրարքի մա-
րին, եւ ցոյց տուեցի Շուշանիկի ուսած
ու կտրմբած ափերը :

Մայրս զարհուրեց :

— Այդ ի՞նչ է արել այդ վհուկը այս
երեխայի հետ :— բացադանչեց նա եւ ար-
տասուեց :

Նանս մօտեցաւ, զննեց Շուշանիկի
ափերը, մօրս կարգադրեց մածուն քօնել,
փաթաթել եւ պառկեցնել քնելու : Երե-
կոյան, ընթրիքի ժամանակ, մեր տնե-
ցիներէ խօսքի միակ նիւթերը եղան տիկին
Հռիփսիմէն եւ Շուշանիկի ափերը : Շու-
շանիկը չէր կարողանում դաւալ բռնել,
ուստի՝ մայրս էր կերակրում նրան : Փոքր
հօրեղբայրս, որ մի պատանի էր, չգի-
մացաւ այդ տեսարանին, ընթրիքը կի-
սատ թողեց եւ ելաւ տեղից : Երբ նրան
հարցրին, թէ ո՞ւր է նա գնում, նա ա-
սաց, որ գնում է այդ վհուկին զոսաց
տալու : Նրան բռնեցին, չթողեցին եւ բա-
ցատրեցին, որ մի տղամարդ չի կարող
մի կնոջ ծնծել, ինչքան էլ որ գէշ լինի
այդ կինը : Այդ օրուանից, մայրս փոխեց
իր վերաբերմունքը տիկին Հռիփսիմէնի
նկատմամբ :

✽

Անցաւ մի քանի օր : Առաւօտեան
Շուշանիկը դպրոց ձկաւ առանց դրձերէ
եւ ասաց, որ մենք տուն գնանք, քանի որ
հայրս քաղաք է գնացել եւ դպրոց չի լի-
նելու, իսկ ինքը տէրտէրանց տղաների
հետ գնաց նրանց տունը : Նոյն օրը, գիւ-
ղում լուր տարածուեց, որ մեր վարժա-
պետը փախել է եւ տիկին Հռիփսիմէն
գնացել է նրան փնտախու : Տանը հայրս
ոչինչ չխօսեց այդ մասին :

Երեք օր յետոյ, երբ մենք՝ աշա-
կերտներս մեր դպրոցի բակում խաղում
էինք, եկան տիկին Հռիփսիմէն եւ մեր
վարժապետը : Տիկին Հռիփսիմէն առջե-
ւից, իսկ մեր վարժապետը՝ նրա յետե-
ւից, դիմելու : Տիկին Հռիփսիմէն մի
ծալուած հովանոց էր դրել իր ուսին,
ինչպէս մի գինուոր, որ կրում է իր հրա-
յանը պահակութեան ժամանակ : Նա շատ
յաղթակաւ տեսք ունէր : Հասնելով մեզ,

տիկին Հովհաննիսյան կանգնեց, դարձաւ մեր վարժապետին եւ, իր հովանոցի ծայրով մեզ ցոյց տալով՝ ասաց յանդիմանական.

— Վարժապետ Յովհաննիսյան, ինչպէ՞ս դու կարող էիր այս երեխաներից փախչել...

— Վաղը դպրոց եկէ՛ք, — ասաց մեր վարժապետը, — առանց տիկին Հովհաննիսյան յանդիմանութեան վրայ ուշադրութիւն դարձնելու:

Միւս օրը, դատարանում մեր վարժապետը մեզ բարեւելուց յետոյ իր հայեացքը շրջեցրեց մեր վրայով, ապա դուրսէն վար բերեց եւ մի պահ մտածելուց յետոյ, նորից գլուխը բարձրացրեց:

— Տղաներ, — ասաց նա, — երէկ տիկին Հովհաննիսյան ասաց, որ ես փախել էի ձեզնից: Այդ ճիշդ չէ: Ինչպէ՞ս ես կարող էի փախչել ձեզնից, երբ ես ձեզ սիրում եմ իմ զաւակներէ պէս...: Լաւ, ասանք ես փախել էի ձեզնից, բայց ինչպէ՞ս ես կարող էի փախչել Շուշանիկից, իմ աղջկանից...:

❦

Գարուն էր արդէն: Օդն ու հողը տաքացել էին: Մեր դպրոցը փակեցին, որպէսզի մենք կարողանանք մեր ծնողներին օգնել դաշտում:

Մեր դպրոցը փակուելուց երկու օր յետոյ, Շուշանիկի ձեռքը բռնած՝ մեզ մօտ եկաւ վարժապետ Յովհաննիսյան: Նա Շուշանիկին յանձնեց մօրս, իսկ ինքն առանձնացաւ հօրս հետ: Նրանք երկար խօսեցին: Յետոյ՝ նա մեր բոլոր տենցիներին ձեռք տուեց եւ ասաց, որ ինքը մի հետու տեղ է դնում: Համբուրեց Շուշանիկին եւ դնաց: Հայրս դնաց նրան ճանապարհ դնելու:

Երբ հայրս վերադարձաւ՝ մերոնց ասաց, որ վարժապետը խեղդել է, որ Շուշանիկն այսուհետեւ մեզ մօտ ապրի, նրան շփեցաւ արձանի այդ վիշակին:

Երեկոյան, տիկին Հովհաննիսյան եկաւ մեզ մօտ եւ, Շուշանիկին տեսնելով՝ ասաց.

— Ախ, դու այստե՞ղ ես: Ես քեզ եւ չօրդ էի փնտրում: Ո՛րք է հայրդ: Շուշանիկը իր երեւար ուսերը վեր հանեց:

— Լաւ, — ասաց տիկին Հովհաննիսյան, — դառնալով մօրս՝ ասաց, — Սաթեհիկ, մի երկու օր այդ աղջկան պահէ՛ք, մինչեւ ես այդ վարժապետին գտնեմ ետ բերեմ...:

Մի քանի օրից յետոյ, երբ մենք ամբողջ բնտանիքով ընթրում էինք մեր բակի թթենու տակ, մեր բակը ակաւ տիկին Հովհաննիսյան յոգնած եւ բարկացած:

— Այդ վարժապետին չկարողացայ գտնել, — ասաց նա մերոնց եւ դիմեց Շուշանիկին, — դնանք, աղջիկ:

Շուշանիկը փաթաթուեց մօրս վզով եւ մի բան ասաց նրա ականջին:

— Շուշանիկը չի ուզում այլեւս ապրել քեզ հետ, — ասաց մայրս:

— Ինչպէ՞ս թէ...

— Այ՛, ուզում:

— Ես նրան չուզեիլ ցոյց կը տամ, — լատ բարկացաւ տիկին Հովհաննիսյան եւ, մօտենալով սփռոցին՝ ուզեց բռնել աղջիկայ ձեռքից եւ զօրով տանել:

Մայրս ոտքի կանգնեց եւ երկու ձեռքով Շուշանիկի գլուխը օղակեց իրեն:

— Հետո՛ւ միւս եւ ձեռք մի՛ տուր աղջկան:

— Բայց նա իմ աղջիկն է, — վարանեց տիկին Հովհաննիսյան:

— Նա հիմա մե՛ր աղջիկն է:

— Իմ աղջիկը ձե՞ր աղջիկն է...

— Այո:

— Այդ ի՞նչ օրէնք է:

— Դու երեխային ծնծում ես եւ ընդհանրապէս մատ ես պահում նրան, — վէճին խառնուեց նախ:

— Երեխային կարելի է եւ սիրել, եւ ծնծել, Լիթէ պէտք է, — ասաց տիկին Հովհաննիսյան:

— Դու այդ երեխային այլեւս ես չես ստանայ, — կտրուկ ասաց նախ:

— Տիպրան, քո մօրը եւ կնոջը բացատրիր, որ նրանք ճիշդ չեն, — հօրս զմեզ տիկին Հովհաննիսյան հօրս զպարոն Տիպրան չէր անուանում, որովհետեւ հայրս դիպացի էր:

— Նրանք ճիշդ են: Դու այդ երե-

իւային ալիւս չես ստանայ,— ասաց հայրս շատ հանգիստ։

— Ես էջմիաթին կը դնամ։ Ես Ամենայն Հայոց Հայրապետի մօտ գանգատի կը դնամ,— սպառնաց տիկին Հռիփսիմէն։

— Ամենայն Հայոց Հայրապետը քեզ չի լսի, քանի որ հենց ինքը, հայրապետը հրաման է դրել, որ այն հայ ծնողները, որոնք իրենց զաւակներէ հետ գէշ են վարուում, այդպիսիներէջ նրանց զաւակները վերցնել եւ ուրիշ ծնողներէ յանձնել,— իրենից այդ օրէնքը յօրինեց հայրս։

— Ուր է այդ օրէնքը, ցոյց տուր,— պահանջեց տիկին Հռիփսիմէն։

— Գնա՛ տէր հօրը հարցրու,— պատահանեց հայրս։

Տիկին Հռիփսիմէն թեւոցի միջից մի թաշկինակ հանեց եւ տարաւ ուղեւորին։ Յետոյ՝ ուղաւարտէքներ կարգաւորվ թողեց եւ դնաց։

— Ես խղճում եմ այդ կնոջը,— ասաց փոքր հօրեղբայրս, նա, որը մի օր ուզում էր դնալ եւ տիկին Հռիփսիմէին մի «լաւ դաս տալ»։

— Ամենեւին մի՛ խղճա նրան,— ասաց հայրս,— նրա լացը սուտ էր։

— Մի՛ ասա, Տիգրան։ Կին է, չէ՞,— ասաց նախ։

— Այ՛ մէր, նա կին չէ, այլ՝ մի վըհուկ,— ասաց հայրս։

Յետոյ՝ նա մերոնց ասաց, որ տիկին Հռիփսիմէն ամենեւին էլ Եռլանիկին հարազատ մայր չէ։ Եռլանիկը այդ կնոջ առաջին ամուսնու աղջիկն է։ Տիկին Հռիփսիմէն Եռլանիկի հարազատ մօրը քչել է տուել եւ ինքն է ամուսնացել Եռլանիկի հօր հետ, որը վերջում տնից փախել է՝ Եռլանիկին թողնելով տիկին Հըրիփսիմէին։

Մի քանի օր յետոյ, տիկին Հռիփսիմէն մի օայլ վարձեց եւ իր ունեցած չունեցածը բարձել տուեց սայլի վրայ եւ հեռացաւ մեր գիւղից։ Մինչեւ իր մեկնումը, նա եկաւ մեզ մօտ Եռլանիկին ողջ լիւր ասելու, բայց Եռլանիկը փախաւ եւ թաքնուեց։ Տիկին Հռիփսիմէն հառաչեց եւ հեռացաւ։

Այսպիսով, Եռլանիկը դարձաւ մեր

տան աղջիկը՝ իմ քոյրը։ Կամաց-կամաց նա սկսեց կազդուրուել։ Նրա դէմքին ժողովրդական, ծիծաղ։ Մայրս մի զարմանալի ջերմութեամբ էր կապուել նրա հետ։ Դեռ աւելին։ Ես կարծում եմ, որ մայրս նրան աւելի շատ էր սիրում, քան մեզ, մեր տան միւս երեխաներին։ Ամէն ջրակի Եռլանիկի համար կարմիր կըտորից նոր հագուստ էր կարւում, իսկ մենք, միւս երեխաները միշտ էլ չէր, որ ունենում էինք։ Մայրս մեզ՝ երախաներու չէր, չամէն, փշտո, ընկալք բաժանելու գէղարում, առաջին եւ մեծ քաժինը Եռլանիկին էր տալիս։ Իր հերթին, երբ Եռլանիկը փաթաթւում էր մօրս վզով՝ էլ չէր ուզում բաժանուել, մինչեւ որ մայրս նրան զգուշութեամբ հեռացնում էր իրենից՝ առելով։

— Աղջիկս, մենք գործ ունենք ասելու։

✱

Ամբողջ մեր գիւղացիները մեր նախկին դասարանին կից մի նոր դասարան կառուցեցին երրորդ կարգի համար։ Այդ նոր սենեակի թարմ ներկի հոտը մինչեւ հիմա էլ զեռ զգում եմ։

Մեր վարժապետը է՛լ չփերազարձաւ... Նրա փոխարէն մի ուրիշը եկաւ իր կնոջ, մօտ իմ տարիքի իր աղջկայ եւ սղայի հետ։ Նրանք թէեւ մեզից տասը տարեկան աւելի շատ բան դիտէին, բայց ինձ հետ չափարում էին նորարաց երրորդ դասարանում։

Այդ օրերին էր, որ Վասիլի միւս կողմից գիւղ վերադարձաւ մեր գիւղացի երիտասարդ «յեղափոխական Սիմոնը»։ Նրա վերադարձը գաղտնի էին պահում, որովհետեւ, եթէ ռուս ոստիկանները իմանային, կը գային նրան ձերբակալելու։ Նա փնտրում էր ոստիկանութեան կողմից։ Սիմոնը վերադարձել էր եւ նրան ամէն պիշեք մի ուրիշ տուն էին փոխադրում։

Մեր գիւղի շները ռուս ոստիկան սահանելուց՝ մի ուրիշ տեսակ էին հա-

ջում, մանաւանդ գիշեր ժամանակ: Նա-
հրա տառն էր:

— Ես երբ ուռաւարի են հաջում,
ուրեմը, գիւղում ուտիկան կայ:

Այդպիսի գէպերում մեր օթեանն
պատից հանում էին ձկնառաւիժ Թաղա-
րի Թաղումբն, Վալր հայառաւիժն եւ
նրեմեան Հայրիկի նկարները ու ծալում
եւ պահում: Յեղափոխական Սիմոնի վե-
րադարձից յետոյ, մեր շները շատ էին
ուռաւարի եղանակով հաջում, իսկ ուռ-
առաւիժները չէին կարողանում Սիմո-
նին գտնել:

Մի օր, Սիմոնը հօրա կանչել տուեց
իր մօտ: Հայրս գնաց եւ շատ ուշացաւ:
Մեր բոլոր տնեցիներն արդէն քնել էին,
բացի մօրիցս եւ իմենց: Մայրս ճրագի
լոյսի տակ կարկատան էր անում, իսկ ես
կարդում էի «Բարիկամ Կրուգոյն», որը
մեր նոր ուսուցչի աղջիկը՝ Արեւիկն էր
ինձ տուել ընթերցելու: Գիշերը պատկե-
րապարզ էր եւ ես այն կարդում էի ազա-
հաբար: Թէեւ կարդալուստիցս շատ բան
չէի հասկանում, բայց կարդում էի ու
կարդում: Այդ գիշերը մի նոր աշխարհ էր
բացել ինձ համար: Բորենյան Կրուգոյի
հայերէն թարգմանութեամբ էլ ես սիրե-
ցի գրականութիւնը եւ այն ինձ համար
դարձրի հաց ու ջրի պէս մի բան:

Վերջապէս եկաւ հայրս: Նա նստեց
Թախտի եզրին եւ, դառնալով դէպի մայ-
րը՝ ասաց խղուած ձայնով.

— Վարժապետ Յովհաննէսը ապան-
ւել է...

— Վա՛յ... — ճշաց մայրս եւ ցըն-
ցումից ասեղով ծակեց մատը: Ես վեր
թռայ տեղիցս եւ սկսեցի լաց լինել բարձ-
րաձայն: Հայրս նոյնպէս հնկեկաց: Այդ
երկրորդ անգամն էր, որ ես տեսնում էի
հօրս լացը: Առաջին անգամ նա լաց ե-
ղաւ, երբ մահացաւ իմ փոքր եղբայրը,
երեք տարեկան Պետիկը: Իմ բարձրա-
ձայն լացի վրայ մեր տնեցիներից մի քա-
նիսն արթնացան, եկան լրջապատեցին
մեզ: Հայրս նրանց էլ յայտնեց վարժա-
պետ Յովհաննէսի ապանման բօթը: Ա-
մէնքն սկսեցին արտասուել: Հայրս պատ-
մեց, թէ ինչպէս է տեղի ունեցել դէպքը:

Մեր մօտից հեռանալով, վարժապետ
Յովհաննէսը նորից դնացել է Վախտի

միւս կողմը: Այդտեղ նրան հայդուկնե-
լի մի ութ հոգինոց խումբ են տուել վա-
րկու: Այդ խմբում է եղել նաեւ յեղա-
փոխական Սիմոնը: Ըմբոսանքի աշ-
խումբը սկզբում ապրել է յեռնբրի ծեր-
պերում: Մի օր, նրանց մօտ է դալիս
դաշտի գիւղերից մէկի մի գիւղացի եւ
զանգառաւ, թէ քրդերը եւ թուրքերը
շատ են նեղութիւն պատճառում իրենց
գիւղին, թէ՛ իրենք անպէս են եւ չեն կա-
րողանում պաշտպանուել: Գիւղացին օգ-
նութիւն է խնդրում պաշտպանուելու հա-
մար: Վարժապետ Յովհաննէսը գիւղա-
ցուն ճանապարհ է դնում եւ խոստանում
է իր խմբով գալ եւ պաշտպանել գիւղը:
Գիւղացիները նրանց յատկացնում են
դիպի ծայրում գտնուող մի մարազ եւ
այնտեղ հաւաքում ուտելիքների մի մեծ
պաշար: Վարժապետ Յովհաննէսը իր
խմբի հետ գիւղերով դալիս է հայկական
ալպ գիւղը եւ բանակում պատրաստուած
մարազում: Միւս օրը, հայդուկները քը-
շում են թուրք երկու ժանդարմների, ու-
րանք դիպին էին մահել եւ բռնութիւններ
դուրժարում հայ գիւղացիների վրայ: Եւ
այդպէս մի քանի անգամ: Հայ ժողովրդի
կեղեքիչները շուտով հասկանում են, որ
հայկական այդ գիւղը պաշտպանուած է,
որ իրենք այնչաւ չեն կարող շարունակել
իրենց ապստամբութիւնները: Դրանով
միասին, նրանք զգում են, որ հայկական
այդ գիւղում յեղափոխականներ կան: Մի
գիշեր թրքական մի վաշտ ծածկարէն դա-
լիս է եւ պաշարում մարազը: Թուրքերը
պահանջում են, որ հայդուկները անձնա-
տուր լինեն: Նրանց պահանջին ի պատա-
խան, հայ ըմբոսները մարազի պատե-
լի մէջ բացուած անցքերից կրակ են քա-
ցում թուրքերի վրայ: Սկսում է հրա-
յանաձուլութիւն կողմերի միջեւ, որ եր-
կար է տեսնու: Այդ ժամանակամիջոցում
թուրքերին յաջողում է հրդեհել մարա-
զը: Վարժապետ Յովհաննէսը տեսնում
է, որ իր տղաները կա՛մ պէտք է դուրս
դան մարազից եւ մնան թրքական կրակի
տարափի տակ, կամ էլ մնան մարազի
բացերում: Բայց նա վճռում է, որ տղա-
ները մէկմէկ դուրս դան մարազից, ոչ-
տուրելով խիտ մութից՝ առողակելով անց-
նեն թշնամու լղթան եւ անյայտանա:

Այդպէս էլ լինում է: Հայդուկներէջ ետ-
թը յաջողապէս անցնում են թշնամու-
շիքան եւ գնում են լեռները: Մարազում
մնում են վարժապետ Յովհաննէսը եւ յե-
ղափոխական Սիմոնը:

— Առյու տալու հերթը հիմա քոնն է,
— Սիմոնին ասում է վարժապետը:

— Ոչ: Ես կը մնամ քեզ հետ կամ էլ
դու կը գնաս: յետոյ ես, — ասում է Սի-
մոնը:

Սակայն մարազում մնալ այլևս ան-
հնար էր: Այրուող խոտի, յարդի եւ գե-
րանների կծու ծուխը շնչահեղձ էր անում
նրանց, խոկ բոցը՝ այրում: Նրանք մա-
րադից դուրս են դալիս եւ պատի տակ
գիթք բանում: Այդտեղ նրանք շարունա-
կում են կրակել: Այդտեղ Սիմոնը ծան-
րապէս վիրաւորում է աջ ուսից եւ այլ-
եւս չի կարողանում կրակել:

— Հեռացիր, — նրան հրամայում է
վարժապետ Յովհաննէսը:

— Իսկ դո՞ւ, — հարցնում է Սիմոնը:

— Ես պէտք է մնամ ու կրակեմ՝
թշնամուն դառն պահելու համար, — բա-
ցատրում է մեր վարժապետը:

Սիմոնը պատրաստում է հեռանա-
լու, բայց նոյն վայրկեանին վարժապե-
տի կողմից հառաչանք է լսում: Նա
շրջում է եւ տեսնում, որ վարժապետ
Յովհաննէսը սպանուել է: Թշնամու զըն-
դակը մտել էր նրա սիրտը...

✽

Ես այդ չեմ յիշում, բայց մայրս
պատմում էր, որ ես երկար ժամանակ լաց
եմ եղել իմ վարժապետի համար: Ես լաց
եմ եղել ուսանելու, խաղի ժամանակ: Ես
լաց եմ եղել դատարանում, դատ պատ-
րաստելու ժամանակ եւ քնիս մէջ:

— Վարժապետ... Վարժապետ...
— աղաղակել եմ ես:

Սակայն մինչեւ հիմա էլ ականջումս
հնչում է նրա տաք, տխուր ու մեղածաղ-
ձոտ ձայնը, երբ երգում էր՝

Սիրուն ազգիկ, ինձ մի սիրիր,
Քո աչքն ի գուր կը կորչի,
Ես գնում եմ կռիւ մղեմ
Յամաւն սերին մեր ազգի...

✽

Շուշանիկը մեր՝ տան Երեխաներիս
բերանով, հօրս հայրիկ էր անուանում:
Ինքը նա նաեւ հայր էր անուանում վար-
ժապետ Յովհաննէսին: Նա չգիտէր նրա
սրտածուխան մասին:

— Կարօտել եմ, շատ եմ կարօտել
հօրս, — երբեմն ասում էր նա:

Աշնան մի օր, Շուշանիկի հետ նրա-
տել էինք մեր բակի դրան կողքին նետ-
ւած մի գերանի վրայ եւ տաքանում էինք
տաքել տակ, երբ նորից խօսեց վարժա-
պետ Յովհաննէսի մասին:

— Գիտե՞ս ինչ, — ասաց նա մանկա-
կան հաւատամքով, — ասում են, որ մար-
դիկ կան, որ սովորական մարդիկ չեն:
Նրանք երկնքից են դալիս, մի ժամանակ
սպրում են մարդկանց հետ եւ յետոյ
թողնում հեռանում...: Ես կարծում եմ,
որ հայրս սովորական մարդ չէր...:
Հր՞, ինչ ես ասում...:

Նրա ասածը գիւտ էր ինձ համար:
Ես մտածեցի, մտածեցի եւ ասացի լա-
ցակումս:

— Այո, սովորական մարդ չէր մեր
վարժապետը:

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Մ. ԵՈՒՐՍԸՆԱՐ



գրամասնագետներին ու կրթիչներին և մեծ համայնքներին:

Մարկիթ Եսկուրյան, որին գրչին էր պատկանի վերին խոսքը, առաջին կին գրողն է, որ առաջին անգամ էր հայտնի Թուրքիայի համայնքին:

Ստորին Թուրքիայի պատմական ժամանակահատված է Վրնիկյան նորավեպերը (Կալիֆոր, 1938) հատորին, որ ծանոթ է յոթ բանաստեղծ Անարե Լ. Ամպերիսին:

Վրնիկյան նորավեպերը ընթերցողը կը գտնուի բանաստեղծական ուրույն մթնոլորտի մեջ ներս, որ այնքան նման է Հին ու Հիսուսին զգուշացի մը նրբին ու խորհրդուն մեկ ժամանակ:

Վրնիկյան նորավեպերը Վարդ Կարապետյանի մատուցած խորագրերով գրութիւնը ծնունդն է գրագիտունին զմանե ցանկութեամբ արժանաւորութեան, որուն սկզբնաւորը պահանջը եղած է ընթերցողին գրականութեան յաւանքը քաղաքացիին մեկ անկիւնը պահուողը գրողին ժամանակ մը համարիլ անունը:

Արժանի բանաստեղծութեան սեփական զգացք միջնորդութեամբ, Մարկիթ Եսկուրյանի նորավեպերը ընթերցողը կը տանին Յունաստանի միջին Զինաստան ու ճափոն, ստեղծելով լայն տարածք մը, վաւերական եւ զգուշ, որ կու տայ երաժշտական շերտին կրօնի մը զգայուն եւ տարաշխարհիկ հայեցող, ուր իրականութեանը կ'ըլլայ երազ ու միջոց, ծնունդ իրա եւ, միաժամանակ, տաք այն լեզուն, որ կը յայտնէ այս աշխարհին մէջ բոլորն եւ ներքինացնէ միշտ բնականաւոր Եսկուրյանի կիբը՝ անկեղծ, զգուշ:

Շ. Տ.

ԾԻԾԵՆՆԱԿՆԵՐՈՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՄԱՏՈՒՈՇ

Թերաբիոն վանականը իր երկատարգմտութեան եղած էր Մեծն Աթանասի տմէնէն ուղղափառ աշակերտը. ան բուն էր, խոսակրօն, քաղցր հանդէպ այն արարածներուն միայն, որոնց մէջ չէր կռահած դեւերու ներկայութիւնը: Եղիպտոսի մէջ, ան վերաբարուցած ու աւետարանած էր մոմիաներ. Բիւզանդիոնի մէջ խոստովանեցուցած էր կայսրեր. եկած էր Յունաստան՝ թելադրուած երազի մը հաւատքէն, սատանայէն ձերբազատելու այն հողը, որ տակաւին ենթակայ կը մնար Պանի շարադիւթութեանց: Ատելութեամբ կը հրահրուէր ի տես այն սուրբ ծառերուն, ուր տենդէ բունուած գիւղացիներ կը կախեն ջուրջներ, որոնց պաշտօնն է իրենց տեղ դողալ գիշերային նըւազագային հողմին դէմ, ի տես դաշտերուն մէջ կոթողուած այն Փայլիւսնեբուն՝ ստիպելու հողը, որ կը բերքեր եւ այն կաւային շատուածներուն՝

որմախորշ՝ պատերու խոռոչներուն եւ ակնադրիւրհերու խեցեփողերուն մէջ։ Իր ձեռքով իրեն համար կառուցաներ էր նեղլիկ հիւղակ մը, Սէֆիդի դարափոխներուն վրայ, ջանալով գործածել ժխան օրհնուած շինանիւթեր։ Գեղջուկները քրեն հեռ կը բաժնէին իրենց ցամաք հացը, բայց թէպէտ անոնք աղօթոյն էին, փոխու եւ յուսարեկ պատահած սովերէն ու պատերազմներէն, Թերաքին շէր յաջողէր զիրենց դարձնել դէպի երկինք։ Կը պաշտէին Յիսուսը, որդի Մարիամի, ոսկեգօծուած նման ծագող արեւի մը, բայց իրենց յամառամիտ սիրտը հաստատրիմ կը մնար այն յատուածներուն, որոնք կը պահուրտին ծառերուն մէջ կամ կը ցայտին ջուրերու եռացումէն։ Ամէն գիշեր, Յաւերժաւորներուն նուիրադործուած սօսիին տակ, անոնք կը գետնադէին աման մը լեցուն իրենց մնացած միակ այծին կաթէն. մանչերը, կէսօրուան, կը սահէին ծառախումբերուն ներքեւ՝ լրտեսելու եղեղնաքարի ալքերով այգ կիները, որոնք կը անանին ծոթերնով ու մեղրով։ Ամէնուրեք կը վխտային անոնք՝ դուտարները այդ կարծր եւ չոր հողին, ուր ամէն ինչ, որ այլուր կը ցրուի իրբեւ գլուխը, կը կերպարանափոխուի ու կը մարմնաւորուի։ Թրենց հետքերը կարելի էր գտնել աղբիւրներու կաւին մէջ, եւ անոնց մարմիններուն ճերմակութիւնը հեռուէն կը նոյնանար ժայռերու ցայտման հետ։ Մինչեւ իսկ կը պատահէր, որ հարուածուած Յաւերժաւոր մը վերապրէր՝ ստեղծելով տանիք մը հաստատ պահող ու գէշ յգիւտած գերանին մէջ, եւ գիշերը կը լսէին գինք, որ կ'ողորար կամ կ'երգէր։ Ամէն օր գրեթէ, դիւթուած արջառ մը լիւրան մէջ կը կորսուէր եւ ամիսներ ետք միայն անկէ կը գտնուէր ոսկորներու փոքր կոյտ մը։ Զարքերը կը բռնէին անտուկները իրենց ձեռքէն ու կը տանէին դանոնք պարելու վիհերու երկին՝ անոնց թևթև ոտքերը շէնքի դպչեր քրկրին, բայց անդամաւոր կը կորցէր ծանր ու փոքր մարմինները։ Եւ կամ՝ երիտառարդ մանչ մը, ինքզինք նետած անոնց ոտնահետքերուն վրայ՝ ետ կ'իջնէր շնչապառ, գողգողալով սենդէն, խած ըլլալով մահը՝ աղբիւրի մէջ ջուրին հետ։ Ամէն տղէտէ ետք, Թերաքին արեղան բռնուցքը ցոյց կու տար անտառներուն, ուր կը պահուրտէին Անիծեալները, բայց գեղջուկները կը շարունակէին սիրել գրեթէ անտեսանելի այդ Թարմ պարկերները եւ կը ներէին իրենց շարիքները, ինչպէս կը ներեն արեւուն՝ որ կ'անջատէ խեղճերուն ուղեղը, լուսնակին՝ որ կը ծծէ քուն մտած մայրերու կաթը, սիրոյն՝ որ կը տառապեցնէ այնչափ։

Վանականը կ'երկնջէր անոնցմէ իրբեւ էզ գայլերու խումբէ մը եւ անոնք կը մտահոգէին զինք՝ կարծես աղիճներու հօտ մը ըլլային։ Այս արտառոց գեղեցիկները երբեք զինք հանգիստ չէին թողուր։ Գիշերը, իր երեսին վրայ կը զգար անոնց տաք շունչը՝ նման կիսա-ընտանի անասունի մը շունչին, որ անհամարձակ կը թափառի սենեակին մէջ։ Եթէ նետէր ինքզինք դաւառ մը՝ իրեն հետ ունենալով հիւանդի մը յետաթողակը, իր ձեռքէն կը լլուսէր անոնց երիտասարդ այծի քմահաճ ու դողահար գնացքին արձագանգը։ Եթէ պատահէր, անկախ իր հիդերէն, որ քնանար աղօթքի պահուն, անոնք կու գային անմեղօրէն քաշկուտել իր մօրուքը։ Ձէին փորձեր զիւթել զինք՝ քանի որ տեղը կը գտնէին, ծիծաղալարժ ու շատ ծեր իր հասար եւ թուի խորճերուն մէջ, եւ հակառակ իրենց գեղեցկութեան, անոնք եւս վանականին մէջ չէին արթնցներ որեւէ սղատոր ցանկութիւն, քանզի անոնց մերկութիւնը վարչանք կը պատճառէր իրեն՝ նման սրդի մը տեղոյն միտին կամ անթոյն օձի մը ողորկ մարթին։ Սակայն կը փորձէին զինք, քանի որ վանականները կը սկսէր կասկածել Աստուծոյ իմաստութեան վրայ, որ ստեղծած է այնքան անօգուտ եւ վնասակար արարածներ, կարծես արարչադործութիւնը ըլլար շարամիա խաղ մը միայն, ուր կը հրճուէր ինք։ Աւտու մը, գեղջուկները զինք գտան՝ Յաւերժաւորներու սօսին ողորկեով սրաղած, ու արտաք-

ցան կրկնակի, քանի որ մէկ կողմէ կը խրաչէին պարիկներու վրէժխնդրութենէն, որոնք պիտի երթային՝ իրենց հետ տանելով բոլոր աղբիւրները եւ, միւս կողմէ՝ ծառը շուք կու տար այն բացատին, ուր ռովորումին ունէին հասարակելու եւ պարելու։ Բայց չմեղադրեցին սուրբ մարդը, վախճարով փնտրեցին Հօրը հետ, որ երկինքն է եւ որ կու տայ անմեղ եւ արեւ։ Կոնցին, ու Յաւերժահարեբուն գէժ Թերաբիոն վանականի ծրագիրները քաջալերանցան այդ լուսութենէն։

Այլեւս դուրս կ'ելլէր միշտ՝ իր թեզանիքի ծալքին մէջ զազանաբար պահելով երկու կայծքար, եւ գիշերը, խորհարար, երբ շնկատէր սեւէ գեղջուկ ամայի դաշտին մէջ, կրակի կու տար կոնդը հնազարեան միթների մը, ուր, կը թուէր իրեն, կը պահուէր զիցուհիներ, կամ երիտասարդ եւ թեփառած շուն մը, որուն խէժը կը թափէր օսկիէ արցունքներ։ Մերկ կերպարանք մը կը փախէր թաւաւէն եւ կը վազէր միանալ իր ընկերուհիներուն, անշարժացած հետուն՝ նման անարեկուած եղնիկին, եւ սուրբ վանականը կը հրճուէր՝ քանդելով Զարի օրջերէն մէկը։ Ամէնուրեք կը ցցէր խաչեր, եւ երիտասարդ ու տառաւածային անասունները կ'առանձնանային, փախչելով այս վտեմ կախազանի շուքէն, սրբացած գիւղին շուրջ ձգելով լուսութեան ու մեղութեան միջոց ընդարձակուող գոտի մը։ Բայց պայքարը կը շարունակուէր քայլ առ քայլ տառջին դատիթափերուն վրայ լերան, որ ինքզինք կը պաշտպանէր օգնութեամբ փշտոտ որմենիներուն եւ քարէջներուն, ուր աւելի դժուար է որսալ շատուածները։ Վերջապէս, չըջապատուած աղօթքով ու կրակով, դաշկացած մատաղի ու ձօնի պակասէն, գրկուած սէրէն այն օրէն ի վեր, երբ գիւղի երիտասարդները սկսած էին մոռնալ գիւրենք, Յաւերժահարեբուն ազատանանցան ամայի մարալի մը մէջ, ուր քանի մը սեւ կաղնիներ՝ ցուած կաւային հողին մէջ՝ կը յիշեցնէին մեծ թռչուններ, որոնք իրենց զօրեղ ճիւղներուն մէջ կը հաւաքեն կարմիր հողը ու կը շարժեն երկինքին ներքեւ իրենց արծուի փետուրներուն հազարաւոր ու նուրբ խայթերը։ Հոն ծորացող անձեւ քարերու գէղեբուն ներքեւ աղբիւրները շատ պաղ էին՝ դրանելու համար լուսադարձութիւնն ու խաշնարածները։ Գարայր մը կը բացուէր բլուրի մը կողմէն, ուր կարելի էր հասնիլ միայն գետաբերանէն՝ հազիւ այն քան մը լայն, որ անցք բանար միակ մարմնի մը։ Հիշէն, Յաւերժահարեբուն հոն կը քաշուէին այն գիւղերէն, երբ փոթորիկը կը խանդարէր իրենց խաղերը, քանի որ կը սարսափէին կայծակէն, նման անտառի բոլոր անասուններուն, եւ հոն է, որ կը քնանային անլուսին գիշերներուն։ Երիտասարդ ճատաղներ կը յաւակնէին սահած բլլալ մինչեւ այդ քարայրը իրենց կեանքի դնով եւ հօգուսթեամբ իրենց երիտասարդութեան, ու չէին յազենար խօսել այն մեղմ մարմիններէն՝ հազիւ տեսանելի թարմ խաւարներու մէջ, եւ այն վարներէն՝ աւելի զգացուած, քան չօղափուած։ Թերաբիոն վանականին համար, ժայռի մը կողմէն ծածկուած այդ քարայրը կը նմանէր իր իսկ կուրծքին մէջ մխրճուած քաղցկեղի մը, եւ ոտքի, հովիտի շեմին, ձեռքերը բարձրացուցած, լման ժամեր անշարժ, կ'աղօթէր երկինքին, որպէսզի օգնէ իրեն՝ քանդելու աստուածներու ցիւղէն սերած այս վտանգաւոր միտցողացը։

Զատիկէն քիչ ետք, վանականը գիշեր մը հաւաքեց իր ամէնէն հաւատարմներն ու ամէնէն զօրաւորները ծուխներուն։ Զինեց զանոնք բրդէնեղով եւ լամբարներով, ինք առաւ խաչափայտը ու առաջնորդեց հովիտներու բարձրներէն, մեղկ խաւարներուն մէջ աւելի լեցուն, անձկոտ եւ ուզելով օգտուել այս մութ գիշերէն։ Թերաբիոն վանականը կանգնեցաւ քարայրի սեւ մին ու թոյլ շուռաւ իր հաւատարմներուն հոն մտնել, վախճարով, որ կը փորձուին։ Անթափանց մթութեան մէջ, կը լսուէր աղբիւրներու կարկաշտը։

Տկար ձայն մը կը տրոփէր, նման անտառներու մեղմ զեփուտին. ան շունչն էր քուն մտած Յաւերժահարսերուն, որոնք կ'երազէին աշխարհի երիտասարդութեան օրերէն, ա'յն ժամանակէն, երբ ժարգը գոյութիւն չունէր տակուսին եւ ուր հողը կը ծնէր ծառերը, անտառները ու շատուածները միայն: Գեղջուկները վառեցին հսկայ կրակ մը, բայց պէտք եղաւ հրաժարիլ քարայրի վառելէ: Վանականը հրաժայեց դառն պատրաստիւ, քարեր կրել: Լուսաբացին, սկսեր էին շինութիւնը փոքրիկ մատրան մը՝ գուգուած բլրան կողին, անիծեալ քարայրի գետաբերանին դիմաց: Պատերը շորցած չէին, տանիքը պատրաստ չէր, եւ դուռը կը պակսէր, բայց Թերաքիոն վանականը գիտէր, որ Յաւերժահարսերը պիտի շփոթէին փախչիլ այս սուրբ վայրէն, որ արդէն նուիրադրոժուած էր ու օրհնուած: Յաւելեալ ապահովութեան համար, մատրան խորքը, հոն՝ ուր կը բացուէր ժայռաբերանը, ցցած էր հսկայ Գլորիատոս մը՝ դժուած չորս հասարակապի քառաթեւի մը վրայ, եւ Յաւերժահարսերը, որոնք միայն ժպիտները կը ճանչնան՝ կը փախչէին սարսափահար Թաշեալին այս պատկերին դիմաց: Արեւու առաջին ու երկրորդ ճառագայթները կ'երկարէին քարանձաւի շեմին. այս այն ժամն էր, երբ խեղճերը սովորութիւն ունէին դուրս գալ՝ առնելու համար մօտակալ ծառերու տերեւներուն վրայէն ցօղի իրենց առաջին նախաճաշը: Կալանաւորները կը հեծկրլտային, կ'ազդերտէին վանականին, որպէսզի օգնէ իրենց եւ, ամենգօրէն, կը խոստանային «իրելի դինք, եթէ ձգէր, որ փախչին: Ամբողջ օրը, զործերը շարունակուեցան, եւ մինչեւ դիշեր արցունքներ թափուեցան քարէն, լուսնոյն հագեր եւ խուլ ճիւղեր՝ նման վերաւոր անտառներու կոկիծին: Յաջորդ օրը, ծածկը աւարտած էր ու զարգարուած ծաղկեպունջով մը, դուռը յարդարուեցաւ ու կղպանքին մէջ զարձաւ երկաթէ մեծ բանալին: Այդ գիշեր, յոգնած գեղջուկները իջան գիւղ, բայց Թերաքիոն վանականը պատկեցաւ մօտիկը մատուռին, որ կառուցուած էր, բայց ամբողջ գիշերուան տեւողութեան, իր կալանաւորութիւններուն դաւադարները արգելեցին իրեն ջնախալ: Այլ կարեկցող էր, քանզի կը մեղմանար ոտնակոխ որդի մը դիմաց կամ ծաղիկի մը ցօղունին, որ կտարուած էր իր սքեմին պատճառաւ: Բայց նման էր ժարգու մը, որ կը հրճուի՝ երկու աղիւններու միջեւ հիւսած ըլլալով երիտասարդ իծերու բոյն մը:

Յաջորդ օրը, գեղջուկները բերին կրաջուրը ու ներկեցին մատուռը, որ նմանեցաւ ճերմակ աղանձի մը՝ ամփոփուած ժայռի կուրծքին: Երկու քաջազուն գեղջուկներ մօտէն մինչեւ քարայրին ներքը՝ ճերմկցնելու համար անոր խոնաւ ու ծակոտէն ներքնապատկերը, որպէսզի աղբիւրներու ջուրերն ու մեղուններու մեղրը զազրին ծորելէ գէպի գեղեցիկ այրին ներսերը՝ առաւել եւս մաշեցնելու համար կին-պարիկներու ուժաւորութեան կեանքը: Յաւերժահարսերը՝ տկարացած՝ շունչէն ուժը ներկայանալու մարդոց. կիտամութիւն մէջ, հոս թէ հոն, հաղիւ կարելի էր տարածօրէն գուշակել պրկուած թարմ բերան մը, երկու խախուտ ու աղաչող ձեռքեր կամ կուրծքի մը ստորոտ վարդաղաղներ: Կամ, երբեմն, իրենց մեծ ու կրաջուրէն ճերմկած մատները պաշտօնընելով ժայռի անհարթութիւններուն վրայ, գեղջուկները կը զգային փախուստը ճկուն ու զոդողապին վարսերու՝ նման այն մալաւանակներուն, որոնք կ'աճէին լճուած ու խոնաւ վայրերուն մէջ: Յաւերժահարսերու պարսառուն մարմինը կը տարբարազարուէր շոգիի կամ կը պատրաստուէր փոշիանալու՝ նման ճեռած թիթեռնիկի մը թռկերուն. կը հեծեծէին միշտ, բայց պէտք էր ուշադիր աչանլ լարել՝ յսելու համար այդ ահար զգաւանքները: Այլեւս Յաւերժահարսերու հոգիներն էին միայն, որ կու լային:

Յաջորդ գիշերը, Թերաքիոն վանականը պահակութիւն ըրաւ ու աղօթքի մատրան սեմին, նման անապատական մենակեացի մը: Կը հրճուէր՝ մը-

տաճեցով, որ նոր լուսնէն առաջ Հեծեծանքները այլեւս դադարած ու Յաւեր-
ժաւարները սովորաբար մեծապէս յիշատակ մը պիտի ըլլա-
յին: Կ'աղօթէր՝ արագացնելու համար այն վայրկեանը, երբ մահը պիտի ա-
զատագրէր իր կալանաւորները, քանի որ կը սկսէր խղճալ անոնց ու կարծես
յանցաւոր կը զգար ինքզինք այս ամօթայի տկարութեան տոջեւ: Այլեւս մարդ
չէր մօտենար իրեն, գիւղը կը թուէր իրեն այնչափ հեռու, որչափ եթէ դո-
յութիւն աւնեցած ըլլար աշխարհի միւս հզերքը: Հովիտին գէճ մանուկման
պտնուող դառիթափին վրայ կը տեսնէր միայն կարմիր հող, շոգիններ եւ ա-
րահատ մը՝ կիսածածկ ու ոսկեգոծ ասեղներու ներքեւ: Հոգիները կը լսէր
միայն, որոնք կը նուագէին միշտ, ու յարատեւ խղուած ձայնը՝ իր իսկ ա-
զօթքին:

Այդ օրուան գիշերը, արահատին վրայ տեսաւ կին մը, որ կու գար իր
կողմը: Կը քաշէր գլուխը հախ, քիչ մը կ'աւելար. վերարկուն ու վզնոցը սեւ էին,
բայց խոշոր դաւաճ լուսաւորութիւն մը կ'երեւար այս մութ կերպարին ընդմէ-
ջէն, այնպէս՝ որ կարծես կինը ինք սփռած ըլլար առաւօտը գիշերուան վրան:
Ի՞նչէւ շատ երիտաւորդ՝ ան ունէր լըջութիւնը, դանդաղութիւնն ու արժանա-
պատուութիւնը շատ ծեր կնոջ, ու իր քաղցրութիւնը նման էր հասած ողոր-
դին եւ անուշահոտուած ծաղիկին: Մատուռին առջեւէն անցնելով՝ ուշադրու-
թեամբ դիտեց վանահայրը, որ խանդարունցաւ իր աղօթքներուն մէջ:

— Այս արահատը տեղ չի տանիր, կ'ի՛ն, — ըսաւ ան, — ուրկէ՞ կու գաս:
— Արեւելքէն, ինչպէս առաւօտը, — ըսաւ երիտաւորդ կինը, — եւ
դուն ի՞նչ կ'ընէս հոս, ծեր վանական:

— Այս քարայրին մէջ պատեցի Յաւերժաւարները, որ կ'ապականէին
ամբողջ երկիրը, — ըսաւ վանականը, — եւ քարայրի բացուածքին կառուցեցի
մատուռ մը, որպէսզի չ'ամարձակին փախչել, քանզի մերկ են եւ, իրենց ձե-
ւով, կ'երկնչին Աստուծոյ: Կը սպասեմ, որ մեռնին անթոթեմէն ու պաղէն
իրենց քարանձաւին մէջ. այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը պիտի տիրէ
այս դաշտերուն վրայ:

— Ո՞վ կ'ընէ քեզի, որ Աստուծոյ խաղաղութիւնը չի հասնիր Յաւեր-
ժաւարներուն, ինչպէս եղնիկներուն եւ այծերու հօտերուն, — պատասխանեց
երիտաւորդ կինը, — չե՞ս գիտեր արդեօք, որ արարչապետութեան ժա-
մանակ Աստուած ժողջաւ թեւեր տալ որոշ հրեշտակներու, որոնք ինչպէս այս
հողին վրայ, ու քնակութիւն հաստատեցին անտառներուն մէջ, ստեղծելով
զարմը Յաւերժաւարներուն ու Պաներուն: Եւ ուրիշներ բնակեցան լեռան մը
վրայ, ուր եղան ողիմպիական առտուածներ: Մի՞ փառաւորներ, Հեթանոսնե-
րուն նման, ստեղծուածը ի մնաւ Ստեղծիչին, բայց մի՞ զայթակղիր նաեւ
իր գործով: Ու սրտիդ մէջ շնորհակալ եղիւր Աստուծոյ, քանի որ ստեղծեց
Տիանան ու Ապողոնը:

— Հոգիս չ'ըլլեր այնչափ բարձր, — խոնարհ խօսեցաւ ծեր վանակա-
նը: — Յաւերժաւարները կը խանդարեն իմ հօտս ու կը վտանգեն անոնց
փրկութիւնը, հաւ թէ ինչու պանոնք պիտի հալածեմ, ի հարկին, մինչեւ
Դոմիք:

— Ու այս փոյթը կը վարձատրուի, պարկեշտ վանական, — ըսաւ ժըպ-
տելով երիտաւորդ կինը, — բայց չե՞ս տեսներ Յաւերժաւարներու կեանքը,
ու հօտիդ փրկութիւնը հաշտեցնելու միջոց մը:

Իր ձայնը մեղմ էր՝ սրինգի մը հնչունին պէս: Մտահոգ՝ վանականը հա-
կեց գլուխը: Երիտաւորդ կինը ձեռքը դրաւ տնոր ուսին եւ լըջութեամբ ը-
սաւ.

— Վանական, ձգէ որ մտնեմ այս քարանձաւը: Կը սիրեմ քարայրնե-
րը ու կը խղճամ անոնց, որոնք հոն կ'ապաստանին: Քարայրի մը մէջ ծնայ

զաւակա՞ն ու քարայրի մը մէջ է, որ զինք յանձնեցի մահուան, որպէսզի ընդունի երկրորդ ծնունդը Յարութեան:

Մենակեացը քաշուեցաւ, որպէսզի կինը անցնի: Անվարան՝ ան ուղղութեամբ զէպի մուտքը քարայրին, պահուեցաւ խորանին ետեւ: Մեծ խաչը կը փակէր անոր մուտքը: Հեռացուց զայն մեղմութեամբ, ինչպէս ընտանի տարկայ մը ու սահեցաւ քարայրէն ներս:

Խաւարին մէջ լռուեցան աւելի սաստիկ հեծեծանքներ, ճռուողիւններ եւ կարծեա մեղմ թեւարտումներ: Մանկամարդ կինը կը խօսէր Յաւերթաւարներուն՝ անծանօթ լեզուով մը, որ թուշնեւորունն էր եւ հրեշտակներուն: Վայրկեան մը ետք, ան երեւցաւ վանականին, որ շէր դադրած աղօթելէ:

— Տե՛ս, վանական,— ըսաւ,— եւ մոթ'կ ըրէ:

Փոքրիկ ու սուր անհամար ճշտցներ կ'ելլէին իր վերարկուն: Բացաւ անոր ծալքերը եւ թերաբին վանականը տեսաւ, որ հազուապէս ծալքերուն մէջ կը կրէր հարկւրտուր երիտասարդ ծիծեռնակներ: Կինը լայն բացաւ ձեռքերը, նման աղօթող կնոջ մը, ու թռիչք տուաւ անոնց: Ապա ըսաւ, ու ձայն փր պայծառ էր՝ քնարի մը ձայնին պէս.

— Գացէ՛ք, զաւակներս:

Ծիծեռնակները, ազատագրուած, հեռացան գիշերային երկինքին մէջ, իրենց կտուցով ու թևով զծելով անվերծանելի նշաններ: Մերունին եւ երիտասարդ կինը վայրկեան մը նայուածքով հետեւեցան անոնց, ետքը ճամբորդուհին ըսաւ մենակեացին.

— Պիտի վերադառնան ամէն տարի ու դուն զիրենք պիտի պատուարես իմ էկեղեցիիս մէջ: Մնաս բարով, Թերաբին:

Ու Մարիամ դնաց այն արահետով, որ երբեք չի յանգիր, կնոջ մը նըման, որուն հոգը չէ, թէ ճամբաները վերջ մը կ'ունենան, քանզի զիտէ ձեւը երկինքին մէջ փայլու: Թերաբին վանականը իջաւ գիւղ եւ, յաջորդ տաւուօտուն, երբ բարձրացաւ Պատարագը մատուցանելու, Յաւերթաւարներու քարայրը զարդարուած էր ծիծեռնակներու բոյներով: Անոնք ամէն տարի վերադարձան. կու գային ու կ'երթային եկեղեցիին մէջ, սնուցանելով զբաղած իրենց ձագերը կամ ամբացնելու կաւէ իրենց քնակարանները. եւ յաճախ Թերաբին վանականը կ'ընդմիջէր իր աղօթքները՝ խանդաղատանքով հետեւելու անոնց ոչրերուն ու խաղերուն, որովհետեւ այն՝ ինչ որ արգելուած է Յաւերթաւարներուն, արտօնեալ է ծիծեռնակներուն:

ՄԱՐԿՐԻԹ ԵՈՒԲԱՆԵԱՐ

Թարգմանեց՝ ՇՈՒՇԻԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ԻՄ ԽԵՆԹՈՒԹԵԱՆ՝ ՔՈՒ ՎԱԽԻ՜...

Եկար, հոգի, եւ զարմացար,
Որ զայրուստդ դէմքիս ժպիտ չքերաւ,
Ու վշտահար՝ մեկնեցար...

Այնպէս՝ ինչպէս չշուացայ իմ գայում՝
Հեռացումդ ալ ռզջունեցի ցրտութեամբ,
Եւ չզգացիր, ի հարկէ,
Թէ քայլերուդ հետ քարդ տուիր ծուէններմ իմ քիչերում:

Ձեռակցար, սիրելիս, որ երբ կու գամ
Այդքան դիրքիմ, այդքան պարզ,
Խորտակումը կ'ըլլայ այսպէս երկուստեք:

Եւ երբ անա ես կամօք
Կօրունք կ'մ քեզ արդէն
Կրկնակոյս պիտ' հետեւիմ քեզ կրկին
Ու անբուժ շաղկերտմ մէջ Պէյրութի՝
Պիտի ի սպառ հալածեմ քեզ, իմ աղաւթ,
Իմ յարանում տառապանքով մուսնելու համար քեզ՝
Այնքան կարօտ իմ խեղճութեան՝ իմ վախիդ...

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

Թ. ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Մինչ տարիները կը քալեն, մենք չենք յիշերք: Ըսել կ'ուզե՞մ՝ փոքր-փոքր կ'ընկնուած զգայութիւնները աննշմար կը զրուազուիին մեր ներքը ու չենք անդրադառնար, թէ ինչպէ՞ս հակասեր ենք մենք մեզի, տաննամեակի մը ծայրին: Սահակ Պարգեւեանին մէջ ա՛ր համբով կատարուեցաւ այս աշխարհութիւնը: Մանուկէն, Սոնային ե՛րբ խուփիչ մարմին մը պտտիլ առաւ անոր աշխարհը առջեւ: Ժամանակը կը նմանի պարտքի: Ձայն վճարելի տոմսերու վերածելու յիմարութիւնը: Ամէնքս ալ կ'ընենք ստիկոս, չխղդուելու համար: Կը ձգեմ շատ քան, հասնելու համար ժամանակի ուրիշ տախտակի մը, որուն մէջ մեծատաղանդ արձակագիրը ինքզինքը կը տեսնէր դաշնամուրեան տեւիքին առջեւ: Ամէն ինչ՝ մաղ, մորթ, հով, հայնացք, տարօրէն նման թիկնաթոռեան բողէներուն: Ամէն ինչ՝ անոր մօրը մանրաթիւ քայքայումէն սանկ ետ գարձող, նորէն շինուող: Ա՛յնքան՝ որ պրպկտին համար միւլթարութիւն էր մօրմէն զոռանքը — ամէն զգուանք մեր հոգիին վրայ ժանդ մըն է — փոխել քաղցր հեշտոնքի, աղջկան հմայքին ընդմէջէն: Փոխանակման այս կարելիութիւնը խրանայեց անոր ուրիշ ողորդութիւն մը: Մարդեր կան, որոնց մեռելն աղէտ կը փրթի: Ու կը փրթի անհաստատելի դիւրութեամբ: Սահակ Պարգեւեան հազար անգամ անցուց մաքէն, զգացուց բերնէն ու ձեռնակերպեց մասնեքէն այդ զանաւարին աղէտն ալ, թեւէն բռնած նեւեղու գորտն «հեղձուցիչ զանգուածը» Տիկինին: Ձրբաւ տարկա ո՛չ թէ չունեցած, չունենալիք փութէ մը ասնձուած, այլ՝ աւելի հեռու հաս փաստութեամբ մը, աղջիկէն զրկուելու վերահաս սարսափով: Վասնզի, գուցէ փութէ անանց տունը: Ա՛նչդ այդ քղկտածի մայրկեաններուն, Սոնայի կը մօտենար պրպկտին, որտեղ ու կիսաժպիտ, ու կը նայէր անոր աչքերն ի վար, անանկ քաղցրութեամբ, որ ակրն-թարթի մէջ կը լաւեալին ժանգն ու ժահրը անոր շիջերուն: Քստնէն վա՛ր, այդ անշխարհիկ ձգողութիւնը, զոր պատանութիւն մը դնու կ'ընէ իստ, կէսով փորձանուտ: Այն խուլ, անբարեկեղի համը, որ կիւնքն էր պատճառ, արպէպի մօտնային տունի լացողը, անմեանային, կ'ստնէր թեւը այդ զաղփաղփուն բանը, կ'իջնէր փողոց, քիչ մը բաց արտերը, յետոյ բուրբը՛րը: Անգլած այդ զէշերուն իստ անգթութիւն ա՛նքն էր պատճառ, որպէսզի մօտնային տունի լացողը, անմեանային, ախրէին, թեթեւային ու խօսէին անխմատ, երբեմն խոր, երբեմն ալ թթուալ բաներ, տարօրէն հանդուրժող իրարու: Գլտիկ, քիչ, փորձութեան աղէն զեռ չէրթ, Սոնային բառերը թուունի ճշողում էին անոր ականջին, որ չաղնաթափ՝ ձայներու ձեւէն՝ ինչպէ՞ս

«մարչամակէն», նախանձառ կծծութեամբ խնայեց իր ցնցուղները կրնէրէն դուրս ամէն հծծիւնի, բայց որ, աղմուկէ նեղուող ըլլալուն հակառակ, զգառնուկ ու հեզ, կը բացուէր լայն, անոր բառերուն ծիւղէն առածը, որ կ'ըսէ. «Մենք մեր հաւոյն կը հանդուրժենք ուրիշները»: Սորմած էր տարողութիւնը այդ ժողովրդական տարազին, մեծատաղանդ վերլուծողը, որ մարդոց կնճիւղները կը յաւակնէր մեկնել ապշեցուցիչ հարազատութեամբ, ու զէջերէն կը բարձրանար հոգիներուն կտուցումին: Գիտէ՞ր, թէ ինչո՞ւ կ'ընէր մտիկ:

Գահիրէի մէջ զօղը մեղաւոր է՝ կ'ըսեն: Ձեռ գիտեր կա՞յ տեղ մը, որ ըլլայ տեղաւոր անմեղ: Բայց նախորդ էջերուն մէջ տեղ մը զպահք ու անցանք նոյնան տապանի նշանակալից հեքիաթին: Պարզեւանի սո բացառիկ զգայութեանց բաւիղները իջնելէ առաջ, հարկ կը զգամ յիշեցնելու, հեքիաթին մօտիկ, զայն լրացնող ուրիշ մանրամասնութիւն մը, զոր կը պարտինք մեր մեծ գրողներէն մէկուն, Գրիգոր Նարեկացիին: Միջնադարեան ողբաօցը, իր մեղքերը ցուցակազրած աստեւ, ստիպանքին ելքը, մթնոլորտը կու տայ հոգեկան մասնաւոր վիճակի մը, քիչ մը շուշուո՞ւ, կուտակրոն ամօթխածութեան պարունակէն, երբ կրկնապէս կը խորանէ իր հոգին՝ զայն մըլտապէս Եզրիպտոս արեւելուած ներկայացնելով: Ի՞նչ ունէր յստակ, իր մտքին մէջ, մեր մաքրամաքուր բանաստեղծը, այդ աստիճան սարսափելու համար բուրդերով վեղարուած այդ հեռաւոր մեղաօտանէն, ուր կ'ինը կ'անի ցորենին նման, բայց կ'այլը խանձողին նըման: Տասը դարը անշաւտ քիչ բան է փոխած, աւազաստանին այդ խուլ խռովքէն, եթէ երբեք փոխած ալ է: Քասներորդ դարուն, Նարեկացիին, երբ անցնէր նոյն մարգերէն, ախր չի զգամ ինքզինքը ըզրեւումուն նոյն արհաւիրքէն, մենակեացի իր աշքերով տեսնելուն սա զոյգը, այդ թեւ թեւի, մեծ բուրգի ոտքին, քարի մը վրայ, իրենց մարմինները դրած քով քովի, պարզ ու քրտառուշ, տրտում ու անխաղաղ: Աւելի՞ն:

Պէ՞տք է կրկնել դժողակ հարցումը

— Պարզեւանին զգացումները աղջիկին հանդէպ:

Քաղաքը կը խօսէր լուռ: Կը խօսէր հազար ձեւերով, շրջանակէ շրջանակ, իր դատումներուն մէջ դնելով առատ տեղական գոյն ու կնիք: «Գահիրէն փոքր Անատոլիա մըն է» ըսած է մեր քանիմաց գիտողներէն մէկը: Ունին իրաւունք մարդիկ, երբ Արեւմուտքը ճանշնալէ յետոյ, իրենց ժողովուրդին համար ազգային նկարագիր ճարճըրել կը ցանկան: Մեծ ուստաններու մէջ, միջերկրականեան կիսապօտին շանցնելու պայմանով, մեր պաղթականութիւնները խնամքով կը պահպանեն ծագումի իրենց տուրքերը որոշ ժամանակ մը մինչեւ եւ կը դիմանան սկզբնական իրենց առաջինութեանց վրայ, շեշտը՝ իրենց առանձնակի կողմերէն: Ու կը դիմանան հակադիր խըմբակցութեանց պիտակով ու զուգէ միայն ասոր համար: Այնքան խո՞ր է մեր ճնշումը մեր անցնալին: Ես ճանչցեր եմ զեղեր, որոնց մէջ մոր մը տարագիր մեր բազմութիւնները դասաւորած է համաձայն այդ ձայներուն: Զուր մը կը բաժնէ դեղին ո՛չ միայն երկու թեւերը, այլեւ կը բաժնէ հոգեհոտանքը, որ ուժասպառ եկած էր իննալու այդ օտար ափերուն: Դուք մի տարուիք Պոլիսով, որուն քիչ-չատ միատարր հոգին գործէ մենէ վեր ազդակներու, ազդակներ՝ իրենց ուժին ապացոյցը տուած արդէն Լեւոնտան ու Հնդկաստան: Մեզ կոտորակող իրերամերժ մեր հակումները չկրցանք համաձուլել նոյնիսկ

հզորագոյն զղացումի մը վրայ: Հայրենիքի գաղափարն անգամ այսօր չփոթութեան տախտակ մըն է մեր հոգիին վրայ սիւնամբարձ: Ոչ մէկ ժողովուրդ այնքան խոր կ'առնէ ինքզինքը՝ իր գաւկերներուն տարբերութեանցը մէջէն: Մեր յեղափոխութիւնը վերիպեցաւ, ուրիշ սպառնաւորութիւն չարքին, դուցէ՛ հիմնականով մը, որ հաւատարի՛մ էր շատ մեր պատմութեան եւ կը կրկնէ բարքերը մեր նախարարներուն: Հայրենիքի գաղափարին համար մենք յօժարած պահուն անգամ, չկրցանք հրաժարիլ ոյդ մայնին ցուցմունքէն ու կը կռուինք դրօշակի դոյններուն վրայ: Այսօր կան մեր մէջ պարկեշտ — բաւր պործածելով առանց հեգնութեան — մարդեր, որոնք դժուար չին գտնել մեր թշնամիին հետ հաշտուելու հեռանկար մը, բայց զոց ենչ ընդ — միշտ, արեւակից եղբայրներու համար: Ու մեր գաղութները, այսօրան գարեք ետքն ալ, իրար կ'ուստեն, կ'ուսէին, մատին տակէ իրենց պապերուն:

Սահակ Պարզեւեանը մեկնութեան նիւթ է Գահիրէի բոլոր քաղաքիներուն:

Իրմիւրցիներ, շահագրգռուած, շուսյառ ու անցորդ, առաջինները՝ ինչպէս հեղինակաւորները եղան, իբր տարածիչ տարածանութեանց ու ձրի մեկնարանիչ: Պետականութեան պակասը մեր բոլոր խելքին համար պետին կ'ընծայէ բամբասանքը միայն, որուն մէջ մեզի հաւասար չեմ կարծեր կենայ ժողովուրդ: Գրազէտին մօտիկ անց — եւալը, իրմիւրեան գայթակղութիւնը, եւրոպական ոստաններէ սանկ ու նանկ մինչեւ Ափրիկէ քաշքուող շշուկներ, փշուրներ, մամուլէն ճակատաբաց յարձակում, ամէն կապանքէ: Քաղքենի ամէն սրբութենէ ինքզինքը վեր յայտարարող անոր լեզուական յոխորտանքները դորաւոր փառտեր էին ի նպաստ շրջաբերութեան հանուած փոփոխութեան: Այս հաւատարմութիւն մէջ դեր ունի, առնցժէ գաս, իր ոխերիմ լրբութիւնը, իմացապաշտ ու տոնքիւթ իր անհասանջ յարձակողականը, լրացրի բերդերէն, մեր քաղքենի դասակարգին դէմ, զոր ուրացաւ, յիշատելու չափ զայն մեր ցեղին անդադոյն տարբերէն. մեր հիմնական հարուստներուն ու վաճառականներուն, մա՛նաւանդ ազատական ասպարէզէ՝ դիւրակեցութեան ժամանոցս կեղծ մտաւորականներու վրայ հատատելով յանդուգն սկզբունքներ, ծագումի եւ արիւնի մուսլ ճամբաներէն, որոնց միջոցով ցեղը իր պատմութեան խառնակումներն ու խաչածեւումները կը թափէր դուրս, ինքզինքը գտնելու զազատ օրէնքներուն տնտալով: Ոչ մէկ արժէք: Անշուշտ: Ուարանց զայն իբր ճերկուած գերեզման, տաղաւարող՝ իր արտաքին փայլին մէջ՝ ժխտական, օտարաժուտ մեր առաքինութիւնները, նոր օրերու տեսակ մը հրեա՛յ, որ զժրախտ է օրհնուած ցեղէն, Սիոն մը իսկ չունենալուն խորն իր հոգիին: Միւս կողմէն՝ արուեստով ու ներկով — անիկա կ'ատէր այդ ամէնը ու մինչեւ իր մահը անայց մնաց այդ պոռնկութենէն — իր մոյնքին ու չիւտին մէջ գիմացող սոնական բան մը անոր անմնաւորութիւնը կ'ընէր զկանանչ, երբ դրուէր մօտիկը Տիկին Գոհարեանի հանդիմութեան դիմակարին: Ու մին այս հակադրութիւնները, հանրային իր ձեռնարկներուն մէջ, անմեկնելի, յեղիցիւն դիմաշրջումները, նիւթին, վայելքին ետեւէն անծածկելի, յայրաւա, անյապ իր արտաժանքը, բարեկամները զատելու, զանոնք նուաւատացնելու ու թշնամիի վերածելու հարցին մէջ իր ինքնատպութիւնը, ամէն ժարդ շահագործելու մէջ իր վատնած սխիւթն ու անհաւատարմութիւնը,

«կասկածելի» տեղերու մէջ, ուսումնասիրական ջնարակով դիշերով-ցերեկով իր շրջապայութիւնները բաւարար պատճառներ էին, որ-պէսզի պարկեշտ միտքերը մոլորէին դիւրութեամբ դէպի բաւիշ-ները գտնար ու գծաչի ենթադրութեանց: Խառնակ այդ քաղաքին ասարակերտ նկարագիրն ալ պակաս մեղաւոր չէ այս ամէնուն մէջ ու սեռը չ'ազդուիր ասկէ: Մշակոյթը, միշտ մակերեսային, չէ տրուած մերիններուն տարադնումի շաղախ ու ենթարկուած է պաշտօնեայ հողերանութեան: Հիմա, որ մեր միտքին կեդրոնը վերցած է Պոլսէն, Ծղերպտա՝ իր մամուլովը, զպրոցներովը, պիտի կարենայ դարմանել սղէտը, որ կատարուած է այդ գաղափարներէ մարդոց ձեռքով: Ի-րողութիւն է, որ մեր ամէնէն բարեկեցիկ զաւուրը մեր միտքին հա-մար ամէնէն անտարբերը կը դառնայ տակաւ: Ու մեր ջող գրադէտ-ներէն մէկերկուքը, իրենց անօթի գերեզմաններէն, յետ մահու մար-մարով մը երբ կը ճերմկին, փաստ չեն բերեր մեր հետզհետէ նահա-նող առաքինութեանց: Միւս կողմէն՝ մենք զարգացուցինք ուրիշ տուրքեր: Սուտն ու զրպարտութիւնը հոն կ'աճին աւելի արագ: Առ-տիճանի տարբերութիւն ի հարկէ: Ու սուտն ու առաւ երջանիկ քա-ղաքը: Ծտտեր, ստանց տեսած ըլլալուն, իրենց լուծները ուրիշին հա-ւաստեցին իրք տկճատես ու ըսին որսում բաներ: Միւս կողմէն՝ տարօրինակ զոյգին ճորդեղբաժն կենցաղն ալ ընդունակ էր այս շը-լուկները անցնելու:

Կը պտուէին անոնք թեւ թեւի, պարզ, անքան բնական, որ տեսնուր, անշուշտ տար մայրերով աշխուտ, կը սարսուար մտապառ-կերին ասեղէն: Իրողութիւն էր, որ ճշայր ու աղջկայ մտերմութիւ-նը շուռէր վախճալիք տեղէ ու անձէ: Գահիրէն, շինճու քաղաք, ու՝ քաղաք հանդիսանքի, ցուցադրումի, այս պատկերները ունի շատ շատ առատ, ու կը թաւալի աստուածային անտարբերութեամբ, եր-բեք շատ չ'պրոպանով կապերը զոյգերուն, որոնց իրերադրումը կ'անց-նի աննշմար, վառնով մարդոց վարժութիւնները, զգայարաններու ուղիով, յաճախ կը փոխարինեն մտածելու տարուածը, ջանքը անոնց մէջ: Ու խաժամուժը, իրարու ժամադրուած անդթութիւններու եւ զարովի, ակօսուած՝ տարիքի, գոյնի, հէնքի ահաւոր հակառութիւն-ներով: Ու տղեղութիւնը, բայց պաշարուտը, փասածը, կոճակ-կո-ճակ վեր տուածը, ու խեղութեամբ պղնձուած խեղդեախնուած՝ կաթի մանկամարդուհի մը կուշտին: Ու տղեղութիւն մա'նաւանդ կիներու պարունակէն, չորը, չորցած-փայտածը, տունացածը, պե-խաւորը, զգուշիւն, որովհետեւ դուրս է սեռէն, որոնք կը քայլեն ար-ծաթ պայտաւակներ վառելով իրենց շէկ մորթին բոցերուն: Ու խուլ ճշումի, քաղցր, հետախուս արեւին, որ օրը կը շամանդաղէ, ու սեռը կը ջնրմացնէ, կեանքի բոլոր նաւարեկեալներուն, անանկնե-րուն, դատապարտեալներուն, խնայելով միւս, աւելի յիմար ճշու-մը, որ քաղաքինն է, Ամերիկայէն կամ Եւրոպայէն, պզտիկ ու մեծ, բայց կերբերան հակառակօք: Հիւանդի քաղաք, մոլուցքի քա-ղաք, անիկա ուսած էր զանոնք իր ցերեկին մէջ, ուրիշներու կարգին, ճրտիւքով, աղտով, ու խուլ հեշտանքով տրոփուն փողոցներու երե-սին, ընելով զանոնք զտրաւարներն իրարմէ անբաժան, աչքերը թէ գիրենք վարժեցնելու դեռ սքողուն կարօտով: Հետն էր, դուք գիտէք ատիկա, այդ օրերուն յաճախուէալ հանդէսներուն եւ ներկայացու-նելուն, կորովի ու աննահանջ, դիմաւորելով մեծահարուստ տիկի-ններուն գլուխդիտոս նայուածքը պարզ տրամուրթեամբ արտայայտիչ

իր աշխարհում ու ոսկեդարձեղ անոնց՝ անսնդոյր ու անթերի իր շնորհովը, հանելով անոնց գոհարակուս ու պատանա դէմքերուն շինովի ազնուութեան դէմ՝ խոր ու թրթռուն շղարշը իր մորթին՝ ու անոնց հաստ, թերխաշ, գաւառիկ բարբառին դէմ՝ դաշն ու կիրթ ու սղնուական հարազատութիւնը գրազէտին հայելւարին, զոր իւրացուցած էր ննարդային, մանրամանր ընկալութեամբ, ապրած ըլլալով անոր շունչին, հոգիին, աշխարհում համատարփ հեղու մին մէջր։ Միայն արիւնով չէ, որ զաւակ կ'ունենանք։ Կ'ունենանք ատիկա, նաեւ, հոգեկան յղացումով։ Դիտուած է, որ մեր անձին հոսումններ ար աւելի հեղա կը ծծուն մեր շրջապատէն, երբ հակասեալ ըլլինք ու կը բախին։ Որքան ազդու է սեռին սյաքը տարրաբանական այս խոյ ու խորունկ քնդմաւորութեան մէջ։ Իմացական մարդէ հըմայք մը հասկնալի է ինքնին, առանց ուրիշ պաշտօնը միմիայնութիւն։ Յորտրդ Գոհարեան օրուան ամբողջ մասը, բացի ջուռէն, ուրտտին մէջն էր գրազէտին։ Ըսի ձեզի, թէ հետէ էր հանդէսներուն։ Բայց հետէ էր, մանաւանդ՝ առնէն դուրս, դրօսատեղիները, իրիկան կամ առաւանս պտոյտները կատարելով արժանութեամբ ու փառքով, աղուարէն վեր՝ արձանային անդամութեամբ մը փաթթելով պարմանութեան խռովայոյզ եղբայրարէր, անցնելով մարդոց ջուռէն, կենալ շուրջը երեսնութի մը պէտ, օտար, տնթափանց։ Անոր մայրը դողդոջած էր ընկերանալէ այս պտոյտներուն, քանի ապրի կայ, լաւ դոյնով իր ներկայութեան ճշմարտ գրազէտին հակադէմ ու մրմնաւած իր իսկ արժանութեան, զոր ճիւղայն էր աշխարհին՝ ինչպէս կ'առանձնանէր արժան գրազէտը, պտոյտներէն դարձին, երբ յոգնութիւնը, աւելի արագ ու ժաթափումը զինքը ընէին աւելի արագ անխառն ու անզուր։ Անոր աղջիկը տեսան Արեւմուտքի ու, մանաւանդ՝ աւելի Անգլի անդամ անձնաւորութիւնները, հիւանդ կամ ոչ, սիրող կամ սեռէն հայտնուած, իմաստուն կամ յիմար, կոյսն ու ծերունի։ Բոլորն ալ թափած Գահիւն, այսինքն՝ մանկութիւն, ջառակութիւն իրենց բուռնապրումէն իրենք զիրենք ազատագրել ձգտող մարդեր, տնայնկային, տարազէտին հետամուտ սիրտներով, որոնք զգացական չբաւարարեան կամ յորդուութեան իրենց եռտառններէն, անյազուրդ ու մանկախառնութեամբ, ծարաւ, բայց բերան չուզելով բանալ, չափեցին տնայնի փարթաւ արուն ու անոր կուշտի գեղական ծնւր։ Հասկցան։ Ո՛ր։ Հոգ չէ շահեկանը։ Բայց հայրենակիցները, գաշտային խնճոյքներու տանն, կը խօսէին ճիւղատուութեամբ անոր արդուգարկէն, որ կը պատշաճէր անոր մորթին, պայծառ, դուրսէն հիւսում, աստղանկար բանի պէտ թելել։ Այդ վայելչութիւնը կը փրմանար յանկարծական ցոլացումներով, առանց որոշ պատճառի, տարեկից աղջկան մը կամ երիտասարդի մը անցքէն յետոյ, մորթին վրայ բարախուն ուրիշ հոգիի մը նման եւ որոնք աղջկան մը աշխարհ այնքան հետու, անհասկնալի կ'ընեն։ Երբեմն ալ խօսող բերնի մը նման, պարզ ու հրաւիրակ, յուսակիղուած ու գիտէ ո՛ր թաքուն ըզզաբարանքէն, երբ հոգին հասած է ինքնին ու պատրաստ՝ իր շապիկը պատռելու, հարանուկ դառնալու համար։ Այդ պահերուն փրկութեան էր անոր գնացքը, այսինքն՝ անապահով, գաղտ վախէ մը գաշտութիւն։ Գրազէտին թելին յանձնած յաւիտ այն շփեղութիւնը, որ աղջիկն է սեռէն ամպշտովանուած, անկէ շուրջուր, անոր համար հասուն, խուզարկու, շղջալով, թէ ինչ ճիւղանի ծուխ կը թաւալէր իր ձեւին հետէն, գործածելու համար մէկ պատկերը մեր մեծագոյն աշուղին,

Երբ Գաբրիել տէրջը Հոգեբուն մէջն իսկ կ'այրի կարմիրով ու չի խաղաղէր:

Տարողութիւնը այս զգայութիւններուն:

— Գիտէ՞ք, ինչ որ գիտէ քաղաքը, տուտէն իրաւէն:

Ահա ի՞նչ:

— ...

Երիտասարդ աղջիկ, անիկա կը խորհէր, դառնութեամբ, իր մօրը, ոչ ամէն ատեն, այլ՝ իրարու նման կարգ մը պահերու, երբ Էլիսաբարդ ու չքեզ կին մը, գիտա՛կ՝ իր մարմնական արժէքին, կ'անցնէր իրենց առջեւէն, քովնտի նայուածքով ու խոր անտարբերութեան գլխակին տակ, աշխարհ մը խորով կը մզէր իր ետեւէն, գոյնի, Հոտի, չըտուած, բայց թելադրուած բանի ծուլներով, որոնք տաքօրինակ դիւրութեամբ մը կը վերածուէին պարզ, պատահած իրողութիւններու, մօտիկ անցեալէն, Հեռուի քաղաքին մէջ կամ աւելի ետքը: Ինչո՞ւ կարգ մը բաներ կը սպասեն այսքան երկար մեր գիտակցութեան մէջ իբր յիշատակ ամբառնալու, երբ զանոնք չէին պահած կամ կ'անգիտէինք: Հասակաղէկ ու հերթակ ամէն կնիկ մօթ ու տրտում այս փայտամենքը կը թ'աւաւրէ ամէն մտնուցիլ ու սղոտանուտ, ո՛չ անշուշտ մեղքին պայծառ խորանէն կծկծուն, այլ՝ սանկ ժառղի հակած գորշութեամբ մը, որ ամօթ չէ, ինչպէս չէ զըղջահարութիւնը: Ու անցքէն յետոյ անիկա ինքզինքը ըրած կարծի սըլաք մը նայուածք, կ'երկնար իր ներքը: Գիտի՞ գէ՞մզիմէր իր միտքը իր մամային, որ մարմին էր եղած ու փաթթուած անշուշտ տախտիքին մէջ, որ ձեն է կիններուն, երբ հազուած, քսուած, յարգարուած կ'իլլեն առանձին, կամ էրիկի մը վկայականը հանունն: Որ մարմին էր ու փաթթուած անշուշտ հեղուկ այն պատմութեանին մէջ, որով կը զգար ինքզինքը պարուարուած, երբ հազուելէ առաջ, ժանկազարդ չապիկին մէջ կ'ընդունէր իր միտքուն գողտր արմը՝ մատաներէն արթնցած, երկարէր իրեն ու սահէր, մշուշի նման, մինչեւ հեռուար ալքերը զգալունի զգայարաններուն: Յետոյ՝ ամօթէն, կ'անցնէր ոտտուով այդ խոնաւ, նուազում բերող թուրութիւններէն, կառչելու համար մօրը խմստին, որմէ գոյգ ընտանիքներ քայքայուէր էին, ինչպէս կը մշտանար ակնարկութիւնը, դառն ու չհերքում, ներքեւ անոնց առաստաղին: Այդ պահերուն էր, որ փռուէր պիտի անոր աչքերուն՝ կիսամութ առաւօտը, որուն մէջ անիկա ելեր էր դուրս հայրենի տունէն, դիւր հաճոյքի, բայց անորոշ ալ վախի կրկին զգայութիւններէն ողողուած: Անիկա, մօրը ոտուերին մէջէն, կը հետեւէր մարդուն, որ անոր ջիղերուն վրայ անդրանիկ տարառնէր ծաղկեցուցեր ու կը վախնար մօրմէն, որ հագիւ էր բացած խորհուրդը փախուստին: Առտունէ՛ր, երբեմն ինչ բռնութիւն էք դուք: Ինչպէս կը յամառէր այդ աւտուն, ծովնգերեայ պանդոկի մը կապածն իր մաքրութեան մէջ, երբ շողեհնաւ նստելէ առաջ անոնք սպասեցին իրիկուան, այդպէս կուղայ, մօթ ու կապուած: Այդ օրը՝ Մայրը՝ որ երբեք չունէր եղած այդքան խոր, գեղեցիկ, ճառագայթութեան, հակառակ վտանգին, որուն թեւերը կը ծանրանային քաներուն: Գարգաւեանը՝ չրթները կծկելով անդադար, ժպտելով բռնի ու նայելով ետին, անկարող ծածկելու խոր ու վատ տրտմութիւնը իր հոգիին: Ո՛ւր: Բայց ինչ յիմար, թերի, սուտ է վէպը՝ քաղցատուած կեանքին: Որ պարտաւոր է քանի մը էջի վտաճիլ անհուն հոծութիւններ ու անցնել... Անշուշտ այդ առտուան ժանգը պիտի յամա-

ուէր անոր անդրադոյն զգայութեանց վրայ ու պիտի վերածուէր աւելի յստակ միտ պատկերին, — քայքայո՛ւմ, ինչպէս որակուած էր դրողէտին իր իսկ բերանէն: Որտի՛ն բաժինը անոր արձակման: Առաջինը անիկա կը վարանէր Հարցումն իսկ ղնելու, երբ նոյնիսկ երկրորդ ամսոյն, փախուստէն ետքը, «էրիկ-կնիկ» իրար կը թզկտէին, իրենց ահաւոր զգուանքին մէջ իրարմէ, ու իրարմէ իրենց փախուստին մէջ՝ «ամոյկն» իւրաքանչիւրը փնտռէր զինքը, խաղաղութեան մարդկեղէն համի իրը խորշիկ մը, դժոխքին իսկ ծոցը, ուր դային թօթափնու իրենց ջիւղերէն ինչ որ օքսիտն է յափրանքին, վայելքէն ու տանջանքէն ալ վեր: Գեղեցկութիւնը բարեք մըն է, առաքինութիւն մը: Նոր չէ, որ կ'ըսենք տաիկա, բայց անիկա հաշտեցնող բան մըն ալ ունի, երբ չէզոք է, այսինքն՝ ինչ չա՛նքում չի կապուի չի ջապարհուն: Կը հանդիման, առնուազն աչքով, արձաններու աշխարհը մէջ, երբ չզանդաղինք, վասնզի ամէն կատարեալ ձեւերուն ճակատագիրն է շուտով յոգնեցնել մեզ: Անոր մայրը կը փաթթուէր աղիկանք պատկերին, իրը սեպհական իր նկարին, կրկնուած իրմէ ու դիմացնող՝ իր քայքայումէն յետոյ հեռու հրաշքը իր պարմանունութեան, որուն չենք հուստար ամէնքս, երբ կը տառապինք թարմութեան սուրբէն: Տարօրինակ էր, որ չխորհէր այդ մայրը իր աղջիկանք սեպհին, մոռնալու չափ՝ ինչ որ եղբւր էր ինքը, այդ պարմանակէն, անոր սա տարիներուն: Ինչո՞ւ: Շատ, չա՛տ մայրիկ, անոր նման, ինչո՞ւ չեն հաւատար այնքան պարզ բաներու: Ջայն կը փնտռէր դրողէտը, ինքն իրմէ բացակայ, դասալիք, վաճառուած իր իսկ խղճմանքէն ու, Հանգիսի յետոյ խաղաղ շնորհին մէջը անոր զէմքին, կը քրմանա՛ր, լուրջ ու խորունկ, արուեստողէտի արձակ սաւառնումով ու կը խօսէր ունայնութեանց վրայ մեր ամէնէն աւելի սիրած բաներուն, — երիտասարդութեան՝ որ կ'անցնի աւելի արագ, քան ակնթարթը: Գեղեցկութեան՝ որ հիւր է մեզի, պահանջկոտ ու յիմար: Խնչ որտառուէ էր թախմադին իրականութիւնը սա պատգամներուն բերանի մը, որուն ճամբանքը երկարեցան տնտեսի թաւիղները ամէնէն պզտիկ ու զէմ տրամութիւններուն: Հակադիր այս սղոցեցութեանց ներքեւ, չկրնայով իսկ աղջիկ մնալ, մա՛յր էր անիկա, անտիական. փոխան մը տնոր կործանումին, միտթարեյու տեղ՝ ապրեցնելով անոր առանձնութիւնը բարեքով ու շոգով: Մորթը երբեմն մեռաք է ու երգ: Այսքան կանոնի: Անուշտ: Կան այս աղջիկները համեստ կարգերէ, որոնք տունին ժպիտը, ծաղիկը, հողին ըլլալէ ետքը, հոտն այ կը ճարեն: Ու կան անոնք վերին խաւերէն, երբ սերունդներու սմբողջ տպագրութեան կ'երկարեն իրենց թաւհայ նայուածքին ու մահուան տպագրութեան կ'երկարեն իրենց թաւհայ նայուածքին ու մահուան տպագրութեան: Կան անոնք, անվերապարձ, իրենց հետ տանելով, հողերուն զաղարին, ինչ որ արիւն ու պայքար, արցունք ու յուզում, ձեւ ու սարքուած եղան դարէ դար: Ու կը խորհէր անիկա մօ՛րը ամէն անգամ, որ իր գաստակները տար դրողէտին ափերուն ու ինչո՞ւ մէջը անոր անյատակ աչքերուն: Ու անցնէր անդին, այս անգամ իր հաշտոյն, վախով, բայց բնկալելու անկարող, ջանալով կասեցնել իր մտքին թաւալը դէպի ինչ խոնարհութիւնները ենթախարհին, ուր ձեւն ու ըզրկայութիւնը, փափաքն ու անոր տարազը, մարմինն ու հեշտանքին անդրինները, սոսիմոտ ու մերկ, կը չըլին ազատ, զիրար հալածելէն: Հոգի՛ն աղջիկներուն՝ երբ անձանթ անցորդէ մաշնխուած, կը տանին իրենց աթոռին կամ փակուած դուռներու առջեւ յապաղուն, ա-

կանը կու տան սողոսկուն թառերուն ու կը կարծին: Այսպէսով է, որ աղջիկները կ'ըլլան շատ: Անոր ներքին խորութիւնները կ'այցը-ւէին՝ սկիզբները տարտամ, հեռզհեռէ աւելի հաստատ լոյսերէ, շատ շարժաւոր, բայց համակերպուն: Արցունքէն յետոյ, առաջին անձնաւորու-մը տեսնել, երբ կ'ելլէ զգացումի միզամած խորհրդէն ու կերպ կը դառնայ, տարով իր կնիքը մեր նայուածքին, ու մեր դէմքին՝ իր ի-մաստը: Շատերուն մէջ, այդ շրջաններուն, սեռը լուսամտի մըն է, ազատի կտուցով, խիստ ու աննահանջ: Քիչեր, ով գիտէ ի՞նչ հե-ռանկեայ խթաններու ներքեւ, յանդգնին պիտի խորտակել այդ մրդ-մաւանջը ու ճանչնան զաշխարհը: Միայն նոր չէ, որ ներթափայ է այս փառասերութիւն, ազակեանութիւն: Արքունքէն յետոյ, երկրասարդու-թեան դուռներուն, տեղը կ'առաջանայ, նոր բառով մը՝ կը բխրեղա-նայ, տեղէ, պահէ, անունէ, ընթերցումէ, շփումէ, շարժումէ, նա-րաւորէ բազմաստեղ տարազներով: Այժմէկ յիշատակ այնքան առու-ռ թոր կը կազապարուի, որքան այս փրթում բռնեբր, երբ, անց-նելէ յետոյ սեռին դուլէն, կ'իջնան հանգիստի՝ մեր գիտակցութեան զանազան խորշերուն: Ինչո՞ւ, մինչեւ խոր ծերութիւն, չի մարիւր ու-մը ժպիտին, զոր տեսանք զբռնկած, այդ հեռաւոր առտուններէն մէ-կուն մէջ, դէմքի մը, որ ալ չերեցաւ մեզի: Այն ի՞նչ տարիք է ա-նիկա, որուն մէջ նայուածքի մը, բարեւի մը, շփումի մը արժէքը կը քառապատկենք: Պատանութիւնը անմահ ուսման թիւղն է մեր ըզ-ղայարաններուն: Աւ Օրիորդ Սոնա Գոհարեանի ամէնէն ձեւերնայ տարիները շինուած էին տարբերովի գրադէտին, ամէն փարթաւու-թեան նման՝ հովանոտը քաղաքի շնորհներով: Ինչո՞ւ պայմանա-ները մէկ ու պարզ կը տեսնեն ու հառաքակ տառակը կ'ոսկեգծեն սիրոյ գիծանաներով: Օրիորդ Սոնա Գոհարեանը, բայց անիկա ին-չու տարբեր է այն միւսներէն. շատեր այս անգամ, որոնք հակա-ռակ ամէն արգելքի, կը ձգեն շատ քան, նոյնիսկ հայրենի տունը ու կը հեռանան առաջին որսորդին: Անիկա ամէնէն աւելի տկար եղաւ յաճախութիւն անվրէպ մագնիսին դիմաց: Մանր, բայց չա՛տ, բայց միշտ՝ զարմանայի յատակութեամբ կտորներ՝ ժամանակի օրոշ թուո-րակի մը մէջ, ինչպէս հարիւրաւոր որմնակարներու հաւաքոյթ: Ինչպէ՞ս՝ պարտէզի մէջ նոր տունի ծաղիկներ, ցիրուցան, բայց հա-մերտեղ, ըլլալով ամբողջութիւն ու պատկեր, տալու չափ անունե-րուն համիմաստ լեզու, որոնք ամէնէն, բայց մնային նոյն: Ըն-դարձակութիւն, բայց չաւնային, առանց քացուելու: Տարփանքին յատուկ է այդպէս ինքզինքը պատրել ու շտեմել ներսէն անումը, մինչեւ որ պատկեր խորտակուի հունտին ճշդումով ու ձգէ մերկ՝ իր պատուաւորը: Իր տասնըվեցին կը սիրէ՞ր գուցէ տարիքովը եռապա-տիկ այդ մարդը: Խե՛ղ: Օրէ՞նք: Գիրքերու փա՛ստ: Աւա՛ղ, բառեր ին ասոնք, որոնք միշտ անխառն չեն: Բայց երբեմն՝ պարզ բառեր: Բայց պէտք է քսել նոյն ասեւն համաստեղեամբ նկուն ու պարտը-լած, որ սեռային անդունդը կը տարբերի ծովերէն անով՝ որ նա-ւարկելի չէ: Անոր քարտէ՛սն է, որ կը հանենք, իւրաքանչիւրս խեղճ մեր կարկինով ու կը գտնանք: Այսինքն՝ մեր ազիտութիւնը կը գոնադոծենք, օւրիշներու վրայ փնտել ջանալով ինչ որ մերժեցինք մեզի: Ատկէ՛ թերեւս, հրապոյրը, բոլոր նաւորդի յիշատակներուն: Մենք պիտի կարդանք ամէնէն համեմատն ալ, հերիք է, որ նաւաստին չըլլայ դրազէս, ըսել կ'ուզեմ՝ կեղծաւոր ու յերիւրող: Անոնք, այդ անդունդը, անգունդները — ամէն կին նոր չէ, որ կը նմանցուի ա-

տոնց — կազմուած են նոյն ազով ու նոյն կրակով, բայց բախտը ունին տարբեր երեւալու մեր ամէն մէկուն: Աւ ամէն աղջիկ, մէջն ըլլալով անշուշտ Սոնա Գոհարեանը, կը հնազանդի այն խուլ ձայններուն, չեմ ըսեր օրէնքներուն, որոնք սեռային արեւելումը կը վերածեն տեւողութեան, ճառագայթման հարցի մը ու արդի մշակոյթին բարութանքին մէջ թէեւ կը թեւեն հետակորոյս, բայց կ'անձնանան, իրենք դիրենք կը բռնադատեն, երբ պարագաները նպաստեն այդ արեւելումին: Մենութիւնը, որուն մէջ առնուած էր անոր մանկութիւնը, կու տար առաջին պայմանը այդ խորհրդաւոր հակումին, հօրէ որդիութիւնը, քոյրերուն տղեղութիւնը, շուկան, մենագարութիւնները հարուստ տուններուն, արդէն շատ կանուխ անոր մէջ յարգարած էին դետինը ու ժգին ինքնացումներուն: Այս գրկանքները տարօրէն կը խոցեն մեր զգայութեանը ու մեր խելօքիկ պատեանին տակ կը փորեն սուր գահալէծներ: Փախուստին ահաւոր հարուածը: Հարկաւ: Անոր մայրը, իր տարփանքին բաշերուն մէջ, ինքզինքը ամբողջութեամբ լարած գրագէտին, անոր կը զարմնէր կրկին առաջին պտմանութեան միւս գլխաւորութիւնները, երբ, ով դիտէ ինչ հալիւներով, տարի մը յաճախէր էր Գոյրերու վարժարան մը, ուր կը փայփայուէր տնիկա տարօրինակ ձեւերով, տարբեր հաճոյքներու ճպտիկ ներքեւ, զողահար ու ըզձաւար: Հո՞ն էր, որ կը համբուէին զինքը տարտամ մայրապետներ, քաղցր ու օծուն, բայց սարսուռ մարմինով ու անոնց գիրկին մէջ իր պուպրիկի մարմինը կը տառապէր անասելի զգայութեանց հաշուին: Յերեկները կը պառկեցնէին զինքը իրենց յիսուսագարդ մահիճներուն մէջ ու կը հիւսուէին կիսամերկ իր ձեւերուն, Ծծելով, բայց իրական շրթներով, թարմութիւնը իր միտերուն, միշտ օծո՞ւն, միշտ սրբազան, ինկաւէտ սիրով, յանաւ Տերածօ՞ր: Խոր այդ խորհրդներուն յամենալը վրան: Տուն դարձին, իր առանձնութեան մէջ, անիկա կը զգար դեռ այրուցքը, իր միտերուն վրայ, այդ շրթանքներէն: Զինքը ողջագուրող այդ մատներուն հետքերը իր մարմինը կ'ընէին խայտաւոր ու ցաւով: Եւստոյ գիշերը: Հարուստ ու ապակեանած տան մը գիշերը: Առաջին լոյսերը, արահին դաղջ ու բազմերանդ հոտերէ ակօսուած, մթնոլորտը, ուր պատկերներն անգամ մեղաւկից փայտ մը կը նետեն ու զորդերուն խուլ թաւութիւնը կը գաշնաւորուի աչքերուն խուլ գիկզակումին: Այդ գիշերապահանցած շրջապատին մէջ անոր մարմինը կ'աւանդէր ուրիշ յուզումներ...: Անիկա քաղցր, կրաւոր, տեւական սուղումով կը մնար կախուած գրագէտին աչքերէն, նեղելու աստիճան անոր ազատութիւնը, մշտական հսկողութեան մը ենթարկելով խաղը անոր նայածքին: Աւելի՞ն: Անիկա կը սիրէր այդ մարդը, անոր մէջ զգայով, գտնելով ինչ որ կ'ուզէր աղջիկները ամէնէն առաջ, անտեսելով, ուրանալով ինչ որ պիտի արհամարհեն, հալածեն, երբ աղջիկ չեն ալ: Քիչ անգամ օրէնքը կը չեղի եւ պարմանութեան կուռք մը կանգուն կը պահէ երիտասարդութեան ատեն: Աւելորդ է գրադիւ այս հակակրօթեան processesով: Միւս կողմէն՝ գուցէ այս հակասութիւնն է, որ քիչ մը լոյս կը նետէ սեռային մոռցումեան մէջ, երբ տարիքները այդպէս իրենց հակադիր բեւեռներէն կ'ոյրորին զէպի իրար: Քիչ չեն աղջիկները, որոնք քառասունէն հազար գիրկը ինան քսանէն վար պատանիներու ու ճիշդ է գիտողութիւնը, երբ շրջանք սեռերը: Քիչ են աղջիկները, որ տգտին այս կախարդ ուստանէն: Խորապէս հասում կամ անտաղին մղումներէ բռնալար՝ պա-

տաճական են աղջիկներ ալ, որոնք կրնան մնալ մօտ, ու չառնուիլ շուրջի ձեւերէն: Անշուշտ հազուադէպ, բայց ստոյգ այդ գորութիւնները կը հաստատեն ուրիշ տուրքեր: Ընդդէմ կատարելապէս պաշտօնուն, ինչպէս պաշտօնէն: Որոնք հոգեկան զանազաններ են, կատարելապէս ճիշդ՝ սեռային մարզէն, ինչպէս ճիշդ են ֆիզիքին մարզէն միւսները: Հոգին, սովորը, մեր ամէնունը, ազգիւր մըն է, որ պիտի հոսի, կամ՝ աւազան մը, որ պիտի ընդունի: Ու նոր քան չեմ ըսեր, երբ դիտել տամ, թէ այդ հոգին խտութեան իր գերազոյն աստիճանը ունի պարմանութեան շրջանին, ըմբռնելով միտքին, որ տարիքին հետ կը քալէ ուղիղ համեմատութեամբ: Որքան շատ քան դիտեն ժողովուրդներու ճերակոյտները ու որքան քիչ կը զգան: Կրացումը: Ո՞վ ինչ դիտեայ, թէ երակներէն ինչ կը վազէ յիսունէն վեր մարդեան: Այս է պատճառը, որ, հոգեկան հոսում, արուեստը — ոմանք դայն կ'որակեն սեռային հոսում գէպի ոչ-էզը, կենսաբանական տնտեսով էզը — կը սնանի առաւելապէս, մատաղ օրերու հաւաքումն եղող այդ հոծ խաւերէն: Ինչ որ արուեստագէտ մը աւելի յետոյ պիտի ճարէ իր գործին, արտաքին է միշտ, աչքի ու ձուրթի քանի մը plaquesներ: Ծամբորդի գրականութիւնը՝ միտքին ուղղումած՝ դուրս է անկէ ու շփոթելու չենք յաջողած հասորներու այսպէս ճարտած գեղեցկութիւնը բուն արուեստի բխումներուն հետ: Մի ուրանաք Արիստոտելին ընդարձակութիւնը, բայց մի ըլլաք միամիտ անոր մէջ ըզզալու շափ պզտոտեան հորիզ: Մենք մեր պատանութիւնն է, որ կը ճանրենք, երբ կ'ընենք արուեստ: Օրիորդ Սոնա Գոհարեանը աւազան էր, ու ի՞նչ աւազան: Թերեւս բանաստեղծութիւն ըլլայ պիտի դայն նմանցնել կախարդական այն ջուրներուն, որոնք խոր ու անթափանց թաւաններու ծոցը կը պառկին «յաւէտ» մեծաւոր, եւ որոնց հայելիին վրայ, հնօրեայ աստուծոյ մը քերական կը վազէ յաւիտենական հեղանուտը: Առաջները ան ի՞նչ կը տառապէր, քողարկելու համար մօրմէն, զգալու իր գոթախտութիւնը, ու կը վախճար մօրմէն ո՛չ իր, այլ՝ անոր հաշուոյն: Վա՛յ օրին, երբ աղջիկ մը իր մայրը կը դատէ: Այն օրն անիկա կը մտնէ ուրիշ աշխարհ մը: Կը վախճար գրադէտէն: Երբեմն սեռային տաքը պարթեւական ռազմախաղ կը փորձէ: Սենէն ընկրկումը կայն մըն է՝ մեր զգայարանքներէն՝ մեր բնագոյններուն: Ու զգացումը, դուք գրէք անոր ճիշդ անուշը: Որ հեղում է սրտագին ու կը վարանի նոյնիսկ թափելու ու կը հրուի, մեղապից չիջումով միւտ աւելի վար, մինչեւ որ՝ ա՛լ անվերածելի՝ խորտակէ յատակը ու ժայթքի դուրս, անսպասելի խենթութեան մը ձեւով: Աշխարհի ընդարձակութեան մէջ ընդարձակ է այս տրամն ալ ու կը լուսաւորէ ընթացիկ գոհացումին միապաղաղ գորշութիւնը: Մէ՛ր, Սե՛ն: Ո՞ր կը սկսի մէկը ու կը դադրի միւսը: Բայց մէկէն միւսը՝ պոզոտա՛յ, ինչպէս կը հաստատեն հազարաւոր օրինակներ, առօրեայ կեանքէն, ողորմութեան ձեւին տակ խղճմտանքին մէջ յոռուող զայտաթիւններ, որոնք շատ շուտով իրենց բռնութեան գերի կ'ընծայեն մեր ջղային կեդրոնները: Անիկա, Էրկար ասան, Ծանկէր պիտի ինքզինքը իրմէն, վախճալուն համար «թոյլ», «մեղօք» տխրութեան, որ ցուցանիլն էր սեռին, եւ որ պիտի կազմէր, ի վերջոյ, հիմնայատակը անոր հոգիին: Վասնզի այդ խուլ տրամուրթիւնը իր ժոյճը, կնիքը կը պարտադրէր այդ շրջանէն իսկ: Մարդոց գէմքին բաց կամ գոց պատկերը փնտեցէք պարմանութեան նըմանօրինակ հայելեացումներէն: Անիկա տրամ էր դարձնալ դուրսին

աղաքումնակն: Կր սիրէր գրադէտը ու կը գթար մօրը վրայ: Ու զոյգ զղացումներու այս զօտեմարտը կը կրէր անիկա իր սիրտին արձա-
կութեանցը վրայ, մարմինին ծաղկելու բխումին մէջը, պսակներով
ոյարտակել ջանալով անոնց լերկ, արտառտ տուգութիւնը: Անպա-
րտ՝ — Ձէ՛ երբեք սէրը: Բայց հնարամիտ է ամօթխածութիւնը:
Կիրքին վայրագ հաստութեան գիմաց, որ չի փրկուիլ, այսինքն՝ չի
ծածկուիլ: զղացումի շինոտ վարանքները աղջիկներուն անձը կ'ը-
նեն տարօրէն քաղցր ու խռովիչ: ... Կեանքը: Ըսել կ'ուզեմ բաժի՞-
նը՝ դէպքերուն, շփումներուն, յանկարծազատ անակնկալներուն:
Հարկա՛ւ: Ու կեանքը՝ փախստականի, պոռնիկի, սիրային ճշմարտով
մղտուն տարտի ու գայթակղութեան զարդանակումը հեքիաթի:
Ու ողբական, տարազէմ բաներով ակօսուած կեանքը մանկամարդ
աղջկան, որ Եղիպտոսի մէջ շփումի կը մտնէր խոր, խուլ ու հին բա-
ներու հետ: Իմիջին միջոց, որ հեշտ ու թոյլ գեղեցկութիւն է, ու
մարմինը կը բանայ, կը լայնէ՝ խոշոր ծաղիկներու վերածնունդ երեւո-
ները կ'իներուն: Եղիպտոսը — երկիր մոմայի ու խիստ չորութեան
— դաշն կը պարտէր հին ու տարազնու իր շունչովը: Աւազին ոչ ոք
չէր՝ ու ծխացող: Բիրտ ու կծու այդ արեւին տակ մարմինը շուտով
կը կծկուի ու լայնքը կը խորշումի, ամէն ուղղութեամբ: Կլորի հա-
կած դէմքերը կը քարանան ու կը ստիպուին առնելու երկայնքի հար-
թարապետութիւն: Գիծերը, թուղթի վրայ մեռած, ազրումներ են
հողին ուրբաներէն: Ու ենթակա՛յ օրէնքներու, որոնք կը խուսափին
մենէ: Տափառաւոր գծագրութիւն, մոնկոլեան դէմքերը կ'երկնան:
Աւազներու ճշուն՝ գիծերը երեւան պիտի չկրթան կորին շնորհին:
Եղիպտոսի մէջ, մարմինը ինչ տարակայ մարդերէ ալ բլլայ ինկած,
աւազին իսկ սերունդին, կ'եղծուի քնազաւատին յարգաբանքն ու կը
հողմի Երկարուն ճարտարապետութիւնը շնադուիս ձեւերու, սուր ու
ոստոտուն, բայց որոնց նկարագիրը զօրութիւնն է, խորութիւնն է:
Հոն, Արեւելքէն ու Արեւմտեքէն մշտահոս միւսերը կ'իներուն կը մա-
րին իրենց երկրորդ շառաւիղներուն, ու կ'ըլլան գէպի ոտները լար-
ւած, դրիթէ չիլ գիծերու հոսանքը: Տեւողութեան սա լայնքին վը-
րայ այս ալիստեւումը որքան անխուսափելի, կը նախաքանդի անի-
ման իւրիւ բնդլայնումով մը, այս անգամ տեւողութեան կարճ
հաստածէ մը: Հոն ինկող ամէն օտարուհի, առաջին չորս-հինգ տա-
րիներուն, կ'այլայլի հակադիր հեղումներու ներքեւ, չճանչցուելու
շտի բնդարձակուելով սկզբնատիպ իր շնորհին մէջ: Ժուժկալ ձեւե-
լը արադ-արադ կը յորդին ու թեթեւ գծագրութիւնը միւսերուն կը
վերածուի գեղայօրէն կատարելութեան մը: Արեւը, Նեղոսի ողմն,
հեղինա՛կը այս աճումին: Յետո՛յ: Բայց կ'իները ձեւերուն մէջէն կը
տեւեն ամէնէն առաջ ինչ որ կ'ուզեն իրենք, այսինքն՝ աչքի վայելք-
ները: Այս էր պատճառը, որ անիկա ցաւով ու տրամոթեամբ սիրէր
տփոյն աղջիկները, անպիտան կամ աւելի հիւսիս ցեղերէն, որոնք ե-
րեսի տեղ ներկուած կաթի պարուրակներ անցուցած իրենց դէմքին,
մեծները կ'երեւին այնքան առատ, տրամա կամ զուարթ, չոր կամ
սոսնձ մարդերու քովէն (ինչո՞ւ չէր մոռնար այրերը տեսնել գրա-
դէտին անդրադարձումով, ու չէր զգար բնական ու սխալմանաւոր
տարազներ կը զլանար անոնց ու կը մղուէր ենթադրելու սանկ ու նանկ
հօրեղբայր, տարտամ խնամակալ ու աւելի պարզ ձեւեր) կ'անցնէին
դէպի աւազները, ուղտի մը նկարուն բոստները լոյսած. ասոն տար-

մէն զխտելով իր մերկութիւնը հազիւ հազ կնիկէպիւն(*) յանձնած պղնձաւոր, սակցնամորթ ֆիլլա՛նը, որ կը նստի ու կը պոգոնէ, վախալից ու օտար հոտերով համեմատած, ու կը փակէին իրենց աչքերը ով գիտէ ի՛նչ ներանկար ողորդութիւններու: Ամօթը ցաւ է հրեմն: Ու ամշնալու համար կիսները ներհակը եղան այրերուն, որոնք ցաւը կը կրեն, բայց չեն ամշնար: ... Անիկա կը սիրէր հիւանդները, որոշ աստիճանի, պորտուկու կարող, մեղրամոծի բացութեամբ, այնքան բարակ ու զգիթիչ, որ մահն իսկ կը հերքեն տնուն իրենց ըզմաւորութեամբ, հիւծումին գոլին մէջ, վերջնական պարտաւորմէն տուալ, առկայծուն ու չքնաղ, բերելով իրը «փունջ մը բոց», «փունջ մը նայւածք», նայելով մարդերուն, տնուն կորովովը իրենց յորդ, բիւրաղ-զի ու տարբէն փերուն սիրոյ բաժակներուն: Ու անվախճան ըզմաւորութիւնը, որ յատկանիչն է պատանութեան, առաջին երիտասարդութեան, զայն կ'ընէր թրթուռն ու լարուած, դէպի բազմաբնական պիտակաւորումը կենտրոն բոլոր մեւերուն: Կեանքը: Այսինքն՝ մեր ներքի աշխարհին երես մը բա՛ն, մեր գէ՛մը բռնուած կրկին ու գուրտ, որ պատրանքով մը ծածկէր մեռքը բռնողը, մեր իսկ մե՛ռքը: Այնքան սուտ է ամէն բան, մեր տէ՛նէն ամուր գաւառած սեպհակա-նութեանց իսկ կալուածէն: Կա՞յ աւելի իրաւ բան մը, քան մեր ան-մը: Երանի՛ անոր, որ պիտի չհերքուի այս հաւատքին մէջ: Երանի՛ անոր, որ պիտի չխնայ դարչապարին տակը սեպհական կառկածին: Նայի՛սկ հո՛ն՝ ուր անոր կը տրուէր մենանալ, տիրանալ, անակնկալ պահերու: Այն տանն, անիկա, այսինքն՝ այդ իր գէ՛մ բռնուած ափ մը աշխարհը կը մեծնար, բռնելու շափ ամբողջական կամարումը իր ներքի շէնքին: Կեանքը: Հարցուցէ՛ք քանի ունիք ձայն: Փանի ունիք լա՛ր՝ առնելու համար զոնէ՛ տրմազանդ: Դուք բալո՛րդ, որ աղջիկ չէք քաննէն վար ու կը յաւակնիք աշխարհը գիտնալ: Ձեր պատաս-խանը: Այսինքն՝ տուածք: Աւա՛ղ, բիրտ աւարտ մըն է յաճախ, որ պիտի քայքայուի, փչրուի ամէնէն ուշը մեր խաղանքաբերին վրայ: Քստնէն վա՛րը: Հարկաւ: Արիւնում էր ատիկա, լայն, խոր, մշտա-կան, մոռցնելու չափ պզտիկ իր թառապանքը: Խ՛նչ՝ արժէքը ցաւին կամ հանդիման, որ խեղճուկ մարմինին ստեղծերն ի վար, գէ՛մը՝ օտ բիւրազգի մեւերու անտառին, որոնք երանդի ու յորինուածքի տար-բերակերտ առատութեան մէջ կը յանգէին միեւնոյն ցեխին, մեր մի-սերուն ու զնդերներուն ռոկեհանքերէն վերահանուած խրո՛ւկ: Սի-րե՛լ: Բայց կը փախէր անիկա բոռէն, վազելով անոր ետեւէն ազա-լաւոր ու բազմատարած: Սիրե՛լ: Բայց կը համբուրէր անիկա մառ-վի պատկերը գրադէտին, որ, բառի եւ մեծի քահանայապետ, կը խո-սէր անոր վարանոտ զգայարաններուն՝ դաշն ու փորձ գառնութիւ-նը իր ջիւերուն, խոր, սուր, թափանցուն այն բարբառով, որ կա-խարդներունն է, քուրմերունը, հարցուններունը: Որ կը պարզէր ա-նոր իմացականութեան հորիզոններուն՝ մենք ոլորքները գյաւթանա-կան հոռումինն, անսկիզբն ու անվախճանց առ հիւսիսայգը մեր կի-բերուն, որոնք սրունց կը բուսնին ու բիւրեղ կ'ըլլան անծանօթ ա-րեւին դէ՛մ գէ՛մի դրուելով: Ու վեր կ'երգերէ՛ն: Այսինքն՝ ընդլայնե-լով տարազը, հասնելու համար մեւերուն մշտանորոգ ընկուղումին, մարդուն որդեաւար սրտին որդեաւար յուզումներէն անդին: Որ կը

(*) Կնիկէպիւն — Պարեգտ (ամբողջական՝ ոտքէն գլուխը):

տանէր անոր երեւակայութիւնը անլուր տրամութիւններու, մահով հիւրոնուած, պոսակուած ու փառաբանուած: Մոռնա՛լ, ինչո՞ւ: Քառնամենի հրգէ՞՛նք անրի՞ծ ձեւերուն, թէ յիշակաւոր ճանձրոյթի դեռնազեղ կարաւը հոտած կենցաղին: Մոռնա՞ր: Աւա՛ղ, այո՛, երբեմն: Դուրսը՝ ինչպէս ներսը: Մոռնալ ինքզինքը, Գաշնամուրը, որ մտերիմ է երբեմն կիներուն, միշտ աղջիկ է սակայն, այսինքն՝ կնքուած խորհուրդ, որ կը սպասէ լուծող մասներուն: Ու երգը՝ բազմաշաղար թռչուններու աարմ, որ կը թռի փախչիլ ոտկոր վանդակէն, բայց կը մնայ կապ ու կլոր՝ մեր գլխուն վերեւ:

Ու կը պահէր անիկա իր գաղտնիքը բոլորէն, դիւրագին դժուարութեամբ միամիտ հնարքներուն: Բայց կը տառապէր իր իսկ կեղծիքէն, երբ կը տանէր փորձը հեռու, ինքզինքը հափն ծածկելու: Ու կը փնտռէր դրազէտը, անոր մօտ գտնելով ինքզինքը տարօրէն խաղաղ, հաճ, իր տառապազին հնչունքներէն կարծես հրաշքով ազատուելով: Ըլլա՛ր՝ անոր ներկայութիւնը՝ արեւը, այնքան անձուկով քու այնքան փոյթով սպասուած զարնան հեռքերէն: Ո՛ր աղջիկին միւր վար կը մնայ հարիւր դարունէ:

Այսպէս կ'ապրեն աղջիկները, մէկ-երկու, երբեմն ալ տարիներ:

Յետո՞ւ:

— Կը յողնին:

Յետո՞ւ:

— Կ'իյնան գետին, ինչպէս ծաղիկներ՝ յողնա՛ծ, լոյսէ, դուլէ, մա՛նաւանդ՝ սպասելէ:

Ո՛ր հրաշքը միջամտեց, որպէսզի չըլլար այդ կործանումը, երբ անոր մորթին տակ պտրտող սարսուռը ելաւ երեսին, խելայեղ վախի մը մէջէն: Գրագէտին գրկին մէջ, որ պլլուած էր իր զգլխի տրամութիւններէն մէկուն, անիկա քաշուեցաւ Մեղքին մայր դուռնէն, բայց չմտաւ հոն: Սահակ Պարդեւեան արցունքով համբուրեց այդ ընկրկումը: Անոր ազտակուտ կեանքին սխալի մէկ հատիկը, ծաղիկն էր ատիկա: Պարկե՛շտ էր եղած առաջին անգամ:

Հիմա, որ այս պատմութեան աւագ դէմքերուն ծանօթացումը ըրի՛ք, ու գիտէ՛ք արեւմտահայ մեծատաղանդ արձակագիրը յիշունէն վեր, բայց տարօրէն տկար, ննթակայ քսանը նոր անցած աղջկան մը ուրիշութիւն, հիմա կրնա՞ք մօտենալ ուրիշներու, բոլորն ալ Օրբորդ Սոնա Գոհարեանի ձուածիրին մէջ չըջան ընող միութիւններ, աւելի կամ նուազ խորհրդաւոր, որոնք իրարու վազեն, իրենցմէ վեր ու ժերէ բռնափոր: Գաճաճն ու հսկան իրար կ'արժեն:

Ամէնէն շահեկանը, ու այլապէս կենդանին՝ Սփլանտիտ Փալատի Տէր ու Տնօրէն Միւսս Մարանը:

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

(Շար. 10)

SԱՐԱԿՈՅՍ...


Զիւնը կ'իջնէ
 Ու տարակոյսն ինձմէ ներս իր գոյները կը ձուլէ,
 Թէ մերկացած ծառերով՝
 Փողոցն անվերջ կ'երկարի...
 Ո՛չ մէկ հասցէ վազուց գաղթած քաջամներէն:
 Շարժումը հոս ձեւ չունի,
 Զոր եւ իրշեւ. գիտակ կրեմ:
 Թախծանուագ տերեւներու յաւաքկատր ստուերները թանձրացան,
 Մինչ դուն, սիրելիս,
 Ապաստանած ժամանակի լռութեան՝
 Հայեացքիդ մէջ դեռ անվթար կը պանքս
 Զիւնն որ կ'իջնէ,
 Մինչ տարակոյսն ինձմէ ներս իր գոյները կը ձուլէ...

❖

Օրերէս ծառ անապատէն,
 Դուն հեռացար իբրեւ ստուեր,
 Քայլերուդ խռլ արձագանգէն
 Հովը թռչնած վարդեր քաղեց:

Շշուկի մը ստուերին տակ
 Կը հանդիպի՞մք արդեօք կրկին,
 Ինչ փայթ յայնժամ գիշերն իջնէր
 Քեզ պարուրող աչքերուս մէջ...

ՓԱՆՈՍ ԶԵՐԱՆԵԱՆ



Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

ՅԱԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԿԵՌՈՒԹԱՌՈՐՈՒՄԸ

ԿԱՄ

ՄՕՐԻՑ Գ. ԷՇԸՐԻ

ԿԱԽԱՐԴԱՆՔԸ



«Նրբ կայսրը նայումաճքը սեւեռեց հայելիին, դէմ-
քը նայե վերածուեցաւ արեւան կարմիր գունտի մը, ա-
պա՛ մահագոյն եւ ժահրածոր գանկի մը. սարսափա-
հար ընկրկեցաւ ան: Ձեռքդ վստմութիւն,— ըսաւ Շէն-
հում, — մի հեռանա: Այն ինչ որ տեսա՛մ ձեր կեան-
քին օկիզքն աւ վախճանն էին միայն. շարունակեցէ՛ք
նայիլ, եւ հոն պիտի տեսնէ՛ք այն քայտը քանկրը, որոնք
տակաւին կրնան պատահիլ, իսկ երբ հասնի՛ք յափշտա-
կումի լրումին՝ հայելին ձեզի պիտի յայտնէ անկարելի
քաններն անգամ»:

(«Կախարդական Հայելիներ»)

Մօրից Գորնելիս Էշըրի (1898-1972) փայտափոր տպագրութիւնները
պէտք է դասաւորել գեղարուեստական նոր ստորոգութեան մը տակ, իբրեւ
արուեստ, որ կ'իյնայ նկարչութեան, երաժշտութեան, փիլիսոփայութեան եւ
ուսողութեան միջեւ: Արտայայտութեան գերազանցապէս ինքնուրոյն իր կեր-
պը կը հիմնուի իրականութեան աշխարհի պատկերացումի մը վրայ, որ էս-

պէս կը տարբերի յիշեալ մարդերուն մէջ ստեղծագործողներուն յատուկ ձեւերէն: Սակայն այն տարբերը, որոնք էլլըրի արուեստը կը յատկանշեն եւ կ'անջատեն զայն միւսներէն, միաժամանակ կը կատարեն համադրական դեր մը, այսինքն՝ անոնք կը բերեն նկարչութիւնը, երաժշտութիւնը, փիլիսոփայութիւնը եւ ուսուցչութիւնը միակ գործունէութեան մը մէջ, ուղղուած իրականութեան աւելի համապարփակ ճանաչումին:

Իրրեւ նկարչական նմոյշներ, էլլըրի «սոսագրութիւններ» արտայայտութիւններն են այնպիսի արամադրութեան մը, որ, պիծերու, ձեւերու եւ կացութեանց վերածուած՝ կը յամենայ ողբերգականին եւ ցայիլականին միջեւ, յաճախ դիտողը տանելով մղձաւանջներու, այն բաներուն, զորս էլլըր կը տեսնէ՝ «գիշերուան խաւարին» մէջ(1):

Իրրեւ երաժշտութեան տեսակ, իր արուեստը մեղեդի մըն է, որ կ'ընթանայ յաւիտենականութեան կշռոյթով, սակայն՝ ահագնագային ընդմիջումներով կտրատուած:

Իրրեւ իմաստասիրական դրոյթ, էլլըրի ստեղծած համակարգը կը պարունակէ տրամախոհութիւն մը, որ ո՛չ միայն կ'անդրանցնի մարդկային մըտածողութեան ստորագրութիւնները, այլեւ կ'առաջարկէ անոնց եւ իրականութեան միջեւ ներդաշնակութեան նոր կարելիութիւններ՝ ինքը, այսինքն՝ էլլըրեան այս մտածելակերպը տարուբերելով կարելիին եւ անկարելիին, հանձարին եւ յիմարութեան լուսանցքին երկու կողմերը:

Իրրեւ ճշգրիտ դիտութեան ձեւ, այս արուեստը կը յայտնաբերէ այնպիսի արտաբանութիւն մը, որ կարծէք տեսողեակ է սեփական ուժին, սակայն որուն շնորհիւ կը յաջողի թափանցել թուարանական բարդ գործողութեանց կառոյցէն ներս՝ գուշակելով անոնց լուծումները (էլլըրի գործերը յաճախ կ'օգտագործուին ուսողական գրքերու մէջ, զանազան անսութեանց իրրեւ անտղական բացատրութիւններ):


Էլլըր ծնած է Լուարտըն, Հոլանտա. փայտի վրայ փորագրութիւն եւ կրօնփիլոսոփայութեան ուսանած է Հարլէմի Գեղարուեստից եւ Ճարտարապետութեան Դպրոցէն ներս, ուսուցիչ ունենալով՝ Ս. Ժ. Տէ Մէսքուիթան, որ իր մասին աշակերտական տեղեկագրի մը մէջ գրած է. «... Շատ պրկուած ուսանող է, խառնուածքը չափազանց գրական-փիլիսոփայական, իրեն կը սրկուի զգացումն ու կիրքը, շատ քիչ արուեստագիտական մկարագրի տէր անհատ»(2): Աւարակէ ետք, 1922ին՝ էլլըր ճամբորդած է Հարաւային Եւրոպայի եւ Միջերկրականեան երկիրները, յաճախ բեռնատար նաւերու վրայ, իր թափան համետ պարմաններու պատճառաւ: 1923-1935 սպրած է Իտալիա, 1941ին վերադարձած է Պարիս, Հոլանտա, շարունակելով ճամբորդութիւնները զէպի նոյն վայրերը մինչեւ 1962, իր հիւանդութիւնը: 1969ին աւարտած է վերջին գործը՝ «Օմեր»։ Մեռած է 1972ին:

Էլլըր ձգած է 70 «սոսագրութիւններ», չհաշուած այն րնակարներն ու զանազան գործերը, զորս կատարած է մինչեւ 1937: Այս «սոսագրութեան» նիւթերը առհասարակ կը դասաւորուին երեք գլուխներու տակ. —

— Տարածային կառոյցներ. կը բաժնուին երեք խումբի՝ բնանկարային դործեր, տարբեր աշխարհներու ներթափանցումներ, վերացական-թուարանական ամբողջութիւններ:

— Տափակ-մակերեսներու կառոյցներ. կը բաժնուին մեքամորֆիկ համադրութեանց, չըջանական եւ համադրութեանց, յաւիտենականութեան մերձեցումներու:

— Միջոցի եւ տափակ մակերեսներու յարաբերական աշխատանքներ.



Փերսիսթիսի ընթացիկ գործը՝ «Բարձր և ցած», 1947

կը բաժնուին երկուքին հակադրութեանց, փերսիսթիսի գործերու և հանկարելի՝ ձեւերու(3) :

Էլլըրի արուեստադիտական գործացումը ոնցած է չորս հանգրուաններէ .

— Բնակարչական շրջան, 1922–1937, ուր ճեպագրութիւններուն նիւթերը գլխաւորաբար բնակարէնք են, Ուաթիւք–մոքթենք, տարբեր աշխարհներու ներթափանցումներ, կարեւորագոյն գործերն են, — «Նաթիւք–մոքթենք յեյիւլ» (1934), «Մեքամոքթոսիս» (1937) :

— «Մեքամոքթիք» շրջան, 1937–1945, ուր շեշտը կը դրուի բնութեան մէջ փոփոխութեան և գերափոխութեան իրողութեան վրայ, կարեւորագոյն գործերն են, — «Գիշեր և ցերեկ» (1938), նախապատրաստական աշխատանք մը՝ «Կախարդական հայելի»-ին համար (վերջնական ապագրութիւնը կատարւած՝ 1946ին), «Գծող ձեռքեր» (վերջնական ապագրութիւնը՝ 1952ին) :


— Փերսիսթիսի շրջան, 1945էն մինչեւ յիսունականներու սկիզբ

րը, ուր կը կատարէ փորձեր՝ աւանդական փրկափեթիւի օրէնքներէն անդին անցնելու. սակայն, աստիճանաբար կը վերադառնայ վերջիններուն՝ իբրեւ աւելի գործօն միջոցներու արտայայտութեան յախտնականութիւնը. կարեւորագոյն գործերն են, — «Բալմը եւ ցած» (1947), «Բիւրեղ» (1947), «Ջըր-վէժ» (վերջնական տպագրութիւնը՝ 1961թն)։

— Յախտնականութեան մերձեցումները, յիսունականներէն մինչեւ 1969՝ կարեւորագոյն գործն է, — «Տպագրութեանց դաշիին» (1956), որ, էջերէ կարծիքով՝ իր յաջողագոյն գործն է. միւս գործերն են, — «Նրզաճուկի սառնամանիկ» (1959), «Օձեր» (1969)։

Արուեստագիտական իր զարգացումին այս բոլոր հանգրուաններուն, էջեր աշխատած է յարատեւ մղումով մը՝ յայտնաբերելու նոր կարելիութիւններ փորագրական արուեստին համար։ Անշուշտ իր արտասովոր տաղանդը մեծապէս օգնած է իրեն իրադրոճելու իր ծրագիրը՝ նոր օրէնքներ եւ ըսկզբունքներ ներմուծելու այդ արուեստներուն քիչ մը կարծրացած աւանդութիւններուն, ո՛չ միայն ձեւարանական, այլեւ՝ իմացական մակարդակի վրայ։ Միջոցի եւ մակերեսներու կշռութեամբ բաժանումները, մեթամորֆիք համադրութիւնները, եւ հետագային «յախտնականութեան մերձեցումները», հակառակ իրենց թեքիք զօռաբութեան՝ էջերի պարագային եղած են բնական աշխատանքներ։ Ստեղծագործական այս դիւրութիւնը իր գործերուն ազահոված է գեղարուեստական հաստատ արժէք մը եւ զանոնք պաշտպանած՝ այս արուեստներուն սպառնացող սովորական վտանգներէն, ինչպիսին են անոնց վերածումը «տեսողական խաբկանքներու», կամ՝ դժագրական «մարգանքներու»։ Հասկնալիօրէն, էջեր մեծ հիացում ունի մաւրական թէսաւազական արուեստին նկատմամբ, մասնաւորաբար՝ Ալ-Համպրայի մէջ գտնուած նմոյշներուն յատուկ ոճին՝ մակերեսներու բաժանումի եւ լրացուցիչ ձեւերու ստեղծումին առնչութեամբ։ Կատարած է խոր եւ երկարատեւ սերտօղութիւններ այս ուղղութեամբ՝ զարդարուեստի, թուարանական գիտութեանց եւ, անշուշտ, գծազարկան արուեստին առհասարակ։ Յաճախ սպառնիչ այս աշխատանքները գինը աստիճանաբար առաջնորդած են իր սկզբնական ծրագրին իրագործումին, այն է՝ ձեւաւորումը ամբողջական եւ գործնական դրոյթի մը։ 1942ին, մեթամորֆիք եւ զըջանայինս դժագրութեան այս սիւսթեմը արդէն հասունցած է իր մօտ։ 1958ին դրած է գիրք մը՝ «Տարածային-Թուսալական համադրութիւններ»(5)։ Ի մեծ գոհունակութիւն, անշուշտ, էջերի, այս գրոյթը այնքան կատարելագործուած էր, որ, ինչպէս ինք կ'ըսէ, այլեւս իր տիպարները (ձուկեր, սողուններ, թռչուններ, մարդկային, սատանայական եւ հրեշտակային կերպարներ, շէնքեր, բոյսեր, եւ այլն) կ'առաջանային մեքենականօրէն եւ նոյնքան դիւրութեամբ եւ ճշգրտութեամբ կը վերափոխուէին գոյութեան տարբեր կերպերու։

Այստեղ սակայն, պէտք է յիշեցնել եւ շեշտել այն իրողութիւնը, թէ էջերի գործերը, հակառակ իրենց ձեւարանական հետաքրքրականութեան, պէտք չէ որ դիտուին իբրեւ գերադանցապէս տեսողական վայելքի առարկաներ. սրովհետեւ իրենց տարօրինակութիւնները, երբեմն նոյնիսկ այլանդակութիւնները կրնան ենթական առաջնորդել այն թիւր ենթադրութեան, թէ իր քիչ մը միջնադարեան, երբեմն վրդովիչ կերպարները կրնան ըլլալ արդիւնքները նկարիչին իսկ հիւանդագին եւ այլասերած աշխարհահայեցքին։ Այդ տիպարները առանձին առած, այսինքն՝ ամբողջութենէն դուրս բերուած, կը կորսնցնեն իրենց իմաստը. էջերի գործերը ամբողջութիւններ են, ուր ձեւերը, սեմպոլները եւ հոգեկան-զգացական տարրերը կը կազմեն անքակտելի միութիւններ. հետեւաբար, գիտողը պէտք է փորձէ ձեւով մը շաղուել անոնց միջոյցներին մէջ, ապրել անոնց ներքին օրէնքով։



Ճշգրտութեամբ քիւրեղացած գործ մը՝ Հիմալ գնդերը, 1962

Բացայայտորէն՝ էջերի արուեստին իրայատուկ բնոյթը սահմանափակած է իր ստեղծագործական ուժերը շատ վերացական եւ ամբողջովին իմացական մակարդակի մը, այն աստիճան, որ դիտողը այդ տպագրութիւնները նկատէր անկենդան, նոյնիսկ անմարդկային գործեր, արտագրուած՝ մեքենական հանճարի մը կողմէ։ Հետեւեալ մէջբերումը էջերէն՝ թերեւ լաւագոյնս լուսաբանէ այս կէտը։

«Դարծառ ոչ մէկ տաքնչութիւն ունի մարդոց կամ հոգեբանութեան հետ։ Ինծի կը պակսին իրականութիւնը բնութեան եւ ամօր հետ ներդաշնակութիւնը համար անհրաժեշտ հիմնական հասկացողութիւնները։ Փաստօրէն՝ գործերս չեն հալիր իրականութեան։ Վստահ եմ, որ ամբողջովին սխալ ուղղութիւն է այս (...) Գիտեմ, թէ իւրաքանչիւր անհատ պարտաւոր է շփման մէջ մտնելու մարդոց հետ, օգնելու անոնց, քաղեալի ստեղծութիւնը նկողնաւորին բարօրութեան պայմանները։ Սակայն, ես ոչ մէկ հետաքրքրուելիս ունիմ մարդկութեան նկատմամբ․ երկչու եմ եւ մեծ դժուարութիւն ունիմ յարմարելու, քարեկամաւազու՝ մանուշակ օտարներու հետ (...) Ինչո՞ւ պէտք է «քիթը մտցնել» այս թշուառական իրապաշտութեան մէջ։ Կարելի չէ՞ պարզապէս մոռնալ զայն եւ վաշելի կեանքը։ Յաճախ կ'ունենամ այն մտածումը, թէ «արդեօ՞ք բաւականաչափ լուրջ է պաշտաստ», կամ՝ «կարելի՞ է շարունակել այսպէս», երեւակայեցէ՛ք, թէ կ'աշխատիմ այսպիսի գործերու վրայ, երբ անդին, պատկերասփիւռէն կը տեսնեմք՝ Վիեթնամի սարսափելի պատերազմը...» (6)։

Մայրայեղօրէն զգայուն, խորապէս անկեղծ եւ մարդկայնական արուեստագէտ մը միայն կրնայ գրել այս տողերը․ դիտողը եւ անշուշտ քննադատը։

տը, այս վկայութեան դիմաց պէտք է մօտենան իշխող արուեստին:

Էջեր լուծումներ կը փնտռէ արուեստի եւ իրականութեան խնդրին համար: Ամէն մարդէ աւելի, ինք կը գիտակցի այն իրողութեան, որ իր գործը կը գտնուի «անիրական» հողի վրայ: Ժիւս կողմէ, սակայն, կը յաջողի խուսափիլ գերիբաղաւորական կեցութեան: ան նաեւ չի գառնար զտփեռաց մը, որ իր արուեստին ուժովը կը ջնջէ բոլոր բացարձակ շփանիշները, կը վերացնէ սահմանները բարիին եւ չարին, գեղեցիկին եւ այլանշանին, կարելիին եւ անկարելիին միջեւ: Որովհետեւ Էջեր չ'օգտագործեն իրերուն կրկնակի բնոյթը՝ ջրկյու համար մարդկային ճանաչողութիւնը, իրեն համար տիեզերքը անսահմանօրէն տարածուն խորիւր մըն է, պարունակողը՝ բոլոր հակադիր գոյութեանց, նաեւ՝ անսպառ աղբիւրը բոլոր կարելիութեանց, սակայն, համաձայն տրամաբանական օրէնքներու: Էջեր յափշտակութեամբ քննութեան մէջ փոփոխութեան իրողութեամբ. զարմացով եւ հիացումով կը հետեւի տարբեր տարբերուն եւ էութեանց իրարու փոփոխութեան: Հերակլիտեսի նման, իր այս գիտքը, միտքը, զոգոսը՝ կ'արտայայտէ յարակաւական, հասկնալի կայան խորհուրդներով, կամ այս պարագային՝ «տապադրութիւններով»:

Երկակիութիւնը (ինչպէս նաեւ՝ փոփոխութիւնը) իրերուն հիմնական յատկանիշն է. «Երկակիութիւնը կեանքն է» (7), կը գրէ. իսկ զգարմամբ՝ կեանքի աղբիւրն է: Իրեւել յաւիտեական զարմացող մը՝ Էջեր կ'արձանագրէ իր տապադրութիւնները այնպէս՝ ինչպէս որ ինք բռնած է արուածները: Միջին դիտողին համար իր գործերը հանելուկներ են. կը պարունակեն բազադրեալ խմբաներ՝ հերակլիտեսի խորհուրդներուն նման: Հերակլիտեսի համար (ծնած՝ Եփեսոս, Ք. Ա. Ե. դարուն) քաղաք Միլէ եմ, իսկ փոփոխութիւնը անոնց երկնական յատկանիշն է: Այս է Հերակլիտեսի գիտքը, միտքը կամ զոգոսը: Իրականութեան հիմնական բնոյթը ըլլալ է միաժամանակ ինքզինքը եւ ինքզինքէն տարբեր: Փոխուելու համար՝ իրը պէտք է որ վերածուի ինքզինքէն տարբեր վիճակի մը, սակայն փոխուելէ ետք, անիկա պէտք է շարունակէ մնալ ինքզինքը՝ իրեն ինքնուրոյն ենթակայ. ուրեմն, որեւէ իր միութիւն մըն է հակադիր կամ տարբեր վիճակներու, եւ հոս ալ կը կայանայ անոր իսկական ինքնութիւնը:

Հակառակ ակներեւ նախնականութեան, հերակլիտեսի փիլիսոփայութիւնը կը պարունակէ արամարանութեան մեծ ուժականութիւն մը եւ այս պատճառով խաղացած է կարեւոր դեր արեւմտեան քաղաքակրթութեան զարգացումին մէջ: Հետեւաբար, աւելորդ է արծարծել այն հարցը, թէ Էջեր ծանօթ էր հերակլիտեսի մտածողութեան, որովհետեւ այս վերջինը կը կազմէ յունական դասական մշակութիւն հիմնական տարրերէն մէկը, իսկ այս մշակութիւնը կը հանդիսանայ զլիսուոր աղբիւրը միջնադարեան եւ արդի մտածողութեան: Էջերի աշխարհահայեացքը շատ մօտէն կ'առնէ յունական պատմութեան փիլիսոփայութեան հետ, այսինքն՝ անիկա քրիստոնէականին պէս «վախճանային» չէ. անոր համար պատմութիւնը չի զարգանար զգալի նախադասմանում վախճան մը: Յունականին պէս, իրը՝ պատմութեան շրջանակաւ՝ յաւիտեական հասկացութիւն մըն է. իրեն համար գոյութիւն չունի կրօնա-բարոյական եւ միաժամանակ տիեզերական գիշտութիւն մը, նպատակ մը, որուն ուղղութեամբ ըլլաւ մարդկութիւնը եւ որ հայթայթէր շփանիշներ:

Էջերի անկարողութիւնը՝ մարդոց հետ շփուելու, զինքը առաջնորդած է ապա-ընկերային կեցութեան, եւ ոչ թէ՛ հակա-ընկերային դիրքորոշումի: Գիտակից իր տկարութեան՝ Էջեր զարգացուցած է իրականութեան հետ հարկակցելու տարբեր մակարդակ մը՝ իր արուեստը: Այս նոր խաւը իր տարբեր կը օտանայ նիւթական-արտաքին իրականութենէն, այս տարբերը աւետազէտին ներսիդին կը վերածուի մզաւանջներու, հրազներու. «ԵՍԻ՛



Նժդեհի մը ժամանակից լեռնէն՝ «Գիշեր եւ ցերեկ», 1938

միայն գիտնայի՜ք այն թաները, զորս կը տեսնեմ գիշերուամ խաւարին մէջ,—
կը գրէ առ,— տեսածներս յիշվին արտադրելու անկարողութիւնը կը բշտա-
նացնէ, կը զգեստնէ զիս։ Այդ գաղափարներուն առ տեսիլքներուն հետ բազմա-
տաճ՝ գործերս ճախողութիւններ են, որովհետեւ ամենք չեն յաջողիր մասնիկ
մը թսկ տալ այն ամբողջութեան, որուն կը պատկանին...»(9)։

Կը թուի, թէ վերջին հաշուով, այս հրահանքուն ամբողջական վերաբ-
առադրութեան մէջ կը կայանայ էլլըրի յաղթանակը, իրազործումը՝ իր դեղա-
դիտական իսկաններուն, անշուշտ նաեւ՝ իր մարդկային անհատականութեան։
Գերմաքական իր ճիղերուն մէջ տակալն, դերազոնցելու իր իսկ ստեղծա-
դրածական տաճիւրը, էլլըր կը դիտակցի սեփական կարելիութեանց սահմանա-
փակութեան, կը հաստատէ անկարելի փորձեր, եւ ճակատագրական այս պայ-
տարին մէջ կը դառնայ ողբերգական հերոս։ Իր արուեստը հանդրուած առ
հանդրուած, ծալք առ ծալք յայտնութիւնն է ողբերգական ժաշտումին, ուր
անիկա կը ներկայանայ իբրեւ մարդկային եւ մարդկայական արուեստագէտ։

Մասնակի յաջողութիւնները չեն պահանջեր էլլըրը. ձախողութիւնը դիմա-
կը պատանջն է. երբեմն կը մզէ սաթիբականութեան, նոյնիսկ սատիզմի։ Առ-
նիկա դիտողը կ'ենթադրէ իր մղձաւանջներու սարսափին, խաւարի արհա-
ւիթին եւ անցողակի ժամանակին մէջ կ'եսնքի խեղճութեան ցաւին։ Էլլըր
յարատեւօրէն կը ջանայ իր բոլոր յոյզերը կողապարել, ընդհուլել յաւիտե-
ական շարժումի ներքին արտաբանութեան։ Այս տարազներով ներկայաց-
ւած՝ իր ներշնչումը որքան ալ անկեղծ եւ խոր ըլլայ, կը կորսնցնէ ուժիջա-
կանութիւնը եւ միջին դիտողը կը մասնուի լուրջ գծուարութեան՝ զգացական
յարաբերութեան մէջ մանկու պորձին հետ։ Բայց անգամ մը, որ այս դոր-
ծերուն ձեւաբանական բարդութիւնները պարզուին, եւ բացատրուի էլլըրի
գիրքը, կարելի կ'ըլլայ թափանցել իր համադրութիւններուն եւ ըմբռնել առ-
նոնց տարօրինակ էլլըրը։ Կարելի կ'ըլլայ նոյնիսկ ընդունիլ տիպարներուն
սիրականութիւնը։


Հակառակ իր յանախ յայտարարած գծագրութեան՝ ներշնչումը լիովին
արտայայտելու անկարողութեան պատճառաւ, էլլըր մեֆիստոֆէլեան վարդե-

տույթները կը ստեղծէ անկարելի աշխարհներ՝ մարդուն տեսողութեան դիմաց, նաեւ՝ իմացականութեան։ Նոյնքան ռատանայական ժեսթով մը անիկա կը նահանջէ, եւ կը ծաղրէ մարդուն ճիգը՝ քովանդակելու յաւիտենականութիւնը արուեստի ճամբով իսկ։

Յաւիտենականութեան գաղափարը, սակայն, աստիճանաբար կը գրաւէ էջերի սմբողը ուշագործութիւնը. մասնաւորաբար իր կեանքին վերջաւորութեան անիկա կը վերածուի մտածեւեռումի մը. կը գրէ. «... Պարզապէս մըտային մարգամբ մը, խաղ մը չէ, որ կ'ընենք. խորապէս գիտակից ենք այն իւրողութեան, քէ կ'ապրինք ճիշդակամ, երեւ հեռաւորութիւններով իրականութեան մը մէջ եւ մեր ուժերուն սահմաններէն շատ հեռու է արտադրութիւնը (տափակ մակերեսի մը վրայ) այնպիսի տարածութեան մը, որ յաւիտենական լինելու արժանիութիւնը թոյլ տուէր զգալու իրականութիւնը (10)։ յաւիտենական շարժումի պատկերացումը կերպարուեստի միջոցներով անկարելի աշխատանք է, սակայն նախաձեռնութիւնը՝ արժանի յաւիտեալ փորձի։ 1959 ին դրուած յօդուածի մը մէջ, էջեր կը յայտնէ իր դժգոհութիւնը այն արուեստագէտներուն նկատմամբ, որոնք կ'առաջնորդուին անհասկնալի մգտումներով, ապա՝ դառնալով իր նմաններուն, կը գրէ. «Կամ նաեւ մարդիկ, որոնք առանց մեծ զարգացումի կամ գիտապաշարի, իրենց ժամանակը կ'անցընեն երեւակայածին պատկերներ գծելով, սակայն որոնք իրենց ներսիցի կը գգան աստիճանաբար մեծցող ձրգնութեան յաջգիծ։ Չենք կրնար հաւատալ, որ տեղ մը... հեռաւոր աստղերէն ամէնիմ կրնան գոյութիւն ունենալ տեղեւորներ, որոնցմէ ամէնիմ ոչինչ կայ այլևս։ Պարագայութեան իմացքը անշուշտ կը պարտւնակէ՝ որոշ իմաստ մը. միջոց մը կրնայ ըլլալ պարապ կամ լիցում, սակայն անկարելի է երեւակայել «ոչինչ»՝ իրեն միջոցին բացակայութիւնը։ չիշդ այս պատճառով, այնքան աստիճան, որ մարդիկ կ'ապրին այս երկրագունդին վրայ, ամենք կ'առչած պիտի մնան անգիտականի, դժոխքի, դրախտի, յարութեան, միլիամայի եւ նման գաղափարներ» (11)։ Յաւիտենականութեան գաղափարը, եւ անշուշտ անոր փնտրութիւնը՝ իմացական, գեղագիտական եւ հոգեբանական անհրաժեշտութիւն մըն է էջերի համար, որքան ալ յուսահատական ըլլան այդ ուղղութեամբ իր ճիգերը։ Կ'ըսէ, թէ երբ կ'աշխատի, մամանակը կ'անցնի կարծէք յաւիտենական մակարդակին վրայ. երբ գործը կ'աւարտի, կը գիտակցի, թէ ստեղծուածը կայուն բան մըն է, հասկնալ տարբեր իր ներկայացուցած գաղափարէն (12)։

Տիեզերքը կ'ընթացայ օրէնքներով, որոնք աւարկայական են, անկախ՝ մարդուն անոնց գիտակցումէն։ Պատելով այս օրէնքներուն մասին, որոնք արտայայտութիւնները ըլլալ կը փորձեն իր գործերը, մասնաւորաբար՝ հանդրառնային համագործութիւնները եւ յաւիտենականութեան միջոցներով, կը գրէ. «Կը երեւայ, երբ կը դիտեմ տիեզերքի օրէնքներուն կատարելութիւնը. հանդարտ խղճով՝ կ'արձանագրեմ վկայութիւններս. քուսարանութեան օրէնքները, նաեւ բնութեան օրէնքները մենք չէ, որ ստեղծած ենք. մարդկային ցիւտեր չեն ամենք. պարզապէս գոյութիւն ունին ամենք, անկախ մեր իմացականութենէն. առաւելագոյնը, որ կրնանք ընել՝ փնտռել եւ ստիպել մը գտնուի» (13)։ «Երբ կը յաջողիմ ձեռով մը արտայայտել այս օրէնքներէն իմաց մը համապատասխան մը մէջ, կը կարծեմ, քէ աշխարհի տեղեւոր գեղեցիկ բանը ստեղծած եմ եւ սէրս ամէն բնութեամբ աւելի մեծ է, քան ա՛յն»՝ գործնականութեամբ իմացութեամբ... (14)։ Որովհետեւ էջեր չէ յաջողի գիտակցիլ այն իրողութեան, թէ իրականութեան մէջ կ'ատկանիւր, այս պարագային՝ յաւիտենականութիւնը, ամէն բան չ'ըսեր անոր մասին, իրեն համոզութիւն։

Իմաստասիրականօրէն քիչ մը միամիտ, ձեւաբանօրէն արտասովոր,



Քանդակաւոր շրջանի գործերէն՝
«Նաթիւր-մորթ հայելիով», 1934



...եւ յաւիտենականութեան մերձեցումի
շրջանէն՝ «Օմեր», 1969

Խորհրդանշական գեանի վրայ անուշնի իշխողի «տպագրութիւնները» կը յա-
ջողին սակայն կախարդական հայելիներու նման դիտողին փոխանցել անկա-
րելի աշխարհներ, իր երազներուն, սարսափներուն եւ ձգտումներուն մթնո-
լորտները. այս յաջողութեան մէջ կը կայանայ նաեւ անոնց գեղեցկութիւնը:

ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

ՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Bruno Ernst, «The Magic World of M. C. Escher»— (Ballantine Books; New York, 1976), p. 16
2. Նայն, էջ 7-8
3. Նայն, էջ 20
4. Նայն, էջ 22-23
5. Նայն, էջ 36
6. Նայն, էջ 17
7. Նայն, էջ 17
8. Նայն, էջ 14
9. Նայն, էջ 16
10. Նայն, էջ 102
11. «The World of M. C. Escher», (Harry N. Abrams, Inc., Publishers, New York, 1971), p. 39
12. Նայն, էջ 39-40
13. B. Ernst, «The Magic...», p. 35
14. Նայն, էջ 18

Լ. Մ Կ Ր Տ Ջ Ե Ա Ն

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ ՄԵՐ ՕՐԵՐԻՆ

Ժամանակակից Չինաստանի քաղաքական, հասարակական ու տնտեսական ընթացիկ կացութեան վերաբերեալ արտաքին աշխարհում անսպակառ են տեղեկատուական մեծ ու փոքր հաղորդումները: Այդ հաղորդումները կազմըւում, մշակւում եւ տեղ են հասցւում թէ՛ բուն չինական իշխանութիւններին եւ թէ՛ Չինաստանում հաւատարմագրուած արտասահմանեան որոշ թուով լրագրողներին նախաձեռնութեամբ ու ֆանքերով, բնականաբար՝ իւրաքանչիւր կողմի անսանկիւնից բխող համապատասխան արդիւնքներով, քանի որ զորեւ սեննեք միակուսակցական իշխանութեամբ կառավարուող երկրի ու դրանով իսկ պայմանաւորուած իւրայատուկ խառնաշփոթ ու հակասական կացութեան հետ:

Ուրեմն, յիշեալ ասպարէզներում քիչ թէ շատ կանոնաւոր տեղեկատուութիւն, այսպէս թէ՛ այնպէս, գոյութիւն ունի եւ անհասարակ չենք կարող առել, թէ՛ մեր օրերի Չինաստանը արտաքին աշխարհից թուրովին կարուած է չինական պարսպով: Կամ որեւէ այլ կերպ: Բայց մշակութային, դրական ու գիտական իրողութիւնների վերաբերեալ տեղեկատուութիւնը, իբրեւ կանոն, անհամեմատ քիչ է: Դա նախ կարելի է բացատրել նրանով, որ այսպէս կոչուած «մշակութային յեղափոխութեան» տարիներին Չինաստանը համատարած մեծ ցնցումի ենթարկուեց եւ մշակութի հետ կապուած ամէն ինչ պարզապէս ծաղրի առարկայ դարձաւ ու ոտնակոխ արուեց, եւ հիմա իսկապէս ուշքի գալու համար երկար ժամանակ է պէտք: Բացի այդ, ընդհանուր կարգի տեղեկատուութիւն հաղորդելը աւելի գիւրին է ու մատչելի, մինչդեռ գրական-մշակութային կեանքը ներկայացնելը կապուած է մասնագիտական քրանալման խուզարկումների ու յաւելեալ ֆանքերի հետ, ինչ որ, նոյնիսկ յաջողութեան դէպքում, դարձեալ բաւական ժամանակ է պահանջում:

Այս պայմաններում, գրականութեան հետ կապուած իւրաքանչիւր թէկուզ մասնակի լուր մի տեսակ անակնկալ է թուում, այդպիսի լուրերի ակրեյալտ սակաւութեան հետեւանքով: Նման լուրերը քովորաբար իրենց պարունակութիւնից աւելի բարձր կշիռ են ձեռքբերում, իրենց հերթին նոր լոյսի տակ ներկայացնելով չինական երկրի ու բնակչութեան կեանքի նաեւ միւս կողմերը: Չինաստանը երեւում է ո՛չ միայն իր միասնական դիմակով ու արտաքին գծերով, այլեւ՝ ներքին մարդկային ապրումներով, կենսական թրթրութիւններով, այսինքն՝ տարրերակուած ինքնութեամբ:

Այսպէս, 1982ի Դեկտեմբերի կէսին հեռագրական դարձակալութիւնները հաղորդեցին մի հակիրճ լուր՝ մի գրական մրցանակաբաշխութեան մասին: Եւ այդ հակիրճ լուրի օգնութեամբ, ըստ էութեան, հնարաւոր է դառնում պատկերացում կազմել աւելի լայն շրջանակի իրողութիւնների մասին: Բանից պարզւում է, որ չինական յայտնի գրող Մաօ Դունի անունով գրական

ժրջանակ է սահմանուել, որը Պեկինում, առաջին անգամը լինելով, բաշխե-
ւել է յիշեալ Դեկտեմբերի կէսին ժրջանակներին: 1500ական զոյաբի
հաշուով պարզեցանարուեցին վեց դրողներ, որոնք հանդիսաւոր արարողու-
թեան ժամանակ պարտաւորուեցին զկապուած մնալ իրապաշտութեանն ու
սկսել լիովնալ հաստատել զանպուածներին հետ: Պարզեցանարուածներէց
Յիւսէ կեանքիւ իր «Սու Մառն եւ իր դուստրը» վէպում նկարագրում է մի
դիւղացու ապրած ստապանքները մշակութային յեղափոխութեան ժամա-
նակ: Իսկ ժրջանակաբաշխութեան առիթով «Սինհուա» գործակալութեան
կողմէ չարագորոյցի հրաւիրուած մի գրաքննադատ յայտարարեց, թէ չինա-
կան դրականութիւնը, մշակութային յեղափոխութեան պատճառով, ուղիղ
առաջ տարով յետ է մնացել: Մաօ Դունի ժրջանակը պիտի բաշխուի երեք
տարին մէկ անգամ:

Կամ էլ՝ նոյն հեռագրական գործակալութիւններէ 1983ի Յունուարին
հաղորդած մի այլ պերնալիտ իրողութիւն: Բանից պարզուած է, որ չին գրող
Բու Նաիֆուն տարիներէ ընթացիւմ գրել է մի գիրք, որն իր ընդհանուր
երկարութեամբ երկուսուկէս անգամ անելի մեծ է ուսու դասական մեծանուն
գրող Լեւ Տոլստոյի հանրայայտ «Պատերազմ եւ խաղաղութիւն» բարձրաշու-
տոր վէպէց: Բայց քանի որ ուղղ գիրքը Չինաստանում հրատարակելը միան-
գամայն անկարելի է, հեղինակը, «մաքանենգութեան» դիմելով՝ մեծ ժաւը
թերթ առ թերթ ուղարկել է Հոնկոնգ՝ իր հղբը եւ ուրիշներէ հասցէով,
անտող ամբողջացուելու յոյսով: Գիրքը, ի հարկէ, գրուել է զաղտնի, քա-
նի որ յայտնարուելու դէպքում՝ հեղինակն իշխանութիւններէ կողմից ան-
միջապէս կը մեղադրուէր հակաշեղափոխական գործունէութեան մէջ ու ըստ
այնմ էլ զպատշաճ կարգով կը պատժուէր:

66 տարեկան Բու Նաիֆուն 1982ի Դեկտեմբերին վերջապէս դուրս ե-
կաւ մայր-ցամաքային Չինաստանից ու Հոնկոնգում միտցաւ եղբորը, որը
պաշտօնեայ է Թայվանի չինական ազգային կառավարութեան մէջ: Հոնկոն-
գի մամուլի ասուլիսում նա պատմեց իր սեփական ճակատագրի ու գլուխ-
գործոց երկը գրուելու հանգամանքների մասին, որը պարունակում է երկու
միլիոն 400 հազար չինական նշանագրեր, բայց վերնագիր չունի: Հեղինակի
ասելով, գրքում նկարագրում է չինական մտաւորականութեան հոգեւոր
պատմութիւնը՝ 1916ից մինչեւ 1949 թուականն ընկած ժամանակաշրջանում:
Իսկ որքուել է, ինչպէս որ ասուեց, միանգամայն զաղտնի, հեղինակի համար
վանդաւոր պայմաններում, քանի որ գրողը սկզբից եւթ յեղբունք է գար-
մբրել Մահաթմա Գանդիի տիրող իշխանութեան հետ «չգործակցելու» կրա-
ւորական դիմադրութեան հանրայայտ դրոյթը:

Բու Նաիֆուն ժամանակին՝ երիտասարդ տարիներին՝ Չինաստանում
հռչակուած է եղել իր պատմութեանը մասին իր կոթողային երկի առա-
ջին երեք հատորներով, իսկ 50ից մինչեւ 60 թուականը գրուած 4րդ, 5րդ եւ
6րդ հատորները, թղթի խնայողութեան նպատակով՝ մանրագիր, քիչ առաջ
յիշուած ձեւով էլ առ էլ Հոնկոնգ է ուղարկել՝ եղբորն ու այլեւայլ բարե-
կամների գրած նամակների արանքում: Չին ազգային լրագրողները Բու Նաի-
ֆունին համարում են «Չինական Սոթհինցին»: 1966-1976 թուականների «մը-
շակութային յեղափոխութեան» օրերին նա հեւ իր բաժին դառնութիւններն է
ճաշակել եւ միայն 1978ից յետոյ ստեղծուած պայմաններում հանդիստ գը-
տել, երբ «չորսերի աւազակախմբի» իշխանութիւնը չքացաւ եւ այնուհետեւ
չափաւորները հրապարակ իշան, այսպէս թէ այնպէս՝ նոր քաղաքականու-
թիւն որդեգրելով:

Նման լուրերը սակաւ են, որովհետեւ շինական գրական կեանքը եւս շատ չի փայլում ներկայումս՝ թէ՛ շինացիներին եւ թէ՛ օտարներին յայտնի պատճառներով։ Ահա թէ ինչու ժամանակակից շինական գրականութիւնը վերաբերող իւրաքանչիւր նիւթ յատուկ նշանակութիւն է ձեռք բերում նրանց համար, ովքեր ցանկութիւն ունեն նաեւ հեռուից հեռու գտնէ ընդհանուր ծանօթութիւն ձեռք բերել չին ու հարուստ մշակութային ժառանգութեան տէր չին ժողովրդի հոգեւոր մթնոլորտի հետ։ Մանաւանդ՝ որ այդ ժողովուրդը իր բազմամարդութեամբ առաջին տեղն է բռնում ամբողջ աշխարհում եւ վայելում է խելացի, գործունեայ ու ճկուն ժողովրդի համբաւ։

Իրերի այս վիճակում, ըստ ամենայնի հմուտ ուսումնասիրութիւն կարելի է համարել այն յօդուածը, որը տպուած է Փարիզի «Եմիլիոննետ» տունէն հռոմեայ հանդէսի Յըրդ դրքում (1982 թ.)։ Թողուածի վերնագիրն է՝ «Զինական գրականութիւնը Մաայից յետոյ», իսկ ենթավերնագիրն է՝ «Զինական գրականութիւնը ինչպե՞ս»։ Թողուածի հեղինակն է Դ. Վ. Ֆոկկեման, որի մասին տեղեկացում է միայն, թէ նա Հոլանդիայում Ուտրեխտի համալսարանի դասախոս է, շինական գրականութեան մասնագէտ եւ ժամանակին ապրել է Զինատեսում՝ գտնուելով գիւտնագիտական ծառայութեան մէջ։ Թողուածի շարադրանքից երևում է, որ Ֆոկկեման բաւարար տեղեկութիւններ ունի նաեւ խորհրդային եւ առհասարակ «սոցիալիստական երկրներին» գրական-մշակութային կեանքի վերաբերեալ։

Պատահական չէ, ի հարկէ, երբ յօդուածը վերնագրուած է «Զինական գրականութիւնը Մաայից յետոյ»։ Քանզի կոմունիստական միւս բախտակից երկրներին նման, Զինատեսում եւս ժամանակին գրականութիւնը ծառայագրութեան մասունց մասյական իշխանութեան պահանջներին, իսկ գերագույն իշխանաւորի մահից յետոյ այս կամ այն կերպ ուղիներ որոնուելին անտանելի հոգեւոր կապանքներից ազատուելու ուղիութեամբ։ Պատահական չէ նաեւ, որ յօդուածում շինական իրականութեան հետ համարեալ՝ գուշակեղանաբար ներկայացւում է նաեւ խորհրդային իրականութիւնը, բնական է՝ խիստ չափաւոր սահմաններում, համեմատելու եւ նմանութիւններն ու տարբերութիւնները պարզելու նպատակով։

Այժմ մեր այս ամօտագրում թարգմանաբար ներկայացուող յօդուածը ըստ էութեան երեք անհամաչափ շերտեր ունի։ Փոքրիկ նախաբանից յետոյ՝ նախ շարադրում են «Մաայական գրական օւսումնօրէն հիմնաւնիները»։ Ապա ճերկայացւում են «Մաայական գրական օւսումնօրէն ժամանակակից մեկնաբանութիւնները», փոխանցման շրջանի տարաբնոյթ տուեայների հիման վրայ։ Այդ բաժինը, ինքնին հասկանալի է, ամէնից ընդարձակն է եւ առանցքային տեղ ունի։ Այնուհետեւ, վերջապէս, ճշգրտւում են «ապամաայացման» սահմանները գեղարվեստական գրականութեան մէջ։ Այդ բաժնում երևում են ապամաայացման շարժման ճանապարհի դժուարութիւններն ու նաեւ հեռանկարները։

Ի հարկէ, ինչպէս տեւէ հայ ընթերցող, տողերիս դրողը եւս ո՛չ շինական կեանքի եւ ոչ էլ շինական գրականութեան մասնագէտ է՝ թէկուզ եւ ամենահամեստ չափով։ Բայց շինական կեանքին ու գրականութեանը բաւարար չափով ծանօթանալու համար պարտադիր չէ անպայման մասնագէտ լինելը կամ այդպիսին դառնալու տրամադրութիւնը։ Հարկաւոր է միայն օգտուել առկայ մասնագէտների աջակէս առած ուղղակի եւ անուղղակի «ծառայութիւններից», նրանց կատարած աշխատանքի արդիւնքների տրամադրելի մաս

«ի ուշադիր ընտրութեան եւ պատշաճ հրամցման հանապարհով: Եւ յայանի է, որ տեղեկութիւններ ձեռք բերելու այս եղանակը վերաբերում է առհասարակ բոլոր ասպարէզներին, այլ ոչ թէ միայն՝ տուեալ գէպքում լինական մեկուսի, առերեւոյթ խորհրդաւոր եւ համեմատաբար աւելի փակ իրականութեանը, առաջին հերթին լեզուական իւրայատկութեան եւ ընդամին անմատչելիութեան բերումով, ինչ որ յաւելիալ կարգով կառնցնում է նաեւթութիւններին անխափան հոսքը:

«Կոմսիոնմն» հանդէսում ակնյայտօրէն հոյնդէս թարգմանաբար ներկայացուած ուսումնասիրութիւնը հայերէն է թարգմանում ամբողջովին:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

Դ. Վ. ՖՈԿԿԵՄԱՆ

ՉՆԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՈՅԻՑ ԳԵՏՈՅ

(«ՁՆՀԱԼԸ» ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԽՍՀՄ-ՈՒՄ)

Չնայած բազմաթիւ տարբերութիւններին՝ թէ՛ Զինատանի եւ Խորհրդային Միութեան եւ թէ՛ լինական ու բուսական մշակութային աւանդոյթներին միջեւ, ժամանակակից լինական ու խորհրդային գրականութիւնները շատ նմանութիւններ ունեն: Դա զարմանայի չէ, քանի որ երկու երկրների քաղաքական վարչակարգերը սնւում են միեւնոյն փիլիսոփայական աղբիւրից, որն ամբողջատիրական հայեացք է կրում ժառողային գործունէութեան բոլոր տեսակների հանդէպ, ներառեալ գրականութիւնը: Զինատանում եւ Խորհրդային Միութեան մէջ քաղաքական վարչակարգերը յաւակնում են ստեղծել հանրային կազմակերպութեան աւելի բարձր մակարդակ (թէ՛ այդ վարչակարգերի ներսում եւ թէ՛ նրանց սահմաններից դուրս), եւ իւրաքանչիւր ոք, այդ թւում նաեւ գրողները, պէտք է մասնակցի յեղափոխական նպատակների իրագործմանը: Այդ երկրներում գրական աշխատանքի պտուղները իշխանութիւնների շրջանցող ուղղորդութեան առարկայ են հանդիսանում շատ աւելի մեծ չափով, քան Արեւմտեան Եւրոպայում եւս՝ Հիւսիսային Ամերիկայում: Թէեւ արեւմտեան կառավարութիւնները երբե-

մբն նիւթական համեմատաբար անկայուն են ցոյց տալիս որոշ գրողների, ընդհանրապէս նրանք յատուկ ուշադրութիւն չեն դարձնում գրական ընթացքի վրայ: Լայն խմատով՝ գրականութիւնը բացառուած է կառավարական հետաքրքրութիւնների ոլորտից: Արեւմտեան Եւրոպայի եւ Ամերիկայի գրողները, ընդհանուր առմամբ, գիտեն այդ վիճակից, եւ եթէ նրանք յիշենցնում են այն ժառանգ հողատիրութեան մասին, որոնց առարկայ են իրենց արեւելեան գրչակիցները, ապա այդ դիտողութիւնների միջով սովորաբար անցնում է աւելի շատ հեղեանքը, քան բացայայտ նախանքը:

Զինատանում ու Խորհրդային Միութեան մէջ գրականութեան պաշտօնական կոչումը խիստ տարբերում է այն շատ դերերից, որոնք գրականութիւնը կարող է կատարել Արեւմտաեւրոպայում, ինչպէս եւ այն դերերից, որոնք նա գործնականում կատարում է կոմունիստական երկրներում: Ուստի եւ՝ այսօրուայ լինական (ու բուսական խորհրդային) գրականութեան ճշմարտացի պատկերը գծելու համար անհրաժեշտ է յստակօրէն տարբերել գեղարուեստական գրականութեանը վերաբերող տեսական արտայայտութիւն-

ները իրական դրական գործունեությունները։ Դրա համար էլ մենք նախ կը վերադառնանք պրակտիկական տեսությունների և գործունեության զարգացումը Ձինաստանում, դա ժամանակ առ ժամանակ համեմատելով խորհրդային գրականագիտության հասցություն հետ, իսկ ապա՝ քննության կ'առնենք նոր շինական գրականության ասը, նույնպես համեմատելով խորհրդային գրական կենտրոն հետ։ Խորհրդային ու շինական գրականությունները համեմատելիս չպէտք է մոռանալ, որ շինական կոմունիզմը աւելի երիտասարդ է խորհրդայինից առնուազն մէկ սերնդով։ Ձինական ժողովրդական Հանրապետութեան մէջ, անվիճելիորէն, առկայ է ապամոռացման միտումը, բայց միայն 1976 թուից ի վեր, մինչդեռ Խորհրդային Միութեան մէջ ապամոռացումը սկսուել է 1956ին կամ նախիկ աւելի վաղ։

ՄԱՌՅԱՆԱՆ ԳՐԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ձինաստանում գրականութեան կոմունիստական տեսությունն առաջին ու մինչեւ հիմա էլ հիմնական փաստաթուղթ է հանդիսանում գրականութեան եւ արուեստի դեմ 1942 թուին նախաձեռնած կայացած համաժողովին Մաո Յզէ-Դունի յղած կոչը։ Այն ժամանակ չին կոմունիստները վերահսկում էին Հիւսիսային Ձինաստանի սոսկ մի փոքր մարզ, որտեղից, ազգային կառավարութիւնից անկախ, տարբար էին մղում ճապոնական դաւաճման բանակի դէմ։ Այդ կոմունիստական շրջանում հաւաքուել էին Շան-Հայից եւ Ձինաստանի այլ գրաւուած վայրերից փախած մեծ թուով մտաւորականներ։ Նրանք բոլորն էլ կոմունիստներ էին։ Այդ մարդիկ իրենց հետ բերել էին քաղաքական զանազան համոզումներ։ Իր «Նաճիանեան գրայցներում» Մաո Յզէ-Դունը փորձում էր կասեցնել ուժարարիստական ըմբռումների տարածումը գրականութեան մէջ ու կենսութեան։ Եւ, ինչպէս յայտարարեց Ձաոուեանը 1979ին, Մաո Յզէ-Դունի կողմից իր «Նաճիանեան գրայցներում» արուած

գեղարար ցուցումները մնում են ուժի մէջ, թէիւ դրանք չպէտք է ըմբռնուեն վարդապետաանօրէն (գողմատիկօրէն)։ Ձր-Ժը-Հրում այսօր դրանք մեկնաբանելու հարցին դիմելուց առաջ թուացիկ հայեացք նետենք Մաո Յզէ-Դունի արտայայտած հիմնական մտքերի վրայ։

Առաջինը. Մաոն պնդում է, թէ գրականութիւնն ու արուեստը պէտք է ծառայեն դասակարգային պայքարին եւ ձապոնիայի դէմ մղուող պատերազմին։ Սակայն Մաոն ասում է նաեւ, որ գրականութիւնը չպէտք է լիովին ենթարկուի առօրեականութեան գործնական պահանջներին։ Յենուելով արուեստի վիպապատական (ասանտիկական) տեսութեան, Վ. Բելինսկու եւ, թերեւս էլ, նույնիսկ Արիստոտելի վրայ, նա պնդում է, որ թէիւ կենսւն ու արուեստը դեղացիկ են, զգրական ստեղծագործութեան եւ արուեստի մէջ արտացոլուած կեանքը կարող է եւ պէտք է լինի աւելի մեծաչափ, լարուած, խտացուած, տիպական, պէտք է աւելի մօտ լինի իդէալին ու, իստեւապէս, աւելի բնագիտական, քան իրական առօրեայ կեանքը։ Այսպիսով, քնդդեմում է մէկ կողմից քաղաքական նպատակների առաջնութիւնը, իսկ միւս կողմից էլ՝ արուեստի աւելի բարձր մակարդակը։ Այդ հակասութիւնը քնաւ չէր չփոթեցնում գրողներին, իսկ շինական իշխանութիւններին հնարաւորութիւն էր ապաւինաւելի մեծ ուղղորդիւն դարձնել մերթ քաղաքական, մերթ էլ գեղարուեստական շափանիչների վրայ, որի հետեւանքով էլ Ձինաստանի գրական կենտրոն տարբեր ժամանակաշրջաններում շեշտը տեղափոխուել է քաղաքական պայքարից դէպի գեղարուեստական որակը, եւ՝ բնահակառակն։

Արուեստի մասյական ըմբռնման մէջ ներկայ է եւ մի այլ հակասութիւն։ Ի հարկէ, Մաոն բաժանում է արտացոլման լինիւնեան տեսութիւնը, բայց ընդամին դտնում, թէ գրականութիւնն աւելի է, քան հասարակութեան արտացոլումը։ (Այս կապակցութեամբ տողատակի ծանօթագրութեան մէջ գրուած է հետեւեալը. — «Մաոն պնդում է. գրականութեան եւ արուեստի երկերը, պատկան-

յով գաղափարախոսութեամբ, համդիտա-
նում եմ տուեալ եռաարկութեամ կեան-
քի մարդկային ուղեղի կողմից արտացո-
լու արդիւմէ: Յեղափոխական գրական-
ութիւնն ու արուեստը ժողովրդի կեան-
քի յեղափոխական գրողներն ու արուես-
տագէտներն զիջում արտացոլելու ար-
դիւնք եմ համդիտում, — թարգմ.):
Գեղարուեստական տիպականացումն ու
ընդհանրացումը գրականութեան մէջ
փառաբանէն ձեւաւորում ու կազմակեր-
պում են իրականութեան արտացոլումն
այնպէս, որ դա արդէն իրականութեան
պարզ լուսանկար չէ: Բացի այդ, դասա-
կարգային պայքարի քաղաքական նպա-
տակներին ծառայելը կարող է հակա-
ռութեան մէջ ընկնել կեանքի անմիջա-
կան արտացոլման հետ: Ուստի՝ թէ՛ դե-
ղարուեստական ընդհանրացումը եւ թէ՛
դրողական դիրքը կարող են հակասու-
թեան մէջ գտնուել արտացոլման տեսու-
թեան անկիրք կիրառութեան հետ: Խոր-
հրդային Միութեան մէջ այդ խնդիրը
աւելի կամ պակաս շարժելով լուծել են,
դէ՞թ թղթի վրայ, յայտնաբերելով զո-
ցիալիստական տեսլիքը, որն նպատակն
է իրականութեան գեղարուեստական ար-
տացոլումը՝ նրա յեղափոխական գոր-
դածման մէջ, նման թուելի ուղղին
ոռոյիստական տեսլիքի ըմբռնումը
երեսան եկու հաւե Զինատանում, բայց
դա շատով փոխարինուց չյեղափոխու-
կան իրապաշտութիւնը յեղափոխական
վիպապաշտութեան հետ միահիւսելու
ձեւակերպումով: 1958 թուին առաջ քաշ-
ւած վերջին ըմբռնումը է՛լ աւելի որո-
շակի է դարձնում հակասութիւնը առար-
կայական արտայայտութեան եւ ենթա-
կայական յեղափոխական ու գեղարուես-
տական յղացման միջեւ:

Նրկերդ. Մասն հաստատում է գրա-
կանութեան ու արուեստի ժողովրդակա-
նացման եւ միաժամանակ գեղարուեստա-
կան մակարդակի բարձրացման անհրա-
ժեշտութիւնը, աւելի մեծ շեշտը դնելով,
ասկայն, ժողովրդականացման վրայ:
Այստեղ նա վերստին հակասութիւն է
մտցնում, քանի որ ժողովրդականացու-
մը, այսինքն՝ գրականութեան յարմարե-
ցումը զանգուանների կրթական մակար-

դակին, անհամատեղելի է գեղարուես-
տական որակի բարելաման հետ:

Ծրարդ. Մասն պնդում է, թէ խոն-
դիրները քննարկելիս անհրաժեշտ է ել-
նել ճառարկայական իրողութիւններից,
այլ ոչ թէ վերացական սահմանումնե-
րից: Սակայն նա աւելացնում է, որ
այդպիսին է մարքսիստական դիրքը, որի
հետեւանքով էլ «վերացական» եւ «թանձ-
րացեալ» եզրերը ստանում են խիստ
մարքսիստական մեկնութիւն: Այսպի-
սով, իրողութիւնների վերլուծութիւնից
սկսելու Մասնի խորհուրդը պէտք է հա-
կացուի, տարբերակ կերպով, իբրեւ
մարքսիստական տեսութիւնը (եւ մարք-
սիստական եղբայրանութիւնը) ուսումնա-
սիրելու խորհուրդ, «ճիշդ» մարքսիստա-
կան իրողութիւնները գտնել կարողանա-
լու համար:

Զորբարդ. Ընդօրինակելով Լենինին,
Մասն կոչ է անում քննադատաբար իւ-
րացնել ձեռք գրական ու գեղարուեստա-
կան ժառանգութեան բոլոր արժէքները:
Սակայն գրական աւանդութիւնը նկատ-
մամբ յարգանքը կարող է հակակցուել
բուական տարածութեան, քանի որ այն
հարցը, թէ ո՞ր գրականութիւնը պէտք է
իւրացուի եւ ի՞նչ ծառայով, անպատա-
խան է մնում:

Հիմնարդ. Մասն գրողներին զգու-
շացնում է օռոյիստական հասարակու-
թեան մութ կողմերի քննադատութիւնից:
Այդ առումով նրանք պէտք է հետեւեն
խորհրդային գրականութեան օրինակին:
Բայց, միւս կողմից էլ, ճանաչմանը եւ
մերկացմանը այն քայլը մուր ուժերը, ու
րանք խանգարում են ժողովրդական գաւ-
գրածններին: Սակայն միւս չէ, որ
պարզ է, թէ ո՞ր գրութեան հարելի
է մերկացնել, իսկ որոնք՝ ոչ: Եւ այս-
տեղ լայն դաշտ է բացւում մեկնարանու-
թեան համար:

Վեցերդ. Եղբայրական մէջ Մասն
դիմում է ճարգկային բնութեան տեսու-
թեանը: Դասակարգային հասարակու-
թեան մէջ մարդկային բնութիւնը կարող
է կրել միայն դատարարական բնոյթ,
վերադասակարգային մարդկային բնու-
թիւն գոյութիւն չունի: 1956 թուին Ծրին
Դինը իր «Կոմունիստական հայկազգի»

կետմեքի համդէպ զբքում փորձեց հերքել այդ ծայրայեղ տեսակէտը: Ծրին Դիւնը ուզում էր ապացուցել, որ բոլոր մարդիկ ունեն անդի, օթեւանի, հազուադէպ կարիք եւ մարդկային բոլոր արարքները պայմանաւորուած են, զլիսաւորապէս, կենսաբիւլոգիկ համար հարկաւոր այդ բաների անհրաժեշտութեամբ: Նա շեշտում էր նաեւ, որ մարդկային բնութեանը յատուկ են խաղաղութեան ձգտումն ու կեանքը պահպանելու ցանկութիւնը: Սակայն ուղղափառ քննադատները մեղադրեցին Ծրին Դիւնին, թէ նա դրուստում է մարդկային բնազդները եւ նեմացնում հասարակական կեանքը: (Նրանց կարծիքով, Ծրին Դիւնը ի վիճակի չէ բացատրելու մահուան վախից լինիլի ազատութեան յեղափոխական նահատակների խիղախութիւնները): Ծրին Դիւնի աշխատութիւններին քննադատութիւնը սկսուեց 1964 թուին եւ դարձաւ այն տուեալներից մէկը, որոնք 1966-ին միանալով կազմեցին Մշակութային յեղափոխութեան հեղեղը: Այսօր, սակայն, նրա տեսութիւնն այլեւս չի ենթարկւում այնքան ուրբ քննադատութեան, մինչդեռ Մարտի ծայրայեղ տեսակէտները կորցնում են իրենց ուժը:

ՄԱՍՈՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՄԵԿԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այն հայեացքները, որոնք, հետեւելով մարքսիստական գրական քննադատութեան գլխաւոր դրոյթներին, պաշտպանում են Մանն, շատ աւելի պակաս պարզ են, քան կարելի էր սպասել: Ի հարկէ, նրա պնդումների ներքին հակասութիւնները կարելի էր լինէր բացատրել արամախոհութեան (դիալեկտիկայի) օգնութեամբ, բայց այդ ուղին աւելի շուտ տանում է դէպի նրանց քողարկում, քան թէ լուծում: Այսօր չին քննադատներն ու գրականութեան տեսաբանները պատրաստ են թոյլատրելու պարզութեան բացակայութիւնը մարքս-մասյական գրական ուսմունքի մէջ: Եւ եթէ նրանք դեռ եւս հաստատ հետեւում են Վաննաճաւ գրոյցներում շարադրուած գլխաւոր ըսկերգութեաններին կամ գէթ վկայակոչում

դրանք, ապա սոսկ նրա համար, որ նրանց տրամադրութեան տակ չկայ ոչ մի այլ բան, չինական աւանդական գրական տեսութիւններից եւ իւրոպայում ու Ամերիկայում ծնուած գրական բարոյականների չփոխեցնող բազմազանութիւնից բացի: Այստեղ է այն բանի պատճառը, որ Վաննաճաւ գրոյցներէ հանրայայտ մեակերպումները կրկնուելու՝ նրանց մէջ յաճախ նոր իմաստ է դրւում: Այն ժամանակից ի վեր, երբ Մշակութային յեղափոխութեան (1966-1976) զատանից չինական հասարակութիւնը մտաւ ապամատայածան ժամանակաշրջան, հասարակ դարձաւ նոր գաղափարների ու նոր սահմանումների երեւան դալը, թէեւ քաղաքական ազատականացման սահմանները ստալիժի դեռ այնքան էլ պարզ չեն:

Ապամատայածան սկսուեց Մաս Յզէ-Դունի մահից, 1976 թ. Սեպտեմբերին, շատ շանցած, Դեն Սեւա-Պիլի գործունեւացութեամբ եւ Հուա Գո-Պիլի լուծեային (թերեւս էլ հարկադրաւ) համաձայնութեամբ: Նոր քաղաքական ուղղութիւնը հասցրեց հակայական թուով վարկափրկումների: Վարկափրկումների շարումն էր նաեւ Ձեռն Յանը, որը վերադարձնում էր քաղաքական կոմկուսի կենտրոնի քաղաքական գծով խորհրդի նախագահի տեղակալի պատճառ: Այդ պաշտոնը նա ունեցել էր 1949 թուից մինչեւ 1966 թ. Մշակութային յեղափոխութեան սկսուելու եւ գլխաւորապէս նրա վրայ էր դրւած գրական կեանքի հսկողութիւնը: Այդ մարդու ազդեցութիւնը կարելի է համեմատել խորհրդային Միութեան մէջ Ժոզեֆ Ստալինի ունեցած ազդեցութեան հետ: Անկասկած, Ձեռն Յանը խորհրդային մշակութային քաղաքականութեան ջերմ երկրպագու էր: Համարում է, որ նա է եղել առաջնայնական տեսիլքի գլխաւոր պաշտպանը Ձիւստանում ու միաժամանակ նպաստել Ձիւստանում ուսման մեծ իրաւաւորների երկերը թարգմանելուն ու հրատարակելուն, Ներատեսիլ Գոստոնեւիկին: Նրա հոփանաւորութեամբ Ձիւստանում հրատարակւել են Վ. Գ. Բիլինսկու, Ն. Ա. Դորրոյի, Դ. Գ. Զերնիշեւսկու գրական երկերի շատ հատորներ: Յժման թուե-

որին դրականութեան ու զեղազիրտութեան տեսութեան նրա մեկնութիւնը շատ մօտ էր խորհրդային դարոցին: Բնորոշ է, որ սուսերէնը միակ եւրոպական լեզուն է, որով կարգում է Զօռու ծանր:

1906-78 թուերի զանգուսածային Հա-
ւաքյութների նուաստացումների ու բան-
ասարկութեան միջով անցած ԶԺՈՒ Շա-
նյից բացի, վարկաիրկուեցին Մշակու-
թային յիդաիրկութեան ստորինների հա-
լուածում բազմաթիւ սորոքեր ու քննա-
դատներ, սակայն մի շարք գորոշների հա-
մար վարկաիրկումը շատ ուշ եկաւ. յետ
մահու վարկաիրկուեցին յայտնի շատ
երրուներ, որոնց գրքերը Թարգմանուի
նե գտնուալան երկրների լեզուներով, նե-
բառաւով թուսերոնք:

Վարչակազմի գործունեության աղբյուր կանգնում է Մշակույթի նախարարությունը։ Առաջին հերթին մշակութային ոլորտի վերականգնումը, որի համար անհրաժեշտ էր բացել դպրոցներ, օրհնասրահներ, քաղաքային տեսարաններ, հիմնականում Երևանում։ 1957 թվականին Կենտրոնական խորհուրդի կողմից սկսվեցին մշակութային կենտրոնների կառուցումները։ Մի քանի տարի անց, երբ ԽՍՀՄ-ում տեղի ունեցավ «ճարտարապետական» ճգնաժամ, Հայաստանում շատ քիչ էր մնացել ինքնուրույն ճարտարապետների։ Միայն Մարտիրոս Տիգրանյանն էր, որը 1958 թվականին Հայաստանի ԴԱՀ-ի կողմից նշանակվեց Հայաստանի ԴԱՀ-ի ղեկավարի պաշտոնին։

Նախարարությունը 1957 թվականին Կենտրոնական խորհուրդի կողմից սկսվեցին մշակութային կենտրոնների կառուցումները։ Մի քանի տարի անց, երբ ԽՍՀՄ-ում տեղի ունեցավ «ճարտարապետական» ճգնաժամ, Հայաստանում շատ քիչ էր մնացել ինքնուրույն ճարտարապետների։ Միայն Մարտիրոս Տիգրանյանն էր, որը 1958 թվականին Հայաստանի ԴԱՀ-ի կողմից նշանակվեց Հայաստանի ԴԱՀ-ի ղեկավարի պաշտոնին։

Նախարարությունը 1957 թվականին Կենտրոնական խորհուրդի կողմից սկսվեցին մշակութային կենտրոնների կառուցումները։ Մի քանի տարի անց, երբ ԽՍՀՄ-ում տեղի ունեցավ «ճարտարապետական» ճգնաժամ, Հայաստանում շատ քիչ էր մնացել ինքնուրույն ճարտարապետների։ Միայն Մարտիրոս Տիգրանյանն էր, որը 1958 թվականին Հայաստանի ԴԱՀ-ի կողմից նշանակվեց Հայաստանի ԴԱՀ-ի ղեկավարի պաշտոնին։

Վահ Մենը: Բանաստեղծ ու քննադատ
Ֆրին Սիւէ-Ֆրինի համար վարկադրիչու-
մը շատ ուշ հասաւ. նա մեռաւ 1976 թը-
ւին:

Յատկանշական է եւ է՛լ աւելի չհիստատվե՞տե՞րբի վերացումը: Օրբնակ, 1942, 1948 եւ 1955 թուե՞րե՞ս յախախտում ՎԳիւղիմ Օգստոսաբն զբեք չեղե՞նակ Սեոս Յգիւնը, որ այդ ժամանակեկ է վեր գտնուե՛լ է բանտերում կամ աքաղաղում, ինական գրականութեան մէջ հոգեք երեւալ 1980իւն, գլուստական չանդէաներով մէկում մի պղծեմ Հրապարակեւլով: Վերջապէս, վերանայուեք նաեւ յայտնի բանաստեղծ ու քննադատ Հուժրիքի աղմուկ Հանած դործը: 1955 թւին Հու Մըրիք, զքննադատական իրապաշարութեան մի հաստատ Հեռուորդ, որը շատ բանով բաժանում էր Դիերք Լուկաքի գաղափարներ, մեղադրուեք Հեռակայեղագրական յանցադործութիւններով մէջ եւ, ինչպէս Հաղորդուեք Վիմմիմիթթոս թերթում (1955 թ. Յուլիսի ճիւն), մերթապալուեք: Բայրոյմյին վերջերս նրա բանաստեղծութիւններ, անգլիէք թարգմանութեամբ, երեսային Պեկիւնում Հրատարակուող Ձիմակալմ գրականութիւն Հանդիսում, Համատա բանաստեղական ծանօթագրութիւններ ու պակցութեամբ, որտեղ մի քանի տողով պատկերում է նրա կեանքի ողբերգութեւնը: Հու Մըրիք, ծնունմ 1902 թւիմ կիւրումնում, Լուրէք նահանգ, գրաճնադատ, բանաստեղծ ու թարգմանիչ: 1955 թ. անորդար կերպով մեղադրուել է հակակոստակցական խումբ դիկալարեղու մէք: Այլ մեղադրամբք մրա վնայ ընացել է միմե՛կն 1980 թւականը: Այսպէս կոչումմ ՀՀու Մըրիքի հակակոստակցական խմբք գործը եղել է ապօրինի: Այս պէպքը եւս կարող է յարուեք վարկապիւրկաներ՝ այդ գործի զուհերի մեծ մասն ի համար, արդէն իմաստնու:

Մաս ՅԵՂԻՊՈՒՆԻ մահիչ յետյա վարկաբերումներն ընդգրկել են գրողների երեք տարբեր խմբեր, — Մշակութային յեղափոխութեան զոհերի, աջերի դէմ ուղղուած արշաւի զոհերի եւ Հոռ Սըրիշի Հակաժողովարարական խմբի գործի գծով Հասարակական գրողներին: Ի վերջոյ, ստեղծ-

ծրել է մի չափազանց բարդ կացութիւն, զանի որ Մշակութային յեղափոխութեան վարկաբերկում զոհերից չատերը իրենք են մասնակցել, բայց արդէն հալածիչներ զերում, 1957ին տղերի գէժ ուղղւած արշաւի կամ էլ Հու ժընի ու նրա հետեւորդների դործին՝ 1955ին։ Այդպիսին է, անկասկած, Ձժօու Եանի պարագան, որի աշխարհ վերադարձն պաշտօնապէս գլխաւորում է շինական մշակութային թաղաքականութիւնը։ Լուրեր են շրջում, թէ նա պաշտպանել է Դին Լինի նման մարդկանց, սակայն դա, ի հարկէ, այնքան էլ չի լիցքաթափում իրադրութիւնը։ Միւս կողմից էլ՝ այսօր Ձժօու Եանը, անտարակոյս, շատ աւելի տարեց է, լուրջ ու իմաստասացած, քան 50ական թւերին է, վերջ է վերջոյ, ուրիշների նըման անցել է բանաբերից ու հրապարակային դատաւարութիւններից։ Փաստօրէն չենց դրա մէջ է այսօրուայ Ձինասանի կացութեան եւ Խորհրդային Միութեան մէջ ապաստանախնայողից յետոյ ստեղծւած իրադրութեան հիմնական տարբերութիւնը։ Գրեթէ բոլորը, ովքեր այսօր ստակատար դեր են խաղում Ձժօու-Հըում, տուժել են իրենք, այսպէս թէ այնպէս, Մշակութային յեղափոխութիւնից։ Այսինքն՝ խոսելով աստիճանների աշխատակի լեզուով, այսօր բանտային անցեալը դիտւում է աւելի շուտ իբրեւ չափազանց դրամադուրա, քան պարտք։

Գրական աշխարհում վարկաբերկւած գրողները զանազան խմբերը լաւ են հաստատարկւում միմեանց։ Նրանցից ոչ ոք բաւարար իշխանութիւն չունի՝ գրական քաղաքականութիւնը որոշելու համար, ու թէեւ 1977 թուականից Ձժօու Խանը բաւական մօտ է նման մի գիրքի, պէտք է նշել, որ նա դա չի օգտագործում, պաշտպանելով առանկ հանդուրժամութիւնը ու բանավէճերի ազատութիւնը։

Բանտերից ազատուած նախկին կալանաւորները իրենց սեփական փորձի գերինք են միտում, պահպանում զոհուած գրչակիցների յիշատակը։ Եւ բնական է, որ այդ պայմաններում «Եմնանման գլխոյցներ»ի «Վարդապետական ընկալումը» պարզապէս անկարելի է։ Այսօրուայ Ձի-

նաստանում քննադատական բանավէճերը, բառ էութեան, վերադարձել են 1956-57 թուերի «Հայրեր ծաղիկներ»ի ժամանակաշրջանի խնդիրներին։ Այն ժամանակ դործուն քննադատները, այնպիսիք, ինչպիսին էր Յին Ձժօու-Եանը, նորից յիշում են Կ. Սիմոնովի եւ Վ. Օվկինի տեսակի խորհրդային գրողների մասին, եւ ոչ ոք այսօր նրանց կարգի չի հրաւիրում։ Այժմ տեսնենք, թէ այսօր ինչպէս են մեկնաբանում վերեւում յիշատակւած մատչական գրողները։

Առաջին Ձժօու Եանի վերադարձը եւրաշխիք է, որ շինական կոմկուսը պատշաճ է ճանաչելու գրական ստեղծագործութեան յատուկ բնոյթը։ Ի հակադրութիւն Մշակութային յեղափոխութեան ժամանակ տարածուած զաղափարների, գրականութիւնը ընկալւում է իբրեւ քաղաքացիութիւնից տարբեր մի բան եւ, ինչպէս աւել է Ձժօու Եանը, «Տնտեսութիւնը զեկավարելու համար անհրաժեշտ է հասկանալ տնտեսական օրէնքները (...), գրականութիւնն ու արուեստը զեկավարելու համար անհրաժեշտ է յարգել գրականութեան ու արուեստի օրէնքները»։ Առայժմ այնքան էլ պարզ չէ, թէ որոնք են այդ օրէնքները, բայց կարելի է ենթադրել, որ շին տեսաբանները վերադարձում են «տիպականի» ըմբռնմանը, «ենթանման», «ներքնատեսութեան» հասկացութիւններին եւ «պատկերներով մը տանկու» ձեւակերպմանը, այսինքն՝ նըրան, ինչ որ քննադատում կամ առնչուողն վիճարկում էր Մշակութային յեղափոխութեան ընթացքում։ Անկասկած, վերստին պիտի յայտնագործուի այն ամբողջ իդէալիստական ժառանգութիւնը, որն ընդունուած է խորհրդային մարքսիստական գեղարվեստութեան մէջ, սակայն առայժմ ոչ մի զեկավար գրող չի ձեւակերպուած։

«Գրական հետազոտութիւններ»ի մէջ վերջերս հրապարակուած բանավէճերի նիւթերը իսկապէս վերաբերում են հիմնական խնդիրների, օրինակ, այնպիսիներին, որպիսին է «գրականութիւնը պէտք է ծառայի քաղաքականութեանը» նշանաբանի ընդունելիութիւնը։ Գրականութիւն վերադարձած «աջակողմեան» «Հա-

րիւր ծաղիկներէ ժամանակ դարձունեայ
եղած Տեան Ինը, Թուո՛ւ է, նախնարում
է «գրականութիւնը չի կարող քաժանուիլ
քաղաքականութիւնից» մեւակերպումը:
Այդ տեսակէտը մերժում է Մաօ Յզէ-
Դունի տալիք քաղաքականութեան
կողմը քաղաքականութեան ու գրականու-
թեան միջեւ, ինչ որ կարող է գրականու-
թեան համար հնարաւորութիւն բացել
ստեղծելու քաղաքական աշխարհայե-
ւացք, այլ ոչ թէ միայն արտացոլելու
արդէն գոյութիւն ունեցողը: Սակայն
Տեան Ինի հայեացքները, այնուամենայ-
նիւ, ասկաւին բացատրութիւն են: «Կրա-
կան հետազոտութիւններում եւ միւս
հրատարակութիւններում արտացոլուած
փէնթիմոն մասը անց է կացուած հար-
ցերի եւ քննադատական դիտողութիւննե-
րի մեւով: Այսպէս, քննադատներից մէ-
կը տարակուսանք է արտայայտում
«պատկերների մասին» եւ ներշնչուել
«առականութիւնների ընդունելիութեան
հանգէլ», որոնք համարելով «բոլորիս-
տական», միասնական» եզրեր, որոնք
անհրաժեշտ է վերանայել: Սակայն եւ չի
տեսողարկում համոզիչ փոխարինում դը-
րանց դիմաց:

Երկրորդ՝ եթէ Մշակութային յեղա-
փոխութեան ընթացքում հիմնական շնչ-
ուր գրում էր գրականութեան ու ար-
ւեստի ժողովրդականացման վրայ, Մաո-
յի մահէից յետոյ մեծ ուշադրութիւն է
յատկացում գեղարուեստական մակար-
դակի բարձրացմանը: Ձինական իշխա-
նութիւնները, թուով է, պատրաստ են
ընդունելու ընթերցող հասարակութեան
նկատմամբ տարբերակուած մտեցում
ցուցաբերելու անհրաժեշտութիւնը: Այս-
պէս, այսօր նորից հնարաւոր է մասա-
րականութեան մասին վէպեր տպել մտա-
ւորական ընթերցողի համար (ինչպիսին
է՝ Չեան Եանի «Երկրորդ ձեռնագրու-
մը», 1979 թ.): Հնարաւոր է նաեւ հրա-
պարակել այնպիսի բանաստեղծութիւն,
որը նախատեսուած է բացառապէս Վըր-
թուան բարձր մակարդակ եւ ընթերցա-
նութեան վարժութիւն ունեցող ընթեր-
ցողների համար, ինչպիսիք են, օրինակ,
Այ Յինի բանաստեղծութիւնները:

Երրորդ՝ քաղաքականութեան Մշակու-

թային յեղափոխութեան ժամանակաշր-
ջանի, մեծ նշանակութիւն է տրուած
«գործնական» (պրակտիկան) հշմարտու-
թեան միակ չափանիշն է՝ նշանախօսքին:
Դեն Սեաօ-Պինի նկատմամբ հաւատար-
կագում է նրա փորձառական իրողու-
թիւնների վրայ յենուելու հետ, բայց այդ
նշանախօսքի մեւակերպումն ինքը հան-
դիսանում է գրեթէ քառացի մէջբերում
Դաոյի «Գործնականի մասին» աշխատու-
թիւնից (1937 թ.): (Այս կապակցու-
թեամբ, տողատակի ծանօթագրութեան
մէջ առում է եւ տեւեսպը. — «Մամ հը-
րում է՝ «Մարքսիստները գտնում են, թէ
արտաբերական աշխարհի մասին գիտելիքների
միակ չափանիշը մարքսիստական ընկերային
կեանքն է», «Միայն ընկերային կեանքն
է կարող հշմարտութեան չափանիշ լի-
ւել», «Գործնականը հշմարտութեան չա-
փանիշն է», — Թարգմ.): Այդուհան-
դերձ, Դեն Սեաօ-Պինի օրօք իրողութիւն-
ների վրայ չէ, այլ դենը, Թուով է, կորցը-
րել է իր սկզբնական մարքսիստական
նշանակութիւնը, քանզի, ինչպէս յայտնի
էր դառնայ ներքեւում, Ձինաստեղծում
տակայ է Մշակութային յեղափոխութեան
բաղձաթիւ (թէն ոչ բոլոր) մութ իրողու-
թիւնները մերկայանալու բացայայտ մըզ-
տումը:

Չորրորդ՝ Թէ՛ շինական եւ թէ արտա-
սահմանեան մշակութային ժառանգու-
թեան հանգէլ աշօրուայ վերաբերմուն-
քը բացարձակապէս տարբեր է այն ներ-
հակառ ժխտականութիւնից, որը Մշա-
կութային յեղափոխութեան ժամանակ
արտայայտուած էին Չեան Եինը (Մաոյի
կիմը, — Թարգմ.): եւ օւրիշները: Այս-
պէս, 1966 թ. Փետրուարին գրականու-
թեան ու արուեստի դժով Լին Բեաոյի ու
Չեան Եինի կազմակերպած համաժողո-
վում՝ վերջինու նայնակ Սեայինին չա-
փաղանց ներողամիտ վերաբերմունք էր
վերադրում քաղքենիական ժառանգու-
թեան նկատմամբ: Նա մեւակերպեց մի
գիրք, որը մօտ էր Պոլեականական
(ժամանակին) հորիքային Ռուսաստա-
նում տարածուած լիւիքսիստական շարժ-
ման, — Թարգմ.): գիրքին, յայտարարե-
լով. «Մենք պէտք է խորանկենք կոյր
նախադր չիմական ու արտասանման

դասակամ գրականությանն նկատմամբ: Ստալինը մեծ մարքսիստ-լենինյան էր: Նա շատ խստորեն քննադատել է քաղաքական արդիապաշտական գրականությանն ու արուեստը, բայց Ույմ ժամանակ՝ ոչ քննադատաբար ընկալել դասական ուսուսակամ ու երգչական գրականությունը, ինչ որ հասցրեց ծանր հետևանքներին:

Ձման Յինի հայացքները դործնականում նշանակում էին այն, որ արտասահմանեան բոլոր գրողներից միայն Մ. Գորկին, Ա. Ֆադեևը և Ա. Սերգեևիչը հրապարակուցեցին Մշակութային յեղափոխության ժամանակ: Իր ժամանակում գրողները Մառ Յզե-Դունը ֆադեևի հետ «Զայնդախուլը» յիշատակում էր իրեն նման՝ ընդօրինակման համար: 1966ին Ձման Յինը գրական խօսք լսացավ խորհրդային և ոչ մի գրողի հետ: Գեյ, բայց յարմարուհի Մ. Շոլոխովի վրայ, իբրև գրականությանն ու արվեստի ապարդիտ օտարերկրային անհիմնական յերկայացուցիչի: Նա զգուշացնում էր խորհրդային գրականությանն «կոյր ընդօրինակման» դէմ:

Ձման Յինը սուր քննադատութեան ենթարկեց լինական նախադասական գրականութիւնը, ներառեալ 30ական թրււերին դործած գրողները: Ու թէև Մառ Յզե-Դունի նման (տե՛ս նրա «Լեմնեան»-ի գրայցմքը) նա զուգահեռ խօսեց Լու Սինի (1881-1936) մասին, չնայած նրա Էրկերի 1973ին նախաձեռնուած 20 հատորանոց թանկ հրատարակութեանը, նրա Էրկերից շատ քչերն են մասշին ընթերցող հասարակութեանը ու, յամենայնդէպս, դրանց մէջ չեն մտնում ո՛չ նրա յոռեստական բանաստեղծութիւնները Գորկիից, Ձերտից, Գարշինից, Արցիքաշից ու Լէոնիդ Անդրէեւից:

Մշակութային յեղափոխութեան ժամանակ շատ քիչ հնարաւորութիւններ կային նաեւ լինական դասական գրականութիւնը ուսումնասիրելու համար: Այդուհանդերձ, Լի Թայ-Բոյի ու Դու Յույի գրքերի հրապարակումը, 1971 թ. նախաձեռնուած Գո Մո-ժոյի կողմից, նշեց դասական բնագրերի ուսումնասիրութեան

և գիտական հրապարակումների աշխուժացում: Սակայն շատ տարիների ընթացում, ըստ երեւոյթին՝ 70ական թուերին Կոնֆուցիուսի դէմ ուղղուած արշաւից սկսած, անցեալի նկատմամբ հետաքրքրութիւնը սուր քննադատութեան ենթարկուեց:

Այդ ամէնը փոխուեց Մաոյի մահից յետոյ: 1978ին Կոնֆուցիուսը դեռեւս գիտում էր իբրև պահպանողական փոխութիւն, բայց նրա ստեղծագործութեան հետազոտութիւնն արդէն անհրաժեշտ էր համարուած Հին Ձինաստանը ըմբռնելու համար: Իսկ պատմական այն պայմանների հետազոտման ժամանակ, երբ ապրել է Կոնֆուցիուսը, նրա փոխութիւնի հետքերը արդէն դիտուած են իբրև յատկաբայ, այսինքն՝ պատմական տեսակէտից Կոնֆուցիուսի զաղափարները ճանաչուեցին մասամբ յատկապէս: Ձինական դասական գրականութեան գրեթէ բոլոր բնագրերն այսօր վերահրատարակուած կամ պատրաստուած են վերահրատարակման: Ու թէև դրանք բոլորն էլ օտուած են նոր ճանաթագրութիւններով, պատմութեան հանդէպ մարքսիստական հայացքը սովորաբար արտայայտուած է բաւական մեղմ ձևով:

Նախայեղափոխական գրողները գրեթէ լիովին վարկաբերուած են: 30ական թուերի գրականութիւնը նորից վերահրատարակուած է: Լու Սինի ծննդեան 100ամեակը 1981 թ. Սեպտեմբերին տեսեց շատ լայնօրէն, և մեծ ուշադրութիւն դարձուեց նրա ստեղծագործութեան այն կողմերի վրայ, որոնք հեշտ չէ տեսաւորել յեղափոխական իրադաշտութեան ու յեղափոխական վերադաշտութեան շրջանակում:

Սկսած 1977 թուից, երեւան են եկել եւրոպական գրականութեան մեծ թուով թարգմանութիւններ, — Վիկտոր Հիւգոն, Օնորէ դը Բալզակը, Ջոն Գուտսորսին, Չարլզ Դիկինսը, Մարկ Տուէնը և Լորդ Դարի ու 20րդ դարի սկզբի ուրիշ շատ գրողներ այսօր հրապարակուած են Ձինաստանում: Երեւան է գալիս Շէյքսպիրի երկերի լիակատար ժողովածուի թարգմանութիւնը: Շէյքսպիրի ողբերգութիւններն այսօր թատերական բեմ են

բարձրացում, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ Բերտոլդ Բրեխտի «Գալիլէյի կեանքն» թատերաւիժները։ Ու թէեւ «Գալիլէյի կեանքն» ցոյց չի տրուել լայն լսարանին, բայց այն մտաւարականութեան համար, որին յաջողուել է դա դիտել, դա դարձել է ուժանիւթ (գիմնաստ)։ Փոխադարձ կապը, որը տեղում է Գալիլէյի դիտութեան զարգացման եւ թերահաստութեան անհրաժեշտութեան միջիւրէր, ուղղակի արձագանգում է վարդապետական դիրքերի աշտարակ քննադատութեանը Ձինաստանում։ Պեկինում հրատարակուած գերմաներէն հրատարակութիւնը թատերաւիժներ ընդթափում է Գալիլէյի երկար մենաթառութիւնից բերուած մի քաղաքացի (14րդ դարակիւրում)։ «Գիտութեան ետապնդումը, իմ քաղաքում է, յատուկ խիզախութիւն է պահանջում։ Դա արոււմ է իմացութեամբ, շահոււմ տարակուսանքի միջոցով։ Ամեն մի համար ամեն ինչի մասին գիտելիք ձեռք բերելով՝ մա ճգնում է կասկածող դարձնել ամեն բանի հանդէպ»։

Այսօրուայ չինական հրատարակութիւնները, առհասարակ, քիչ ուշադրութիւն են յատկացնում Երկու Համաշխարհային պատերազմների միջեւ ընկած ժամանակաշրջանի եւրոպական դրականութեանը, իսկ Երկրորդ Համաշխարհային պատերազմից յետոյ ստեղծուած դրականութիւնը գրեթէ անյայտ է։ Դա բացառուում է ոչ միայն քաղաքական, այլեւ՝ գործնական պատճառներով։ Ժամանակակից եւրոպական դրականութիւնը բոլորովին անմատչելի է՝ թէ՛ գրախոսութեանում եւ թէ՛ դրադրաններում։ Ուստի եւ՝ եթէ 19րդ դարի անգլիական ու ամերիկեան գրականութիւնները բաւական լաւ յայտնի են, ապա ոչ ոք չի ճանաչում Ջէյմս Ջոյսին կամ Վիրջինիա Վուլֆին։ Արդի Ֆրանսիական եւ գերմանական գրականութիւնները եւս անյայտ են։ Նոր առաջնական գրականութեան թարգմանութիւնների համար հնարաւորութիւնները աւելի լայն են թուում, քանի որ Ձինաստանում կան մեծ թուով գիտակ ուսուցանողներ (չափից աւելի շատ են նրանք՝ համալսարաններում բոլորին տեղ գտնելու համար)։ Սակայն, որքան յայտնի է

մեզ, ոչ մի ապացոյց չկայ, որ խորհրդային հետաքրքրական գրողները, այնպիսիք, ինչպիսիք են Վասիլի Ալեքսանովը եւ Իւրի Տրիֆոնովը, թարգմանուած լինեն Ձը-Ժը-Հըում։ Թարգմանութիւնների առկարէզում հրատարակութիւնների հիմնական հետաքրքրութիւնն ուղղուած է արեւմտաեւրոպական եւ ամերիկեան գրականութեան կողմը։ Սակայն արդիւնքներն առայժմ մեծ չեն։ Թէեւ Ձը-Ժը-Հըում շատ մեծ աշխատանք է կատարում Մշակութային յեղափոխութեան պատճառով կորուստները հատուցելու գծով, միանգամայն բացայայտ է, որ արդի եւրոպական ու ամերիկեան գրականութեան թարգմանութիւնների թիւը խորհրդային Միութեան մէջ առայժմ դեռ շատ աւելի մեծ է, քան Ձինաստանում։

Հիմնադրադ. Մատյի այն պնդումը («Եւրոպական գրայցման»), թէ «բոլոր մութ ուժերը, որոնք խանգարում են ժողովրդական զանգուածներին, պէտք է մերկացուեն», այսօր իւրաքանչիւր մեկնութիւն է ուսացել։ Հնարաւոր է, օրինակ, հասարակութեան կեանքի մութ կողմերը ցոյց տալ վէպերում, բայց ընդամենը դրանց ծագումը անպայման վերադրելով այնպէս կոչուած «շրջապատի» հրապարակութիւն (Ձեան Տիւն, Ձեան Յուն, Մաւ Վեն-Վոան եւ Վան Հուն-Վեն) գործունէութեանը, որը Մատյի մահից անմիջապէս յետոյ շնորհադրուեց եւ 1980 թուին դատապարտուեց երկարատեւ բանտարկութեան։ Այսօր այդպիսի ջրհեղեղային գրականութիւնը բուռն կերպով աճում է, բայց դա միշտ էլ կապուած է Մշակութային յեղափոխութեան ժամանակաշրջանի հայտնաբերելու ու հարեկութեան հետ։ 1978 թուին Լու Սին-Հուայի «Մալի» վէպը լոյս տեսնելուց յետոյ (վէպի անունը կարելի է թարգմանել մահւ իրքեւ «Վէրք») հրապարակուեցին շատ երկեր, որոնք գտնուում են այդ գաղութների գրականութեան հունի մէջ։ Լիւ Սին-Սի «Դասարանի ուսուցիչը» (1977) վէպը հրապարակուել է «Մալի»-ից առաջ, բայց գիտում է միեւնոյն խնդիրներին։ Մշակութային յեղափոխութեան փորձին դիմում են նաեւ աւելի աւագ սերունդի գրողները, որոնք 1967 թուին դա-

տապարտուել են աջերի դէմ ուղղուած արշաւի ժամանակ ու վարկաբերկուել Մաս Յգէ-Դունի մահից յետոյ:

«Այրինքի գրականութեան» մեծաթիւ հրատարակութիւնները բանավէճ յարուցեցին այն ժամին, թէ գրողներն ինչպէս պէտք է պատկերեն Մշակութային յեղափոխութեան բացառական փորձը: Այսպէս, դաւաճական մի հանդէսում մեն ի՞նչ Յգեանը պնդում է, թէ հիւշ չէ նման պատկերումներին չափից աւելի տեղ յատկացնելը: Սակայն քաջամեծ ջրե-նազատ Վան Ժօ-Վանը (ինքն էլ աջերի դէմ ուղղուած արշաւի զոհերից) եւ Զր-Ժոս-Եանը (որը տուե՛ել է Մշակութային յեղափոխութեան աստիճանին), երկուսն էլ պաշտպանուած են նոր գրականութիւնը, որը հիմնուած է բացառական փորձի իմաստաւորման վրայ: Սակայն, այդ իմաստաւորման եղանակների ամբողջ բազմազանութեամբ հանդերձ, չէ թոյլատրուում քննադատել կուսակցութեանը:

Վեցերորդ. «Մարդկային քննադատութիւնը Մասի մահից յետոյ դառնում է դանազան բանավէճերի կենտրոնական տեղ: Մինչեւ հիմա նման բանավէճերը դեռ չեն տուել յստակ արդիւնքներ: Օրինակ, Յեան Զօն-Վենը ընդունում է մարդկային բնութեան զոյսութիւնը, բայց կասկածում է մարդկային բնութեան յատուկ տեսութեան տեւրածելուութեան նկատմամբ: Փաստօրէն նա պնդում է, որ դասակարգային ողաքարի տեսութիւնն էլ հենց որոշ չափով հանդիսանում է մարդկային բնութեան տեսութիւն: Երբեմն թւում է, թէ մարքսիստական ու մասշտակայն աւանդները վերաբերում են Զր-Ժր-Զրում արհեստական ճարտասանութեան օգնութեամբ, որն ըստանդուած է շփոթութիւն եւ տարածում կատարողներ, այն հաշուով, որպէսզի մեծացուի դաշտը ազատ վերաբնութիւնների համար:

Յզուն Զոս-Սեանի «Երբ մարդիկ են յայտնաբերում թատերգութեան մէջ ելք են գտնում դասակարգային տարբերութիւններից վեր բարձրացող համամարդկային զգացումները: Զորանի հրոսակա-խմբի մեղադրից չէ Շի-Յէյը մերժում է հիւրընկալել մի եանը հիւանդ կնոջ՝ Մէյ

Լինին, քանի որ լուրեր են շրջում, թէ շատ տարիներ առաջ նա գաւաճանել է կուսակցութեանը: «Ի՞նչ...», — ասում է նա, — մարդկային զգացումներ: Ես չեմ կարող իմ տաճը ընդունել գաւաճանու-հուն՝ հակայնդափոխականի մօրը: Այս է իմ պրոպետական դիրքը: Բայց որդին կշտամբում է նրան. «Մարդկային զգացումներ: Մի՞թէ դու իմե՞ղ մարդ չես: Միանգամայն տեղյակ է, որ թատեր-գութեան մէջ չի ընդունում այն դրոյթը, թէ դասակարգային տարբերութիւնները աւելի բարձր են մարդկային բնութիւնից: Վերջապէս, հօր կարծիքին տն-համաձայն լինելուց բացի, չէ Շի-Յէյը որդու կողմից Մէյ Լինի դասակարգային զոյսութեան կհաստատուի եւս պաշտպանում է այն միտքը, թէ մարդկային զգացումները կարող են դեր խաղալ՝ մարդկանց քաղաքական պատկերացումներից տեղախ:



Ձինական իշխանութիւնների տեսա-կան հայացքները գրականութեան աս-պարէզում շատ աւելի պակաս են կայու-նացած, քան Խորհրդային Միութեան մէջ: Ձինասանն անցնում է համեմատա-բար բաց վերաբնութիւնների ու վէճերի ժամանակաշրջանի միջով, որոնց մաս-նակցում են թէ՛ կուսակցութեան անդամ-ները եւ թէ՛ չինական կոմկուսի մէջ չ'ընտ-նուց պիանականներ: «Հարիւր ծաղիկներ»-ի քաղաքականութեանը վերադառնալը կուսակցութեան՝ մասնաբաժանութեան վրայ իր ազդեցութիւնը աւելացնելու մղումն արդիւնք է: Մշակութային յե-ղափոխութեան անկարգութիւններից յի-ստոյ մասնորակաւորութեան շատ ներկայա-ցուցիչներն զեռ չեն համարձակուում վի-րջակալի անցեալ գործունէութիւնը եւ աշ-տորուայ մշակութային քաղաքականու-թիւնը ձգտում է զօրաշարժի ենթարկել ամբողջ մասնաբաժանութիւնը՝ երկրի վե-րակառուցման համար: Այսօրուայ հակա-վարդապետական ազդութեան միւս պատ-ճառն էլ այն է, որ Մշակութային յեղա-փոխութեան ընթացքում Մաս Յգէ-Դունի երկերի վարդապետական մեկնութիւնը

միլիոնաւոր չինացիներէ դէմ ուղղուած ահաբեկչութեան արդարացում է ծառայել: Այդ միլիոններէ շարքում են եղել երկրի աշտօրուայ շատ ղեկավարներ: Ուստի՝ թէեւ Մաոյի երկերը ղեռնակներունստեան տեղ են բռնում ընթացիկ դադարաւորական վէճերում, դա տեղի է ունենում միայն այլ քննարկման տեսութիւններէ բացակայութեան պատճառով, եւ մշակութային ընտանեւ ներկայացուցիչներէ մեծ մասը, ըստ երեւոյթի, համաձայն է մարտկան ուսմանը թաքուն ընտանեւութեան: Վարդիւր ծաղիկներէ աշտօրուայ քաղաքականութեան երրորդ պատճառը կապուած է գրողներէ ու քրեանադատներէ դանազան խմբերէ ընկերութեան կողմէ հետ, որոնց մասին արդէն խօսուեց: Թէ՛ մշակութային յեղափոխութեան եւ թէ՛ աջակցի դէմ ուղղուած ուրախ ու աւելի միջ կատարուած ճշմարտութիւններէ դժգոհութեան հետեւեալ՝ գրականութեան հանդէպ անկարելի է գարծել մարտկան խիստ քաղաքականութիւնը: Այսօր, Հոս. Տրիքի աղանդակներէ յետոյ (որը սկզբից եւեթ միլիոններէ է գրականութեան միջաբերեալ զինանոցում գրայցներէն աւտայտարարութեան հետեւեալ յետոյ, որոնք պատկանել են զինանոցութեան յալ ճանապարհը, Մշակութային յեղափոխութեան ժամանակներէ աղանդաւորական գրական քաղաքականութեանը վերադարձայր անհասանկան է թուում:

Գրական կեանքի ընկերարանական պայմանները Խորհրդային Միութեան մէջ մի քիչ այլ կերպ են ներկայանում, քան Չինաստանում: Նախ՝ կուսակցութեան անդամներէ ու անկուսակցական մտաւորականներէ միջեւ խզումը դժարութիւն տուելի յայն է Խորհրդային Միութեան մէջ, քան Չինաստանում: Նրանք ընդհանուր փորձ չունեն, ինչպիսին որ է Մշակութային յեղափոխութեան փորձը Չեմ-Շընում, որոնք դա հոգ է ստեղծում լուրջ բանավէճի համար: Եւ եթէ ՍՄԿԿՄ մտաւորականութեան մէջ իր ազդեցութիւնը աւելացնելու լուրջ փորձեր է անում՝ այդ փորձերի արդիւնները բաւական թոյլ են, մտաւորականութիւնը մնում է զգալի

շափով մեկուսացած, իրենից ներկայացրեալով մի բուական նեղ շրջան, որոնք շրջում են նոր գաղափարներ եւ որոնք մարքսիզմը հազիւ թէ որեւէ դեր է խաղում: Բայց նա չի կարող դուրս գալ այդ շրջանի սահմաններից, ոչ էլ միջազգային կապեր հաստատել: Անկուսակցական մտաւորականութիւնը Խ. Միութեան մէջ ժողովուրդին գոյնում է մշակական մեկուսացման մէջ, որը կարող է խզուել սոսկ ԽՍՀՄ-ից արտագաղթելով: Երկրորդ՝ Խ. Միութեան մէջ կուսակցական իշխանութիւններն իրենց համարում են Մարքսի, Էնգելսի ու Լենինի գաղափարական ու քաղաքական ժառանգութեան բացառական արտայայտիչներ, ուստի եւ՝ նրանց օգտին է մարքս-լենինեան գլխաւոր դոգմաների պաշտպանութիւնը, որոնք արդարապէս են իրենց ընկերային դիրքը: Խորհրդային կուսակցական ժեքեան զգալիորէն աւելի ծանր ու պահպանողական է, քան Չեմ-Շընում: Մշակութային յեղափոխութեան կողմից խառնուած չինական կուսակցական կազմակերպութիւնը պատրաստ է վերանայելու մարքսիստական ժառանգութեան որոշ կողմեր: Վերջապէս, երրորդ՝ Խորհրդային Միութեան մէջ չկան այնքան շատ մարդիկ, որոնք վարկաբիւրուելուց յետոյ վերադարձած լինեն իշխանութեան գաղափար: Ի տարբերութիւն իրենց չին պաշտօնակիցների, Խորհրդային ղեկավարները սեփական փորձով չեն կրել վարդապետականութեան բացասական հետեւանքները: Այս բոլոր պատճառներով, չինական կոմիւնիստ ղեկավարներն այսօր աւելի բաց են, քան նրանց Խորհրդային պաշտօնակիցները:

Խորհրդային մշակութային քաղաքականութեան ղեկավարները, թուում է, հաստատ գիտեն, թէ որքան հեռու կարող են գնալ իրենք: Մի ամբողջ շարք որոյթներ են թակայ չեն քննարկման, ինչպիսիք են՝ արտացոլման տեսութիւնը, մեծի նկատմամբ բովանդակութեան առաջնութիւնը, սոցիալիստական ռեալիզմի մեթոդը, գրականութեան կուսակցական ղեկավարումը: Գրականութեան գրեթէ Խորհրդային բանավէճերում գիտելիական, ըստ երեւոյթի, շատ աւելի

մեծ դեր է խաղում, քան Ձինաստանում։ Ն. Ա. Գուլյանի եւ ուրիշների գլխավորությամբ տնտեսությունը՝ գեղագիտության խնդիրների կապակցությամբ» (Մոսկուա, 1970) գիրքը խոսում է «կուսակցականության» եւ գեղարվեստական տաղանդի դիպիկտիկական կապին մասին։

Կուսակցության իշխանությունը հիմնվում է այն հիմնադրոյթի վրայ, թէ նա ուղած առանձին գրողից աւելի լաւ գիտի, թէ ինչպիսին է իրականութիւնը եւ ո՞ր ուղղութեամբ է զարգանում համայն-խարհային պատմական ընթացքը։ Կուսակցության հայեացքների եւ գրողի հայեացքների ուղած տարբերութեան դէպքում, իրեւ կանոն, կուսակցութիւնը միշտ իրաւացի է, մինչդեռ գրողը՝ «աշխարհահայեացքային սխալների» զուգէ։ Կուսակցութիւնը գրողներից սպասում է իրականութեան համապատասխան տարտացում, այլ ոչ թէ հաշտարհի մոդելներն ստեղծում (վերջինս պաշտպանում էր սեմիոտիկայի (ախտաբանական) մոտեցման դպրոցը)։ Եթէ իրականի գրական արտացոլումը շեղւում է կուսակցական չափանիշներից, ապա, անկախ այդ արտացոլման գեղարվեստական որակից, կուսակցութիւնը (որին անհասանելի ուղիներով միշտ էլ յայտնի է ճշմարտութիւնը) կարող է շակել գրողին։

Նոյնաման խնդիրներ ներկայ են նաեւ արդի Ձինաստանի տեսական վէճերում, բայց այսօր չինական իշխանութիւնները ստական միաձուլ եւ պակաս խիստ են գեղարվեստական գրականութիւնը զեկափարելու հարցերում։ Եթէ խորհրդային ուղղափառ տեսութիւնը կարելի է համեմատել հոռմէական կաթոլիկութեան հետ, ապա նրա չինական տարատեսակը՝ բողոքականութեան հետ պէտք է համեմատել։

ԱՊԱՄԱՌՅԱՅՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Եթէ բաւական դժուար, բայց եւ այնպէս հնարաւոր է համեմատել գրականութեան տեսութեան միջակը Ձինաստանում եւ խորհրդային Միութեան մէջ, ապա

գրեթէ անկարելի է այդ երկու երկրների գեղարվեստական գրականութեան համեմատական վերլուծութիւն կատարելը տուեալ յոդուածի շրջանակում։ Գրական կեանքի բնկերային պայմանները, որոնք որոշում են գրական տեսութեան դերն ու բնոյթը Ձինաստանում եւ խորհրդային Միութեան մէջ, ազդում են նաեւ գեղարվեստական գրականութեան բնոյթի վրայ։ Ձինաստանում Մաս Յդէ-Դուեի մահից յետոյ հրատարակուող գրականութիւնը, ըստ երեւոյթի, կուսակցական իշխանութիւնների հաւանութիւնն է վայելում։ Արդի չինական գրականութեան մէջ նոր նիւթեր ընդգրկելու փորձերը ոչ միայն չեն զատապարտւում, այլեւ ոգիւնում են պաշտօնական իշխանութիւնների կողմից, գրեթէ աշուղտ՝ ինչպէս որ Վիվան Դեհիաուիչի կեանքի մէկ օրը (1962) Նուեց Ն. Ս. Խրուշչովի, Ա. Յ. Միխոյկանի եւ ՍՄԿԿ կենտկոմի նախագահութեան կողմից։

Ըստ երեւոյթի, կուսակցական դեկտիւմութիւնը Ձինաստանում հաստատւել է, որ թեմայական նորամուծութիւնները աշխարհայ գրականութեան մէջ չնշարում են թարմացման քաղաքականութիւնը։ Եւ, ինչպէս, դրանք բաւական հազուադէպ են հակասում կուսակցութեան քաղաքականութեանը։ Այդ իմաստով, բնաւ դարձանալի չէ, որ «սպիների գրականութեան» սիկոր դնող Լի Սին-Հուան կուսակցութեան անդամ է։

Վարկների գրականութիւնը՝ կարող է հոնդամանորէն նկարագրել Մշակութային յեղափոխութեան ահարկելութիւնն ու տառապանքի գործիքները, բայց հիւրեք չի յարձակում կուսակցութեան վրայ՝ իրեւ հաստատութեան, Մէյ Լի-նր՝ հին կոմունիստուհին, Վորք մարիլ Են քաղաք ծայնրը թատերգութիւնից յետոյ, քաղմաթիւ տարիներ է անցկացրել բանտում, եւ նրա որդին այսպէս է սրտում եւս ապրածի մասին։ «Եզ տարի Յա փախած էր Ենե քաղաքի մետրաքանց առանց պատահանի մուր խղում։ Տառապանք տալիս եւ մի անգամ ցերեկային լայն չտեսաւ։ Նրան ծեծում էին, մագիքից քաշում, սուքերով տրորում։ Նրան տողում

Էին գլուխը խոնարհել եւ բարակ քնով Այս վզից ծանր քար էիմ կախում...: Տասներեք եւտաճնակամ գիշերներ ընթացում Արամ գրկեցիմ քնից եւ խփում էիմ, երբ մա փակում էր աչքերը: Բայց կուսակցութիւնից կեղծ մեղադրանքով խաբարում էին կոմունիստուհին հաստատում է մնում կուսակցութեանը, պահելով իր անդամաւորները՝ մերժելն ինր տուրիներէ համար, այն յոյսով, որ իր ժամանակ ինքը կը կարողանայ այդ դրամը յատկացնել կուսակցութեան կարիքներին:

Կուսակցութիւնը հաւատարիմ մնալու նիւթի մեկնութիւնը սովորաբար պահում միողորմատիկական է, բայց միշտ էլ Մշակութային յեղափոխութեան ալլախերութեան ու անարդարութեան պատասխանատուութիւնը դրում է հարսի հրոսակախմբին ու նրա կամակատարների վրայ: Մշակութային յեղափոխութիւնը պատժանապէս երբեք չի դիտւում իրրեւ միակուսակցական կարգի արդիւնք, որը պարտադրում է բռնատիրական իշխանութիւն ունեցող ժողովուրդից: Ամէն ոք, ով դա կապում է ժողովրդավարութեան բացակայութեան հետ, դիտւում է իրրեւ այլախոհ ու բանտարկում: Այդպէս եղաւ Վէյ Յիւն-Շենի հետ 1979ին, այդպէս եղաւ Հոսան-Ի-Չէի հետ 1981 թուի Ապրիլին:

Մշակութային յեղափոխութեան նիւթից բացի, որը բաւական ազատօրէն շնորհիւրում է այսօրուայ հրապարակախոսութեան մէջ այն պայմանով, որ կուսակցութիւնը, իրրեւ այդպիսին, քննադատութեան չենթարկուի, Մտոյի մահից յետոյ չինական գրականութեան մէջ հնարաւոր են դարձել նաեւ այլ նիւթեր: Յանգագործութիւնը եւ գիթարտութիւնը մշակւում է Լի Մին-Սլոյի «Դասարանի ուսուցիչը» մէջում, կաշառակերութեան խնդիրը նկարագրւում է Գաօ Սեաօ-Շենի «Լի Շուն-Տան տուն է կառուցում» դրամում, յոյսն ու յուսախաբութիւնը՝ Ժու Չթա-Չթանի «Վաւա հրատարակուած վեպում», մարդանքը, գուարճութիւններն ու սէրը՝ Գուն Դոն-Շենի «Նրա պատմաքով» գրքում: Այդ բոլոր նիւթերը չէին կարող երեւալ Մշակութային յեղափո-

խութեան ժամանակաշրջանի գրականութեան մէջ եւ, ելնելով դրանից, դրանք պէտք է համարել նորածնութիւն: Նրանից դրբերը համարւում են արժէքաւոր ու բարձրագոյն ողջունում:

Այսօրուայ աղատականացումը Ձիւտտտնում ազգում է ո՛չ միայն նիւթերէ բազմազանութեան, այլեւ՝ չինական գրականութեան կառուցուածքային ու ոճական ձեւերի վրայ: Այսօր հրատարակւող մէկերը օգտագործում են, օրինակ, դիտակցութեան հոսանքի ձեւը, որը կըրթւում չին ընթերցողը ընկալում է իրրեւ կարեւոր նորամուծութիւն: Վան Մենի «Խեղճագործութեամբ հիանալի մասամբ հետեւանք է նրա հարտար հմտութեան» աղ կղանակի կիրառման ապարկէզում: Հենց նրան է պատկանում կատակերգական չափազանցութեան կղանակի դիտը, որի համոզիչ օրինակը նա տուել է «Այն ժամանակի ինքնաշարժի մէջ: Որոշ հեղինակներ, ինչպիսիք են Ժու Չթա-Չթանը եւ Լու Մին-Հոսան, իրենց գրքերում օգտագործում են նկարագրող իրադարձութիւնների ժամանակագրութիւնը խառնելու կղանակը: Օգտագործում է նաեւ «Երջում ախտի» կղանակը. դա յատկապէս կիրառում է Գաօ Սեաօ-Շենը «Լի Շուն-Տան տուն է կառուցում» գրքում: Այդ ձեւը հանդիպում է նաեւ թէ՛ աւանդական չինական գրականութեան մէջ եւ թէ՛ եւրոպական աւանդութեամբ (թէ՛ դիմաւորական շանդէսային եւ թէ՛ արդի քանատտիզմութեան մէջ, օրինակ, Գետեր Հանդիէն «Երջում ախտի» կամ Ագրիան Հենրին «Այսօր գիշերը լուսնի մօտ» դրամում): Գաօ Սեաօ-Շենը դա կիրառում է Լի Շուն-Տանի տարօրինակ երգերում, երբ նա, գտնուելով հոգեկան բուրրութիւն ճնշուած վիճակում, կարող էր արտայայտել սոսկ անբանական (խաղիւղալ) կերպով. «Մուկը զարկում է կատուի փորին» (...) «Անիծիմ կծում եմ լուսնը», եւ այլն: Ի տարբերութիւն Հանդիէի եւ Հենրիի, Գաոն չի դիմում ուղղակի քաղաքական անհարկութիւնների, բայց նրա անմեղ տեսարանները կարող են թոյլ տալ եւ քաղաքական մեկնութիւն:

Եւրոպացի կրթւած ընթերցողի համար չինական գրականութեան այսօրուայ

ձեւակաւ ու թեմայական նորամուծութիւնները կարող են այնքան էլ տպաւորիչ չթուալ, բայց չինական իրականութեան մէջ դրանց յարաբերական նշանակութիւնը հսկայական է: Եւ, այնուամենայնիւ, քաղաքական անցեալի քննադատութիւնը մինչեւ հիմա Չինաստանում չի անցել իւրաքանչիւր իրենցուրդի «Ձմեռայի» (1954-56) մակարդակից, որի մէջ պաշտօնակալ-տնօրէններին (Ժուրաւիւնին) դատաւարութեամբ է կուսակցական քարտուղարը, իսկ անկումնապաշտ-գերատանը (Վոյոզիա Պուխովը) իրեն հարեցողութեան է տալիս: Բուն կուսակցութեան վրայ էրենքուրդը չի յարձակուում:

Էրենքուրդի «Ձմեռայից» յետոյ ՊՄՀ Մում շատ գրողներ վերլուծեցին ստալինականութեան ախտը: Դուդինցեի «Ոչ Միայն իսկալ» (1956) վիպակի «հերոսը» գիտարար Լոպատկինը գեղեւտ կուսակցութեան անդամ է, սակայն դժբաղդով իրաւորը դառնում է ո՛չ թէ նրա կուսակցականութիւնը կամ նրա արած տեխնիկական գիւտը, այլ՝ մարդկային փոխյարաբերութիւնները: Աստիճանաբար պաշտօնական սխալները, — արդիւնաբերական զարգացումը, գիւղատնտեսական բերքը եւ խորհրդային բանակի հերոսական ուրախները՝ Նիկոլորդ Լամալիսար հային պատերազմի տարիներին, — յետին գիծ են մղում: Գնալով աւելի է աճում ուշադրութիւնը «Համամարդկային յատկութիւնների» հանդէպ, — շեռակութեան, մաքրութեան, ազնուութեան...: Գ. Բակլանովը «Մի քիչ եռոյզ վէպում» (1959) եւ ուրիշ գրողներ փչում են հայրենասիրական մեծ պատերազմի կիսապաշտօնական պատկերը: (Չինական հասկացական ազգայնական վէպը տակաւին տպաւորւում է իր հրապարակմանը): Իւրաքանչիւրը եւ կոնստանտին Պատուտովսկին յուշերի մի քանի հատորներ են թողել, — մեծ ճշգրտութեամբ ու զարմանալի շեռակութեամբ նրանք փորձել են վերականգնել անցեալը: (Չինաստանում անցեալի մասին յուշերի գրքեր դեռ չեն երեւացել): Պատմաբանակի եւ Մոլոտովիցինի արտասահմանում հրատարակուած վէպերը լայնօրէն տարածուել են նաեւ երկրի ներսում, խորապէս ազդեցով իրենց

դային Միութեան գրական կեանքի վրայ: (Չինական ինքնահրատարակչութեան մասին նոր են միայն սկսում խօսել եւ արտասահմանում գրքեր հրատարակելու հնարաւորութիւնները գեղեւտ բնաւ չեն հետազոտուած): Արդեօք ինքնահրատարակչութիւնն է շատ գրողների խորթացում յարուցել կուսակցութիւնից, թէ՛ ինչ-որ այլ բան է իր գերը խաղացել տյտեղ, — բայց իրողութիւն է միտմայն, որ վերջին տարիների վէպերը ամբողջովին նուիրուած են մարդկային փոխյարաբերութիւնների նկարագրութեանը եւ հայտնի չեն առում կուսակցական հրահանգները: Այստեղ մասնաւորապէս հարկաւոր է յիշատակել Իւրի Տրիֆոնովի վէպերը, ախպիսիք, ինչպիսիք են «Ուրիշ կեանքը» (1975) եւ «Տումը գետալիին» (1976): Ոչ մի նման բան տալիս չի երեւացել Չինաստանում եւ հայտնի թէ երեւայ մօտ ապագայում, քանի որ հողերանական իրապաշտութեան աւանդութիւնները Գոյութիւն չունեն այնտեղ:

Տումալ յօգուածի շրջանակում տեղ չկայ գնահատական չափանիշների կամ ապագայի կանխապաշտականների համար: Սրա նպատակն է նշել ամէնից ակնյայտ տարբերութիւնները՝ արդի չինական եւ սոսական գրականութիւնների, դիմաւորապէս վէպի միջեւ: Այդ տարբերութիւնները կարելի է բացատրել մասամբ չինական եւ սոսական մշակութային աւանդոյթների տարբերութեամբ, իսկ մասամբ էլ՝ իրենց դային Միութեան մէջ եւ Չինաստանում կուսակցութեան գրաւած յատուկ դիրքով: ՊՄՀ Մում ամէնից խոշոր գրողները մարտուել են անտեղեկ կարծեացած կուսակցական գրողները: Զրօր-Լուում գրողները տակաւին յոյս ունեն, թէ կուսակցական ուսմունքին կարող է արուել մարդկային դիմագիծ, թէ գիտական փորձի իրողութիւնները կր գերակշռեն նիւթական աշխարհի գրոյթաւորուած առաջնութեանը: Արդեօք նրանց յոյսերը կ'իրագործուեն, թէ կը վերածուեն խորտակուած պատրանքների, — անկտրելի է կանխադաշակել:

Թարգմանաւթիւմ

Լ. ՄԿՐՏՁԵԱՆԻ

2-1-1983 թ. Միւնխեն

Ա Ի . Ի Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն

Բ.- ՆԱՄԱԿՆԵՐ՝ ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆԵԱՆԻՆ⁽¹⁾

1

4 յունիսի 1907, Ալեքսանդրոպոլ

Սիրելի Հայր Սուրբ.

Հնորիակալութեամբ երեկ ստացայ բոլոր գրքերը, ո՛չ մի գիրք չէր վեր-
ցրած գրաքննիչի կողմից, որքան յիշում եմ. գոնէ ինձ հարկաւոր եղած գրքե-
րը կան:

Այստեղ նորութիւնները այն են, որ Դուման (2) ցրեցին, կառավարու-
թիւնը շա՛տ պօրեղացած է թուում, սպասում է (3) դեռ անելի սարսափելի քա-
ներ. ո՛վ գիտէ դեռ ի՞նչներ են մտածում այդ քիւրկրատները (4) ... Իսկ ժողովրդի
մէջ հակահարածի ո՛չ մի ուժ չկայ. մեզանում այս տարի սով է սպասում. անձ-
րեւներ չեն գալիս. համաճարակ հիւանդութիւններ են երեւում. վա՛ր տարի է.
տեսնենք ի՞նչով է վերջանալու...

Պրոֆ. Ն. Մառը (5) մօտ օրերս նորից գնաց Անի պեղումներ անելու.
այս տարի պեղելու է Բազրատունեաց պալատը — միջնաբերդ կոչւածը:

Ընդհանուր տպաւորութիւնը յուսահատական է — աղքատութիւն, կո-
ղոպտումներ, տգիտութիւն... այս բոլոր ցաների միակ բուժիչը յեղափոխու-
թիւնն է լինելու, բայց ո՛չ մինչեւ այսօրայ եղածը (6) — այլ մի այնպիսի
հպօր հեղեղանման յեղափոխութիւն, որ քանդէ, սրբէ, անդէ եւ հնարաւոր
դարձնէ նոր կեանքի գալուն (7) ... Բայց մինչեւ այդ օրը դեռ շատ տան-
ջանքներ կան տանելու... Այնպէս է թուում, որ մօտ ապագայում մեծ արիւ-
նահեղութիւններ կ'լինին: Ողջ մնանք նորից տեսնենք իրար: Վաղը գը-

նում եմ Թիֆլիզ, յետոյ նամակ կ'գրեմ նորից. կ'աշխատեմ չ'ընդհատել նամակներս:

Բարեկեցեք յարգելի Հայր Տաշեանին եւ միւս ծանօթ Հայր Սուրբերին.

մնամ յարգանքներով
Ձեր ԱԻԵՏ, ԻՍԱՀԱԿԵԱՆՑ.

Ալեքսանդրօպօլ. 1907, 4 յունիսի:

- (1) Վիեննայի Միթթերնի միաբանութեան տեղում, բանասէր (1888-1898):
- (2) Կոստամբուլի տեղական եւ կենտրոնական մարմին ուսումնական կայսրութեան մէջ:
- (3) Ինքնագրում՝ աշուղէս:
- (4) Ձեռագրաւ պաշտօնէս:
- (5) Նիկիոյ Մօս (1864-1884), շառլանդացի հօրից եւ վրացի (կամ միկոյի) մօրից ձեռնած աղմուկի տրեւելագէտ, լեզուարտ, հայագէտ: Անի քաղաքում կատարել է պեղումներ 1898-1917 թթ., ընդմիջումներով:
- (6) 1905 թ. Թուրքիայում արգէն տեղի էր ունեցել յեղափոխութիւն, որ ցարական կոստամբուլիւնք ճշդ է:
- (7) Ինքնագրում՝ աշուղէս:

2

9 Հոկտեմբ. 1914. Բերլին:

Գերապատիւ Հայր Ն. Ակիւնեան.

Պատիւ ունինք (1) խնդրելու Ձերդ Գերապատւութեանը հետեւեալը. Աղանացի (Կիլիկիա) մի հայ երիտասարդ, Պետրոս Քէլչեան անունով, գրաշար, որ մինչեւ վերջերս տարիներից ի վեր գործում էր Բերլինի Beiersdruckerei-ում, հիմա մնացել է միանգամայն անգործ եւ նեղ վիճակի մէջ, պատերազմի պատճառով կրկնած լինելով իր տեղից: Գիտէ Պարսկերէն, Արաբերէն, Տաճկերէն, Գերմաներէն եւ Հայերէն. լաւ գրաշարի հոչակ ունի, պարկեշտ եւ խելացի երիտասարդ է. այժմ եթէ Ձեր տպարանում տեղ ունիք, յատուկ խնդրում ենք, շուտով յայտնէք մեզ, որ ուղարկենք նրան Ձեր տպարանում աշխատելու:

Յոյս ունինք, որ օգնութեան կը հասնիք այս հայ երիտասարդին այս ահաւոր օրերում, ուր մնացել է նա օտար երկրում անօգնական:

Մնանք յարգանքներով՝
Ձերդ՝ ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ:

- (1) Ինչպէս ցոյց է տալիս նամակի լուսանկարը, ընկերութեան տնօրէն է Հայագիւրման ընկերութիւնը եւ ոչ թէ Վերման-Հայկական ընկերութիւնը, ինչպէս գրել է Լեւոն Հախվերդեանը (Վնայիթ), 6 Ապրիլ 1876, էջ 3) եւ որոշակի չի տեսել հայագէտ Լեւոնի եւ Ա. Խաւակեանի պաշտօնները: Լեւոնի մասին ընկերութեան նախագահն է եղել, Խաւակեանը՝ երկու ֆարաուզարիներից մէկը: Ցեւ Վնամիկեր, էջ 151-152:

	Vorstand: <i>Kapitel IV</i>	
Vorstands- Vorstandes- Präsident Vizepräsident Schriftführer Kassenwart Schlichter Beisitzer	}	Dr. Johannes Lepsius, Potsdam, Dr. Weimelerstraße 66. Dr. Paul Ehrlich, Berlin-Friedrichshagen, Strömsunde 19. Dr. James Greenfield, Berlin-Wilmersdorf, Brandenburgerstr. 23. Pierre K. Suter, Alten bei Dessau. Aurelil Isaksson, Berlin-Wilmersdorf, Mannische Straße 22. Hr. A. Hirschen, Berlin Wilmersdorf, Kaiser-Allee 177.

Dr. Marquart, Professor an der Universität Berlin, D. Vade, u. s. w. an der Universität Würzburg. Dr. H. Darbinian, Charlottenburg.
Dr. J. Bauer an Charité-Klinik Berlin & Städtisches Krankenhaus.

9. July 1914. Frick:

Mr. Charles E. Lippert.

Հայերն արժեք խնդրեալ զիս գիտաբանական հետազոտ
Աշխատել (հիմնա) 2 հայ տիպոգրաֆ, հիմնա թիւերէն ան-
շուք գտաւ, որ քիւրտ Վիշէտ ջաշիկի ի վեր գտնուեալ
Բուրձ Բեւիթիւնուսուրու, Կիւրտ խաշիկ 2 քաղաքացի անգործ
նա Վիշէտ զի, Կուրտի 2 քաղաքացի քիւրտ թիւեր Եր թիւեր:
Գիւրտ Կաշիկի, Աղաշիկի, Մանսիկի, Գրիւնիկ և Խաշիկի
ևս գտաւ խաշիկ անգործ, Կուրտի և խիւրտ տիպոգրաֆ Եր.
Կիւրտի 2 քաղաքացի քիւրտ անգործ յարմար խիւրտ թիւեր, շատ
Վիշէտ զի, որ անգործիկ Կուրտ 2 քաղաքացի անգործ քիւրտ =

Զքւ արթնդու օգնութիւն իւ հասնիքդ ցու իմ ինքնաստի
յու տեսնոյ օգնութեան իմոյ (Երան իմոյ) արթնութիւն:

What is your reply?

Imp: 14-10-18 Handwritten:

3

23 Մայիսի 1922, Վենետիկ.

Վերապատելի Հ. Ներսէս Վր. Ակիներան,

Հա՛տ սիրելի բարեկամ,

Հայր Սուրբ, մեծ շնորհակալութեամբ ստացայ Ձեր նամակը, եւ գիրքը, եւ դպրոցի ծրագիրը (1) :

Ձեր գիրքը սիրտս ուզած գիրքն է, հայրենի տաղասացները, որոնք շա՛տ սիրելի են իմ հոգուն, որոնցից (2) լեզվից, ու ոճերից շա՛տ պիտի օգտուիմ. արդէն ես բաւական չափով օգտւած եմ թէ մեր անգիր դպրութիւնից եւ թէ միջնադարեան երգիչներից:

Հնորիակալ եմ Ձեր տաճ տեղեկութիւններից. դպրոցը լաւ կ'երեւայ ինձ, մնում է, որ վերջնականապէս որոշենք Վիեննա տեղափոխելու հարցը. օրը մի-երկու անգամ փոխում ենք մեր դիտաւորութիւնները, եւ դեռ որոշ վճռի չենք յանգել. մի օր ես եմ համաձայնում, կիսն հակաճառում, միւս օրը դերերնիս փոխում ենք. բայց եւ այնպէս շուտով մի բան կը վճռենք, եւ պատիւ կունենանք Ձեզի յայտնելու:

Հիմա գալիս են Վիէնա (3) ուրիշ հայրենակիցներ՝ Պ. Սարգիս Խաչատրեան կնոջ հետ, եւ Պ. Զարեհ (3) Չոփոտեան [“], կը խնդրէի բարի լինելիք Նրանց Ձեր խոհուրդներով օգնելու, եւ ցուցմունքներ (4) տալու:

Կիսն ջերմագին բարեւում է Ձեզ. խնդրում եմ իմ կողմից հաղորդէք խորին յարգանքներս Ձեր պատկառելի միաբանութեան եղբայրներին:

Ձեր մշտական անկեղծ բարեկամ,
ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆՅ.

(1) Այն դպրոցի ծրագիրը, ուր չաճախելու էք իստականների որդիներ՝ Վիզէնը, եթէ բնութեւիքը Վենետիկից տեղափոխուէր Վիէնա, որ տեղի չունեցաւ: Այս ժապին խօսուած է նաեւ Սիմոն Յակոբեանին դրած նամակներում:

(2) Հաւանաբար վրիպակ է, փոխանակ որոշեց կամ ճորտիցից, լեզուից:

(3) Բնագրում՝ այսպէս:

(4) Բնագրում՝ այսպէս, փոխ. ցուցումներ:

4

23 յունիս [1922] (1). Վենետիկ.

Սիրելի Հայր Ներսէս,

Նորից հարկադրւած եղայ Ձեզ գլխացաւանք պատճառելու. այս անգամ վճռել եմ Վիէննա տեղափոխել. պանապան պատճառներով. 1). կիսն չի կարող խոնաւ կլիման տանել. միշտ հիւանդանում է. 2). ես մահու չափ ձանձրացել եմ այս մեռած քաղաքից եւ պիտի չկարողանամ նորէն տարիներ ապրել մինչեւ տղաս դպրոցն աւարտէ, եւս 3-4 տարի. եւ կուշտուրապէս յետ եմ գընում. 3). տղայիս աւելի առողջ կրթութիւն կտամ: Եւ վերջապէս Վիէննա ապրե-

լը սահմանափակում է եւ օգտակար: Եւ Ձեր վանքի գրադարանից օգտւելով աւելի տեքնիկ յարմարութիւններ ունի, քան Ս. Ղազարը. եայլն, եայլն:

Այդ առթիւ գրել էի Պ. Ա. Երեմեանին (2) բնակարանի մասին տեղեկութիւններ խնդրելու համար: Արամը բարի եղաւ գրելու, թէ Մեծ. Պ. Արշակ Խան Գորոյեանը բնակարան ունի, եւ որ Դուք, եւ Պ. Յ. Սաղաթելեանը կարող էք միջնորդել, որ ինձ տայ. այժմ կ'իւնդրեմ քերմագինս, դիմէիք Խանին այդ առիթով. կարո՞ղ է ինձ տալ երեք սենեակ եւ խոհանոց, կարելո՞ր անհրաժեշտ կահ-կարասիով. այն սենեակները, ուր ապրում են Երեմեանը եւ բժ. Մանգինեանը. վճարը այն չափով, որ ո՛չ ես տուծեմ, ոչ Խանը. պիտո՞ղ. Յովհաննէս Խանը իմ տնտեսական միջոցները գիտէ. սակայն այս խնդիրը երկրորդական է, որովհետեւ պարզ է, որ Վենետիկից սուղ չի լինելու:

Կուզենայի գիտնալ, թէ Խանը կ'օժարի տալ, երբ կարո՞ղ եմ գալ. մինչ-մում-մաքսիմում ժամանակամիջոցով. որովհետեւ լսել եմ, թէ կառավարութիւնը պարապ սենեակները գրաւում է, իսկ մենք կարող ենք գալ յուլիսի 20-ից յետոյ, որովհետեւ տղաս հարցաքննութիւնները այդ օրերը կ'վերջացնէ. իսկ խեղճ Խանը չեղաւ, նորէն գրեցէք ինձ, գոնէ աւելի փութացնենք, կամ ես շուտ գամ:

Խանը ինձ ճանաչում է, եթէ չի մոռացել. բայց շնորհիւ Ձեր, Յ. Սաղաթելեանի եւ Յովհաննէս Խանի, յոյս ունիմ, որ չի մերժէ:

Յետոյ չգիտեմ արգելք կայ Վիեննա գալու համար կառավարութիւնից. եթէ կայ (օրինակ, Բերլին չի թողնում), արդեօք դո՞ւք չէիք կարող թոյլտուութիւն ձեռք բերել: Ուրեմն խնդիրս պարզ է. բնակարան եւ թոյլտուութիւն հող գալու: Չգիտեմ լաւ եմ անելու թէ ո՛չ (պաւակիս նկատմամբ դպրոցից դպրոց փոխելով՝ Ժընեւ, Վենետիկ, Վիեննա), բայց որոշել եմ, Աստուած թո՛ղ յաջողէ:

Յայտնելով խորին շնորհակալութիւնս, սպասում եմ Ձեր բարի լուրերին, ինչքան կարելի է շուտ:

Բարեւներով եւ յարգանքով Ձեզ, Պ. Սաղաթելեանին, բոլոր եղբայրներին,

մնամ Ձեր անձնւէր՝

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ.

2286, Dorsoduro de Marchi, Venezia.

(1) Տարեթիւ՝ Ինքնագրաբար:

(2) Հաւանաբար Արամ Գաբրիելի Երեմեան (1898-1972), իրանահայ գրող, զբաղանա-գէտ, արուեստաբան, աւարտել է Վիեննայի համալսարանի պատմութեան բաժինը:

5

4 դեկտեմբ. 1922. Վենետիկ.

Վեր. Հ. Ն. Ակիւնեան.

Սիրելի Հայր Սուրբ,

Հնորիակալութեամբ ստացայ Ձեր քարտը, եւ մի երկու օր առաջ լուսանկ. գործիքը. Վիգէնը անսահման ուրախացաւ, կարծես, աշխարհ տւի՛ն նըրան (1):

Մենք չկարողացանք այս ճահիճից դուրս գալ (2)։ առհասարակ ճահիճից դուրս է ելլելը, թերեւս նորից ճիգ անեմ։

Հնորիակալութիւն Ձեր տւած պատմական տեղեկութիւնների համար, ի-րօք, շա՛տ հետաքրքրական էր։

Ս. Յակոբեանից (3) երկու ամիս կայ ո՛չ մի լուր չունիմ, ո՞ր մնաց, ի՞նչ է անում. եւ ո՛չ էլ «Արեգի» (4) մասին բան գիտեմ. ի՞նչ է Ջաքարիայի այս պապանձումը։

Մենք լաւ ենք, ողջ եւ առողջ. եւ բաւական լաւ պարապում են, թէեւ տրամադրութիւնս շա՛տ գէշ է վերջին ազգային ազդէտների պատճառով։ Ջերմագին բարեւներ Հայր Յ. Տաշեանին եւ ծանօթ հայրերին. շա՛տ բարեւներ կ'ստըջ կողմից. Վիգէնը համբուրում է Ձեր ձեռքը. մնամ յարգանքներով միշտ Ձեր՝

ԱԻԵՏ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

(1) Լուսակալութեան դրօշից Ս. Իսահակեանի որդի Վիգէնի համար է եղել. այս մասին Իսահակեանի կեանքի մասին էլ է պատմական նշանակություն.

«ԱՂ ԵՂ» [19]22. Վեներիկ.

Վերապատմելի Հայր Ներսէս.

Վերապատմելի եւ ինքնուրույն ճիշդ ճիշդագոյն պատմական եւ տար. Գ. Բաղդատեան լուսակալութեան գործիք էր գնել որպէս համար եւ յանձնել իր ուսածոջ Յակոբեանին, որ մեզ ուղարկել էր Վիգէնի։ Եւ յանձնել էր Ստեփան վարդապետին, որ հետոյ բերել. բայց այնպէս իրան չի յանձնել։ Հիմա իմոյքում եւ բարի լինէ՛ք ստանալ գործիք եւ այստեղ եկողի հետ ուղարկելէ։

«Ջերմ բարեմեքով եւ յարգամբնով

«Ջերմ Տիկ. Ս. Իսահակեանց

«Ջ. Գ. Ամուսինս մի էմնի օրով բացակայ է»։

(2) Եւ ինքն Վեներիկից Վիգէնի առաջադրութեան չկարողանալու մասին է։

(3) Միմեան Յակոբեանի մասին տե՛ս ստորեւ. նրան ուղղուած նամակների մեր նախա-րանում։

(4) Միմեան Յակոբեանի հիմնած եւ իմբազրած հանգիստը։

6

29 դեկտեմբ. [19]23 թ., Վեներիկ.

Ամէնասիրելի Հայր Ներսէս Ակինեան,

Հնորիակալութեամբ ստացայ Քաջազնունիի (1) գիրը. շա՛տ հետա-քրքրական կերպով է կապւել, սակայն անարժէք է, որովհետեւ անկեղծ չէ, թէեւ դրսեւորոյթով անկեղծ է թուում (2)։

Ի՞նչ է բօլշեւիկը հայերիս համար. ի՞նչ բերեց նա, ահա պատաս-խանը (2)։

Ո՛չ Սուլթան Համիդ, ո՛չ Իթթիհատ, ո՛չ ցար եւ ո՛չ աշխարհն ամբողջ այնպէս վերջնականապէս չթաղեցին Հայաստանն իր հարցով, ինչքան բօլ-շեւիկը. որովհետեւ Բրեստ-Լիտովսկի (3) դաշնագիրը (որի (4) մի հետեւո-ղական էջն է Կարսի դաշնագիրը) մեր սգաւոր գոյութեան ամէնասպախիչ ակտն

հոգ և հարգանք քան առ, որ Կարգ արեց
 դրանք ևս հայտնի հետազոտող, և անցած դարեր
 հավանաբար հայտնաբեր, և որն զարգացել էր մշտն
 հաջորդող հայտնի 2 խոսք, անհոյն ժամանակ խոսք
 անհոյն շատ ևս քան թանկ և փոքր դասեր: և
 2 20-30 շաբաթ դե թանկեր և հայտնի
 անհոյն, և անհոյն թանկերն ևս ան-
 հոյն հայտնի թե ծախս դասեր, և
 անհոյն հայտ, ինչպես...

Եւնի այն անհոյն թանկեր, և թանկեր
 ինչպէս այն անհոյն անհոյն. թե անհոյն ևս
 անհոյն... թանկերն ինչպէս անհոյն ի
 անհոյն անհոյն և անհոյն անհոյն:
 ինչպէս. որ անհոյն անհոյն, և անհոյն ան-
 հոյն անհոյն անհոյն անհոյն, իսկ և և
 անհոյն անհոյն անհոյն անհոյն անհոյն. ան-
 հոյն անհոյն, անհոյն անհոյն. իսկ թանկերն և
 անհոյն անհոյն անհոյն անհոյն և անհոյն

Պ անհոյն անհոյն անհոյն անհոյն. 1917 թ.

է, գործը. Լօպանի դաշնագիրը բղխած է դրանից. ինչ կայ աւելի որոշ եւ հաստատուն քան այն, թէ՛ Ցարը արդէն գրաւել էր հայկական նահանգները, եւ անդարձ միացրել Կովկասի Հայաստանին, եւ թէեւ ջարդուած էր այդ նահանգների հայութեան մի մասը, սակայն մնացած մասը աւելի շատ էր քան թուրքն ու քուրդը միասին (*) Եւ մի 20-30 տարւայ մէջ բոլորովին կ'հայանային այդ նահանգները. սակայն քօլշեյկները այդ դիւական դաշնագրով յետ տւին գրաւածները, եւ դեռ աւելին Կարս, Իզդիր...

Ահա՛ այս բերին քօլշեյկները. եւ Քաջապնունին կարո՞ղ էր այս ասել նրանց երեսին. թո՛ղ նրանց բոլոր անհեթեթութիւնները... Քաջապնունին կեղծաւոր գրիչ է, եւ նրան առաջուց էլ ճանաչում էի, եւ չէի սիրում:

Ի՞նչ որ է. մեր ձեռքը ոչինչ չկայ, եւ աշխարհը քայլում է առանց մեր ուզածի համաձայն, իսկ եւ էլ իրաւունք ունիմ ատելու Ռուս յեղափոխութիւնը, նրա պաշտպաններին, նրան շոյողներին. եթէ Քաջապնունին էլ Չալդուշեանի (5) պէս իրեն համար անցագիր է պատրաստել այդ քօշիւրը (6) գրելով, ներում եմ. մարդիկը ծերացել են, իրենց կանանցից, երեխաներից հեռու չեն կարող ապրել. թո՛ղ երթան տուն:

Այդպիսի մարդկանցից վնաս չկայ:

Պատիւ ունիմ շնորհատրելու բոլոր հայրերիդ Նոր-Տարին, ցանկանալով ամէնքիդ առողջութիւն եւ երկար կեանք:

Կինս սրտագինս բարեւում է Ձեզ:

Համբոյրներով եւ քարեններով
մնամ Ձեր՝
ԱՌԵՏ. ԻՍԱՀԱԿԵԱՆ:

(1) Յովհաննէս Քաջապնունի (1888-1897), ճարտարապետ, Հայաստանի Հանրապետութեան առաջին հասափորութեան նախագահ, Հետադարձ վերադարձի է Սովետական Հայաստան, ուր եւ հեթարկուել է աքսորի:

(2) Բնագրում՝ միջակէտ, գրեթէ (ս):

(3) Բնագրում՝ ձեռագրից. ստորագրուեց 1918ին:

(4) Որ է բնագրում: Ստորագրուեց 1921ին, Անդրկովկասի Սով. Սոց. Հանրապետութեան եւ Գեմալական Թուրքիայի միջև:

(5) Գերմանական զաղտնի զինուորների համաձայն 1917 թուին. (հեղինակային ծանօթ):

(6) Գրիգոր Չալդուշեան (1861-1931), ղրաւոր եւ Հասարակական գործիչ, հեղափոխիչ է Սով. Հայաստան:

(7) Գրքի վրէ, որի մասին նա բացառաբար է արտայայտուել նաեւ Վ. Նաւասարդեանին 1924 թ. Ապրիլի 3ին գրած նամակում (Վնտմակները, էջ 8):

7

31, III, 1924, Վենետիկ.

Սիրելի Հայր Սուրբ,

Նորից հարկ եղաւ Ձեզ նեղութիւն պատճառելու. խնդրում եմ ներող լինիք:

Բանն այն է, որ մտածում եմ վեպս (1) տպել, — եւ Վիեննա, Ձեզ մօտ. մի-երկու բարեկամ հաճութիւն են յայտնել ծախսերը հոգալ, եթէ մատչելի լինի իրենց գրպանին. ուստի ուզում են վտօրօք գիտենալ նախահաշիւը. գիրքս լինելու է 700-750 էջ, Ռաֆֆիի «Սամուէլի» էջերի չափով (2). երկու հատորի բաժանուած, կէս առ կէս: Թուղթը միջակ. (կարելի՞ է այս բառով բան հասկանալ) ո՛չ լաւը, ո՛չ գէշը. միջակը. Կոնֆուցիուսի սիրած ձեւը: Գրքերի քանակը (օրինակը) լինելու է 1000-1200-ի չափ. շատը չի ծախի, կը մնայ: Տպագրութիւնը սկսելու է. հաւանաբար սեպտեմբերից. թէ նրանք դեռ պատրաստ չեն, թէ ես չեմ արտագրել՝ կարդալու համար. սակայն նրանք անելի շուտ պատրաստ կ'լինին, քան թէ ես. միայն ծախսը պիտի նրանց տարողութեան չափ լինի: Թերեւս թոթի նմուշ գնի հետ միասին բարի լինիք ձամբելու:

Սիրելի Հայր-Սուրբ, թէ դուք պատշաճ կ'լինիք, — որ էք անշուշտ, — յանձնեցէք Ռուբէն Թերլեմէզի[³] կամ Արամ Երեմեանին, նրանք հոգան այդ արդէն Հայր Մեսրոպի հետ է գործը:

Ուզել էիք իմ նկարը. մի նկարիչ (պօրտրետիստ) (3) նկարում է ինձ, յոյս ունիմ, որ յաջող պիտի դուրս գայ, նրանից ուզում եմ կիշէ (4) շինել տալ. եւ Ձեզ եւս կ'դրկեմ, որ պահէք իմ մահապղի համար. եթէ լաւ չեղաւ, անպատճառ նկարելու եմ, քանի մազերս սեւ են, եւ դէմքս թարմ, որ այդ պատկերը ասպարէզ նետեմ...

Վերջերս Ռ. Թերլեմէզի [³] միայ (վանքի հասցեով) նամակներ էի դրրկել. եւ ներամիտի մի նամակ Յ. Սաղաթելեանին Ռիգայից դրկած, — չգիտեմ, ստացւեց նամակս. այդ մասին Ռուբէնը դեռ չի գրած. անհանգիստ եմ: Ես մի 10 օրով գնում եմ թափառելու Վերոնայի կողմերը. յոգնած եմ, գլուխս թմրել է. ապա դարձիս պիտի ականջ վէպս արտագրել եւ օրբագրել միաժամանակ:

Մենք լաւ ենք, կինս բարեւում է Ձեզ:

Մի շաբաթ առաջ վախճանեց Ս. Ղազարի միաբան հայր Միքայէլը, հունգարացի, լաւ մարդ էր. կրթած, բարի, բայց թոյլ, անազգու. 87 տարեկան, շաքարախտից:

Յարգալիւր բարեւներով բոլոր պատուելի հայրերին. եւ Ձեզ, սիրելի Հայր-Սուրբ.

մնամ Ձեր՝

ԱՐԵՏԻՔ ԻՍԱՀԱՆԵԱՆ.

(Հար. 2)

(1) «Ուստայ Կարօ», որը երբեք էլ ամբողջութեամբ չուր չտեսուի. հրատարակուեցին միայն հատուածներ: Ուրիշ շատ ծանօթների խօսել է Բաւարականի իր այս վէպի մասին:

(2) Ռաֆֆի, «Սամուէլի». պատմական վէպ (366-400), Վիեննա, 1888, 1896, մեծադիր 708 էջ. 3րդ տպ. 1926:

(3) Ֆրանս. portraitisti, դիմանկարիչ:

(4) Ֆրանս. cliché:



ՎԱՋԳԵՆ ՅՈՒՅԱՆԵԱՆ (1903-1941)

«Մնած եմ փնտրուաբի ցուրտ, դժմէ գիշեր մը, երբ դուրսը պարտէզին վրայ ձիւնը կը նստէր: Մայրս կ'ըսէր, որ անկա պատանեցաւ, երբ անտառապանը, առաւօտեան, մեր եզերքում աւ ձիւնում մտար կը յեցնէր»:

Մփուռ քահայ գրականութեան ամէնէն անհանդարտ դէմքը հանդիսացած Վազգէն Շուշանեան, հետագային՝ «Գարնանային» 83րդ էջին վրայ, վերի բառերով պիտի անդրադառնար իր ծնունդին: Աւագանի անունով Օննիկ Շուշանեան ծնած է 9 փետրուար 1903ին, Ռոստոմ (Արեւելեան Թրակիա), չրջանի հարուստ ընտանիքներէն մէկուն՝ Գրիգոր Շուշանեանի երգիքին տակ: Հայրը իրաւագէտ էր, բայց կը զբաղէր պապենական հողերը կառավարելու գործով, իսկ երկաթագործի համեստ խաւէ մը սերած իր մայրը՝ Նարեկ Դանիէլեան, տնային աշխատանքներով: Աշխատու գեղեցկութեամբ մօր մը եւ հարուստ հօր մը անդրանիկ զաւակն էր Վազգէն Շուշանեան, որ ու-

նէր քոյր մը եւ եղբայր մը:

Ընտանիքին անդրանիկը առաջին հերթին կը յաճախէ ծննդավայրի Ս. Քաջի Յիսուսեան եւ Ս. Թաղաւոր թաղի Յովհաննան վարժարանները (1906-1911), իսկ Նախնական կրթութիւնը կը ստանայ Ս. Մանուկեանի դեկավարած նախակրթարանին մէջ, զոր կ'աւարտէ 1915ին:

1915ի Սեպտեմբերին, Ս. Քաջի տօնին շորրորդ օրը, Շուշանեան ընտանիքը հայրենի գաղաթն անակնկալօրէն կը տարագրուի Փոքր Ատիա: Տարագրուողներուն մէջ էին ընտանիքին բոլոր անդամները՝ հայրը, մայրը, քոյրը՝ Մարին եւ փոքր եղբայրը՝ Գէորգ: Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսները անոնք յաջորդաբար կ'անցընեն Գոնիայի, Գոլտոյ եւ Իդմիրի մէջ, ուր կը բանտարկուին կարճ ժամանակ մը: Նոյեմբերին, իրենց տարագրութիւնը կը շարունակեն դէպի Ուլու Գըշլա, Գողանթը, Տարսոն, Օսմանիէ, Հասան Գէշլի, Մամուրէ, Իսթանբուլ, Ռանու, ուր Վազգէնի թեւերուն մէջ կը մահանայ իր հայրը, շուրջ վաթսուս տարեկան հասակին:

Դժբախտ ընտանիքը կը շարունակէ իր ճամբան: 1916ի Յունուար եւ Փետրուար ամիսները կ'անցընեն Գաթա-Աղէզ-Հալէպ գաղթափայրերուն մէջ: Մարտին, Վազգէն կը յաջողի մտնել Երկաթուղիի ընկերութիւն՝ իրրեւ երկաթագործերու հաստատմամբ եւ նորոգութեամբ զբաղող արհեստանոցի աշկերտ: Ան կը կարծէր, թէ այսպէսով պիտի կարենայ ձեռք ձգել Հալէպ կեցութեան արտօնադիր մը՝ իր մօր, եղբոր եւ քոյր համար: Հաղառակ պատանի Վազգէնի ճիւղերուն, իր հօրեղբոր ընտանիքին հետ անոնք եւս կը տարադրուին Տէր-Զօր՝ Երկաթուղագործի բանուոր ըլլալու հանգամանքը գինք կը փրկէ թրջական եաթաղանէն: Ապրիլին, շուրջի հայ կաթողիկէի մը միջամտութեան՝ շեքէզ կառապան մը կը խոստանայ գինք տանիլ Ապուհարարա, բայց վերջին վայրկեանին կատապանը կը հրաժարի իր յանձնառութենէն եւ ընտանիքը փրկելու Շուշանեանի ծրագիրը ձախողութեան կը դատապարտուի:

Ամիս մը անց, եղբայրը նամակով մը կ'իմացնէ, թէ Մայիս մէկին կորսնցուցած են իրենց մայրը: Համամ չհասած՝ Յուլիսին Վազգէն կ'իմանայ նաեւ եղբորը մահուան գոյժը: Զարդերէն հրաշքով ճողորմարած հայրենակիցիներէն կը հասնին նոր ու հակասական լուրեր: Ոմանք կը յայտնեն, թէ քոյրը՝ Մարին, զոհուած է Տէր-Զօրի Նարեկերուն, իսկ ուրիշներ կ'ըսեն, որ առեւանդուած է արաբներու կողմէ: 1917ի Ապրիլին, Շուշանեաններու մօտիկ բարեկամուհի մը կը հաստատէ զրոյքը նահապետի մահ լուրը:

Քրոջը մահէն ետք, Շուշանեան կը մնայ միս-մինակ, լքուած ու անտէր՝ աշխարհին դէմ: Մայիսին, դրամի դնողական արժէքին անկման հետեւանքով՝ Շուշանեան կը լքէ աշխատանքը եւ կը դառնայ թափառաւոր: Յուլիսին, տարեկից ընկերոջ մը հետ կ'երթայ Մուսուլիէ, պատական շինարարութիւններու ապաստարանութեան մէջ աշխատելու: Հունիսի եւ կալի ամիսները կ'անցընէ արաբախօս քրտական զինուորի մը՝ Քեֆէր-Լազիւրի մէջ: Հոկտեմբերին կը վերադառնայ Հալէպ, ուր շարքայի շարունակ թափառական կեանք մը վարելէ ետք, կը սկսի աշխատիլ որբանոցի խոհանոցին մէջ: Հոկտեմբերին կը դառնայ քարակոփ, յետոյ՝ բեռնակիր, Եւփրիէի պետական արհեստանոցին մէջ:

1918ի Յունուարին, ընկերոջ մը հետ դարձեալ, ճամբայ կ'ելլէ դէպի Բիւրս, Ալեքսանդ, Մարաշ, ուսպ կը վերադառնայ Բիւրս եւ կ'աշխատի իրրեւ քար կոտրող: Յուլիսին կը դառնայ սայլապան, Քեֆէր-Ալթունի մէջ, հայ կապալաւորի մը մօտ: Հոկտեմբերին կը վերադառնայ աքսորէն, նոյեմբերին կը հասնի Պոլիս, յետոյ՝ Ռոտտսթո, ուր ձմեռը կ'անցընէ ախուր ու լքուած:

1919ի Մայիսին կրկին կը մեկնի Պոլիս, մօր կողմէ մեծ մօրը տունը, ուրկէ փախուտ կու տայ եւ կրկին կը վերադառնայ որբանոց: Սեպտեմբերին Շուշանեան իրրեւ ուսանող կը մտնէ Արմաշի նորարաց երկրագործական վարժարանը: Այս օրերուն, ինչպէս իր դասընկերու-

րուն, Վազգէնի հոգին եւս կ'աշխուհի Հ. Յ. Դաշնակցութեան ազատատենչ գաղափարներով, որոնք կը կազմաւորեն նաեւ այս կտրիճ հայուն նկարագիրը:

1920ի Ապրիլին, քեմալական շարժումին հետեւանքով, Արմաշի երկրագործական վարժարանը կը փոխադրուի Պոլիս, եւ նոյն տարուան Սեպտեմբերի վերջերք, նոյն կազմով, Շուշանեան եւ իր ընկերները ճամբայ կ'ելլեն դէպի Հայաստան: 13 Հոկտեմբերին խումբը կը հասնի Երեւան՝ ինքնուրուշ, Սինոպ, Սամսոն, Օրտու, Կերասոն, Տրապիզոն, Բաթում, Թիֆլիս, Սանահին եւ Ալեքսանդրապոլ հանդիպելէ ետք:

Վազգէն Շուշանեան եւ իր ընկերներէն շուրջ 30 տղաք, համաձայն տրուած հրահանգին, կը ըծուին գինուորական ծառայութեան՝ ճակատ մեկնած գինուորները փոխարինելու գիտակցութեամբ:

Կենաց-մահու այդ դժուարին օրերուն, կառավարութիւնը իր ամենաուղի միջոցները կը տրամադրէ Երկրագործական դպրոցին եւ գիւղատնտեսական նախարարութեան որոշումով, հայ-թրքական պատերազմի աւարտէն ետք, 23 նոյեմբերին դարձեալ ճամբայ կ'ելլեն դէպի նոր Բայազետ՝ Երկրագործական վարժարանը հոն հաստատելու նպատակով:

21 Յունուար 1921ին, ուսանողներուն խումբը անգամ մը եւս կը մեկնի նոր Բայազետ: 23ին, Վազգէն եւ իր ընկերները կը հասնին Դիլիշան, ուր խմբովին կ'արգելափակուին, իշխանութիւնը նոր ըստանձնած հայ համայնավար պատասխանատուներու որոշումով: Բանտէն ազատելէ ետք, 5 Փետրուարին կը մեկնին Մեծ Դարաքիլիսէ: Ապրիլի 6ին կը յաջողին անցնել Թիֆլիս, 15ին՝ Բաթում, իսկ Մայիս 21ին՝ Պոլիս, Երկրագործական վարժարանի իր քանի մը ընկերներուն հետ:

22 Յուլիս 1921ին, Պոլսոյ հայ գիւղատնտեսական միութեան կողմէ պատանի Վազգէն կ'ընտրուի իրրեւ ուսանող՝ Լիպսեալ Նահանգներ զրկուելու համար: Ժամբողութիւնը կը յետաձգուի աւելորդ հիւանդութեան պատճառով եւ տարի մը

կը մնայ Պոյսճը դիւղի ամերիկեան դարձանատունը: Յաջորդ տարուան Յունիսին կը յաջողի մեկնել Նիւ Եորք:

1922ի Օգոստոսին, յուսահատ կը վերադառնայ Թուրքիա՝ Իզմիր: Քեմալականներու մուտքին կը յաջողէ քաղաքին հրկիզումը եւ ինք հարկադրաբար կ'ուղղուի դէպի Պոլիս:

11 Նոյեմբեր 1922ին դարձեալ կը վերցնէ պանդխտութեան ցուպը եւ այս անգամ կ'ուղղուի դէպի Ֆրանսա: Կը հասնի Մարսէյ, ուր հազիւ երկու շաբաթ մնացած՝ կ'անցնի Փարիզ, 30 Նոյեմբերին, եւ ուր կը սկսի ապրել անընկալ թափառաշրջիկի պարտադիր կեանքը՝ յանուն կտոր մը հացի եւ լոյսի:

Ֆրանսա ուր դրած առաջին օրէն մինչեւ 1930, Շուշանեան կ'ապրի դժուարին կեանք մը, կը դառնայ բանուոր «Բընօ»ի գործադատին եւ Մոնրուէի մետաղագործարանին մէջ, ուսանող՝ Վալապրի երկրագործական վարժարանի եւ Սորպոնի դրասեղաններուն առջեւ, ճառագայթուն դէմք՝ Հ. Յ. Դաշնակցութեան զանազան մարմիններու եւ ժողովներու մէջ, ու տակաւին՝ գրագէտ, հրապարակագիր, հասարակական գործիչ:

1923ին, Վալապրի երկրագործական վարժարանի ուսանող եղած առեւ, Շուշանեան մաս կը կազմէ Հ. Յ. Դաշնակցութեան շրջանային կոմիտէներուն եւ կեդր. կոմիտէներուն՝ միաժամանակ աչխատակցելով բազմաթիւ թերթերու եւ զրական պարբերաթիւթերու:

Երկրագործական վարժարանի ընթացքը կ'աւարտէ 1926ին:

Վալապրէն ետք, կ'անցնի Կրօնուպլ եւ կը յաճախէ Մարմիրոյի կաթնասնտեսական վարժարան, որուն շրջանը կ'աւարտէ 1927ին: Ապա՝ կը հետեւի Սորպոնի Ընկերային բարձրագոյն ուսմանց վարժարանի դասընթացներուն, մինչեւ 25 Յունուար 1930:

1932ին, կուսակցական ներքին պայքարի մը հետեւանքով, ուրիշ շորս ընկերներու հետ, Շուշանեան կ'արտաքսուի Հ. Յ. Դաշնակցութեան շարքերէն, եւ խումբ մը համախոհներու հետ կը հիմնէ

Մարտկոցական շարժումը եւ կը մասնակցի անոր զապախարները տարածելու կոչւած «Մարտկոց»ի խմբագրական աշխատանքներուն՝ ստորագրելով նաեւ յոդաածներ: Երբ Վ. Շուշանեանի, Լ. Մոզեսի եւ Ա. Արոյեանի համար յստակ կը դառնայ, որ մութ ձեռքեր սպրդած են շարժումին մէջ՝ զայն իր բուն նպատակէն շեղելու համար, կը հրապարակեն շարժումէն իրենց հրաժարումը յայտարարող եւ դաւադրութիւնը մերկացնող հանրայայտ շրջաբերականը:

1 Հոկտեմբեր 1933էն մինչեւ 1 Հոկտ. 1935, Շուշանեան կը պաշտօնավարէ Նըմուրի (Սեն է Մարն) Փրանսական բարձրագոյն վարժարանին մէջ՝ իբրեւ զինքնօթիկ ընդհանուր հսկիչ:

1935ին, զպրոցին հետ կը փոխադրուի Թուան եւ կը դառնայ յիշեալ հաստատութեան տնօրէնութեան քարտուղար, մատակարար եւ ներքին կարգապահութեան պատասխանատու: Առաջին Աշխարհամարտի ահաւոր պայմաններուն մէջ, Շուշանեան առանձին կը վարէ զպրոցը եւ կը ստանձնէ իրեն վստահուած աշակերտներուն ճակատագրին ամբողջական պատասխանատուութիւնը: Կը առիւթի զպրոցը փոխադրել Սէնթ-Օպէն-Էփինէ, ուր կը մնայ մինչեւ 8 Յունիս 1940:

Այդ օրերուն, անտեսելով զերման ներխուժողներու թնդանօթներուն տարածած մահուան սարսափն ու արեան ծովերը, հակառակ անձրեւին ու քուքին, Շուշանեան հետիոտն կը կատարէ երկար ու դժուարին ճամբորդութիւններ եւ իր հոգածութեան վստահուած աշակերտներէն մէկն աւ մէկ կը հասցնէ իրենց ծնողներուն: Առողջութիւնը կը քայքայուի եւ թոքատապը բոյն կը հաստատէ իր մարմնին մէջ:

Առողջութիւնը հետզհետէ աւելի կը վատթարանայ եւ Փրանսական խուլ հիւանդանոցի մը մէջ, 2 Յունիս 1941ին, ան կ'աւանդէ հոգին՝ իր ետին մզելով գրական-հրապարակագրական հարստութեան եւ պահպանութեան ու նուիրումի պայծառագոյն աւանդներէն մէկը:

ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՑՈՒՑԱԿԸ

(«ՀԱՅՐԵՆԻՔ» ԱՄՍԱԳԻՐ, ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ, 1943)

Հետևեալը վազգէն Շաշումեանի գրական աշխատանքներու (հրատա-
րակուած քէ ճեռագիր) ցուցակն է, զոր իմ անձամբ կազմած է: Յուշակիմ
մէջ գրուած է ճաշի, քէ իր գործերը յորոնց մօտ աւանդ թողած է:

ՄԻԽԻԱՐԵԱՆՑ ՄՕՏ, ՎԻԵՆՆԱ, ԱԿԱՆԻ ԶԳՈՒԱԾ
ՏՊԱԳՐԵԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Կազմուած գիրք մը «Հայրենիք» ամսագրի աշխատակցութիւնս
պարունակող

- Ա) Սիրոյ եւ արկածի տղաքը
- Բ) Բանաստեղծութիւնք
- Գ) Առաջին սէրը
- Դ) Գորշ օրեր
- Ե) Սիրոյ եւ մեղքի պարտեզը
- Զ) Ցայգիքը
- Է) Մանուան առաջատը

2. Կազմուած Օրերը գեղեցիկ չեն
3. Կազմուած Ամբաս գիշերներ ու գարնանային
4. Կազմուած Մեմֆի Ա. եւ Բ. Քիւրթը խմբագրուած իմ կողմէ
- 5-6. Երկու ծրարներ, որ կը պարունակեն.

1. Հիմ երգի կտոր մըն էր...
2. Մարտկոցի ամբողջ աշխատակցութիւնս
3. Ամբասնոց Վլյա ինձ քաւական է
4. Մեր գիւղաբազմէն յիշատակ մը
5. Սիրոյ եւ մեղքի պարտեզը (Սիւտեիկի «Ալիք»էն)
6. Կաշխատեմ օտար ափերու վրայ

7. Ծրար մը. — 1. «Իրօշակ»ի եւ «Նաւասարդ»ի աշխատակցութիւն
2. Մարմին մեղապարտ
3. «Մշակոյթ»ի աշխատակցութիւնս
4. «Ազդարար»ի աշխատակցութիւնս

8. «Հայրենիք», «Յառաջ», «Յուսարբեր», «Ազդակ» եւ ուրիշ
9. Կուսակցական քերթերու աշխատակցութիւնս
10. Ամբաս գիշերներ (Եգիպտոսի «Յուսարբեր»էն)
11. Անձնական քղքեր
12. Լուսանկարներ
13. Տպուած «Հայրենիք» ամսագրի մէջ «Դառն հացը»

**Ձեռնարկ, ԲԵՐԱԿԱՆ ՄԱՍԱՄԱՐ ԱՆՏԻՊ ԿԱՄ ՎԵՐԱՄԵՆԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Ա. ՄԻՆԵՐԱՆԵՍ ՄՕՑ

Բանաստեղծական	1.	Երկիր յիշատակաց	Տէկ տեսք	60 էջ
Արձակ էջեր	2.	Խառնիխուռն	Տէկ տեսք	232 էջ
Արձակ էջեր	3.	Արծաթեայ գիշեր	Տէկ տեսք	47 էջ
Արձակ էջեր	4.	Ներքին դաշտամկար	I	
Սրճակ էջեր	5.		II	Տէկ տեսք 272 էջ
Արձակ էջեր	6.	Քրոնիկան Բնարակամ	Տէկ տեսք	188 էջ
Արձակ էջեր	7.	Թիրուցամ էջեր	Տէկ տեսք	116 էջ
Արձակ էջեր	8.	Օրագիր	I	Տէկ տեսք 192 էջ
Արձակ էջեր	9.		II	Տէկ տեսք 144 էջ
Վիպական	10.	Զուգ Մամկունիի սերերը	Տէկ տեսք	80 էջ
Վիպական	11.	Հաշտե յարգարբ	Տէկ տեսք	50 էջ
Վիպական	12.	Բաժանանդին կիճը	Տէկ տեսք	100 էջ
Վիպական	13.	Տենդեր	I	Տէկ տեսք
Վիպական	14.		II	Տէկ տեսք
Վիպական	15.		III	Տէկ տեսք 390 էջ
Վիպական	16.	Հեթակ Վարսենիկ	Տէկ տեսք	192 էջ
Փոքիկ	17.	Ակեղած տարիներ	I	Տէկ տեսք 192 էջ
Փոքիկ	18.	(անտառատ)	II	Տէկ տեսք 200 էջ
Փոքիկ	19.	Մարդ մը, որ Արարատ չունի իր հագուստ խորը	Տէկ տեսք	144 էջ

Բ. ՀԱՄԱՍՏԵՂԻ ՄՕՑ — Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ(*)

Վիպական	20.	Ծրիմ պատմաբան	I	Տէկ տեսք 96 էջ
Վիպական	21.		II	Տէկ տեսք 98 էջ
Արձակ էջեր	22.	Օրագիր	IV	Տէկ տեսք 98 էջ

Գ. ԱՌԱՅԺՄ ԻՅ ՄՕՑՄ

Բանաստեղծական	23.	Օրերու և աստղեր Ա. Հեղինակներ Բ. Առաջին ծիլեր	Տէկ տեսք	345 էջ
Արձակ էջեր	24.	Օրագիր	III	Տէկ տեսք 144 էջ
Վիպական	25.	Զուգ Մամկունիի սերերը (պատմական)	Տէկ տեսք	80 էջ
Բարդմանություն	26.	Երկրային անունները Ջեդրէա Ժիրաթ (անտառատ) Փիլիպ Ի-Պ-Պ		

11 Մայիս, 1940
Ալեք. Շախմատյան

(*) Համաստեղի մօտ եղած Վ. Շախմատյանի բարդ ծնագրերը «Հայրենիք» ամսագրի մէջ հրատարակուեցան, առաջին երկուքը՝ «Ուղեւորներ» Թրա-կացի ստորագրութեամբ:

Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Ա Ջ Դ

«ԲԱԴԻՆ»ի բաժանորդագրության պայմանները կը մնան անփոփոխ,
ինչպէս մեր առաջին թիւով փոխանցած էինք՝ յատուկ թղթիկով:

Մեր ներկայացուցիչներէն եւ արտասահմանի բաժանորդներէն կը
խնդրենք նկատի ունենալ այս պարագան:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՄԻ ԱՂՋԻԿ ՈՒ ԱՐՆԻ — ՎԷՊ —

Լուսիկ, Նիւ Եորք, 1982, «Ոսկետառ» հրատարակչատուն:

ՅՈՎԱԿԻՄԻ ԹՈՌՆՈՐԴԻՆԵՐԸ — ՎԷՊ —

Յակոբ Յ. Ասատուրեան, Պէյրուք, 1982, «Թեֆնոփրես» հրատարակչատուն:

ԱՐԱՄ ՊԷԿ ԶՈԼԱԳԵԱՆ — ԿԵՆԴԱՄԱԳԻՐ —

Արամ Շորվոզեան, Պէյրուք, 1980, «Սեւան» հրատարակչատուն:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

SYLVIA AGÉMIAN

**Manuscrits arméniens illustrés
dans les collections de Roumanie**

Հրատարակութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսա-
րեան, Պուքրէշ, 1982, «Մերիտիան» հրատարակչատուն:

ՀԻՔԱՆԱՆ

Հատավաճառ 12 ի. ռ.
Տարեկան բաժնեգիրն 125 ի. ռ.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Ս. ռ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգիրն 40 Ամերիկեան տոլար

بَاكِين
مجلة شهرية ، أدبية وفنية علمية
المدير المسؤول
السيد ارين كارنيك قرانجيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
•
ԲԱԿԻՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ
Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ
Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՐՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՆՈՍԵԱՆ
Վարչական պատասխանատու
ՎԱՀԷ ԲՐՈՒՏԵԱՆ
B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898